ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ՆՈՒՆԵ ԱՂԱՍԻՆԻ

Զբոսաշրջության տարածքային զարգացման հիմնախնդիրները (ՀՀ մարզերի օրինակով)

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը.00.02. -«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝

դոցենտ

Տնտեսագիտության դոկտոր,

Ռուբեն Արմենի Հայրապետյան

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 10

1.1. Տարածքային զարգացման էությունը և նշանակությունը 10

1.2. Զբոսաշրջության դերը տարածքային զարգացման համակարգում 21

1.3. Զբոսաշրջության տարածքային զարգացման համաշխարհային փորձը.. 35

ԳԼՈՒԽ 2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 50

2.1. Զբոսաշրջության արդի վիճակը ՀՀ-ում 50

2.2. Զբոսաշրջության տարածքային զարգացման հիմնախնդիրները ՀՀ մարզերում 72

2.3. Զբոսաշրջությունը որպես ՀՀ տարածքային զարգացման էական գործոն 89

ԳԼՈՒԽ 3. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ում 110

3.1. Տարածքային զարգացման ապահովումը զբոսաշրջային կլաստերների կիրառմամբ 110

3.2 Զբոսաշրջության տարածքային զարգացման արդի գերակայությունները ՀՀ-ում 127

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 144

……
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ …… 148
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
…….…… 157

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Աշխարհի միասնականության և փոխկապվածության խորացման պայմաններում առանձնակի կարևորություն է ստանում տարածքային զբոսաշրջության խթանումը: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հարուստ բնաշխարհը, բնակլիմայական պայմանները, ինչպես նաև հարուստ պատմամշակութային ժառանգությունը՝ կարելի է փաստել, որ մեր հանրապետությունը զբոսաշրջության ոլորտի զարգացման մեծ ներուժ ունի, ինչը մեծապես կարող է նպաստել տարածքների զարգացմանը:

ՀՀ տնտեսական զարգացման ժամանակակից կարևորագույն հիմնախնդիրը ՀՀ մարզերի անհամաչափ զարգացումն է, ցայտուն դրսևորվող տարածքային սոցիալ-տնտեսական անհամաչափությունը: Օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք պատճառներով պայմանավորված՝ տարածքային սոցիալ-տնտեսական անհամաչափությունը դրսևորվել է Հայաստանում դեռևս խորհրդային տարիներին, երբ գործող վարչատարածքային բաժանման համակարգում իրականացվում էր ազգային եկամուտի՝ իր մասշտաբներով նախադեպը չունեցող վերաբաշխում: Միջինից բարձր զարգացման մակարդակ ունեցող տարածաշրջաններն առավել բարենպաստ պայմաններում էին հայտնվում: Փաստորեն տեղի էր ունենում ենթակառուցվածքների և արտադրական ներուժի կուտակում որոշ տարածաշրջաններում: Այդ ենթակառուցվածքները, ինչպես նաև վերարտադրության տարածքային ցիկլերը, տարածաշրջանային տնտեսության դիվերսիֆիկացման տարբեր մակարդակները այն հիմնական պատճառներն էին, որոնցով պայմանավորված էր տարածքային անհամաչափության երևույթը ԽՍՀՄ-ում, այդ թվում՝ խորհրդային Հայաստանում: Տարածքային սոցիալ-տնտեսական անհամաչափությունն այս կամ այն չափով առկա է աշխարհի բոլոր երկրներում, սակայն առավել ցայտուն դրսևորվում է անցումային շրջանում գտնվող և զարգացող երկրներում: Թերևս հենց սա է պատճառներից մեկը, որ առանձին պետություններ ավելի շատ ջանքեր են ուղղում զբոսաշրջության տարածքային զարգացման

համար առավել բարենպաստ պայմանների ապահովմանը: Բազմաթիվ երկրների համար զբոսաշրջությունը արտարժույթի ներհոսքի առաջնային աղբյուր է, որը նաև խթանում է այդ երկրներին հատուկ որոշ արտադրությունների, ինչպես նաև տնտեսության այլ ճյուղերի, այդ թվում՝ շինարարության, առևտրի, գյուղատնտեսության, կապի, թեթև արդյունաբերության զարգացումը: Լինելով առավելապես աշխատատար՝ զբոսաշրջությունը նպաստում է նաև գործազրկության նվազեցմանն ու աղքատության հաղթահարմանը: Համաշխարհային տնտեսության ժամանակակից զարգացումների և հատկապես տնտեսությունների փոխկապվածության համատեքստում առավել զարգացած երկրների տնտեսությունների առաջատար ճյուղերից մեկը դարձել է ծառայությունների ու սպասարկման ոլորտը: Որոշ տարածքներ հարուստ են բնական ռեսուրսներով, մյուսները նպաստավոր են գյուղատնտեսական առանձին մշակաբույսերի աճեցման կամ էլ զբոսաշրջության համար, այլ տարածքներ էլ պարզապես մոտ են գտնվում երկրի մայրաքաղաքին կամ տնտեսական այլ կենտրոններին, ինչն էլ պայմանավորում է դրանց ներդումային գրավչությունը՝ այդ կենտրոններից հեռու տեղակայված տարածքային տնտեսությունների համեմատությամբ և առաջինների զարգացման կարևոր մրցակցային առավելությունն է: Տարածքային տնտեսության չափազանց կարևոր հատկանիշը դրա անմիջական կապն է տարածքի բնակչության հետ: Տարածքային կառավարման մարմիններն էական պատասխանատվություն են կրում բնակչության կենսամակարդակի համար և ենթակա են ներքևից եկող ճնշումների: Այդ է պատճառը, որ սոցիալական գործոնը կարևոր դեր է խաղում տարածքային տնտեսության զարգացման ռազմավարության ընտրության և կառավարման գործընթացներում: Հատկանշական է այն, որ ի հավելումն վերը նշված յուրահատկություններով պայմանավորված բարդությունների, տարածքային տնտեսությունների զարգացման, արդյունավետ կառավարման քաղաքականության մշակման և կենսագործման խնդիրներն առավել ցայտուն կերպով են դրսևորվում անցումային տնտեսության պայմաններում, երբ տարածքային տնտեսությունների կառավարման

ինստիտուցիոնալ դաշտն աչքի է ընկնում թերզարգացածությամբ և անհամարժեքությամբ: Այս բնորոշումը ամբողջությամբ կիրառելի է ՀՀ համար: Այս բոլոր և մի շարք այլ բացթողումների առկայության պայմաններում տարածքային տնտեսությունների զարգացման և կառավարման ոլորտում ի հայտ են եկել բազմաթիվ հիմնահարցեր, որոնց շարքում առաջին հերթին հարկ է նշել ՀՀ-ում տարածքային զարգացման խիստ անհամաչափությունը, տարածքային տնտեսությունների զարգացման ներուժային հնարավորությունների ոչ արդյունավետ օգտագործումը, տարածքային տնտեսությունների ներքին ու արտաքին մրցունակության բարձրացման անհրաժեշտությունը և այլն: Այս առումով կարևոր նշանակություն ունեցող խնդիր է տարածքային տնտեսությունների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ընդհանրական գնահատումը, ըստ որում գնահատումներում անհրաժեշտ է օգտագործել ոչ թե մեկ-երկու հիմնական ցուցանիշ, այլ՝ տարածքային տնտեսության զարգացման առանձին ուղղությունները նկարագրող այնպիսի ցուցանիշների համակարգ, որոնք միմյանց հետ կապված կլինեն գրեթե մաթեմատիկական ճշգրտությամբ՝ հաշվի առնելով արդյունքային գնահատումների համատեքստում դրանցից յուրաքանչյուրի հարաբերական կարևորությունը: Ակնհայտ է, որ ներկայումս ՀՀ տնտեսության զարգացման հեռանկարային ուղղություններից մեկը դարձել է զբոսաշրջությունը, և արդեն որոշ քայլեր կատարվել են այդ ուղղությամբ: Սակայն անհրաժեշտ է կատարել տվյալ ոլորտի զարգացման ուղղությունների բացահայտման համակողմանի վերլուծություն, ծագած հիմնախնդիրների լուծման նպատակամետև արդյունավետ մոտեցումների մշակում և իրականացում, ինչից մեծապես կախված է հանրապետության տնտեսական, սոցիալական և մշակութային հետագա վերելքը: ՀՀ-ում զբոսաշրջության տարածքային զարգացման և տարածքային տնտեսությունների կառավարման բարելավման հիմնահարցերին նվիրված ուսումնասիրություններ կատարվել են ինչպես հայազգի, այնպես էլ՝ արտասահմանյան հեղինակների կողմից: Սակայն զբոսաշրջության տարածքային զարգացման մակարդակի

համակողմանի գնահատման, մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում նոր գործիքների ու մեխանիզմների ներդրման խնդիրները դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն: Չնայած առկա տեսակետներին և տրված լուծումներին՝ հանրապետությունում զբոսաշրջության տարածքային զարգացման տեսական ու գործնական ոչ բոլոր հիմնախնդիրներն են լուծում ստացել, ուստի դրանք շարունակում են հրատապ մնալ: Այս հետազոտությունը նվիրված է վերոնշյալ խնդիրների համակողմանի հետազոտմանն ու համապատասխան լուծումների մշակմանը, ինչն էլ պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության տարածքային զարգացման հիմնախնդիրների բացահայտումն է և դրանց լուծման ուղղությունների մշակումն է:

Նշված նպատակի իրականացման համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տարածքային տնտեսությունների զարգացման և կառավարման առանձնահատկությունները,
- բացահայտել զբոսաշրջության դերը տարածքային զարգացման համակարգում,
- ընդհանրացնել և գնահատել տարածքային տնտեսությունների կառավարման միջազգային, նաև՝ հայրենական փորձը, վերհանել այդ ոլորտում ներկայումս առկա միտումները, ուսումնասիրել զբոսաշրջության տարածքային զարգացման համաշխարհային փորձը,
- դիտարկել տարածքային տնտեսական քաղաքականության հիմնական գործիքները, վերլուծել ՀՀ զբոսաշրջության ոլորտի արդի վիճակը և բացահայտել առկա հիմնախնդիրները՝ շեշտադրելով հատկապես տարածքային /մարզերի/ տնտեսության հետազոտությունը,
- բացահայտել տարածքային զարգացման հնարավորությունները զբոսաշրջային կլաստերների մոտեցման կիրառմամբ և

մատնանշել պետական աջակցության արդյունավետ ձևերն ու մեխանիզմները,

- համակողմանիորեն գնահատել ՀՀ մարզային տնտեսությունների զարգացման մակարդակը, հետազոտել մարզերի տնտեսության զարգացման հեռանկարային ուղղությունները, ուսումնասիրել տեղերում առկա հիմնախնդիրները, ներկայացնել զբոսաշրջության միջոցով դրանց լուծմանը նպատակաուղղված հայեցակարգային և ռազմավարական բնույթի առաջարկություններ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը տարածքային տնտեսական համակարգերն են, մասնավորապես ՀՀ մարզերը և դրանց տնտեսությունները՝ համապատասխան զբոսաշրջային ներուժով:

Հետազոտության առարկան զբոսաշրջության տարածքային զարգացման հիմնախնդիրներն են, որոնք ներկայումս առկա են ՀՀ-ում, ինչպես նաև դրանց լուծման ուղիները:

Հետազոտության տեսամեթոդական հիմքը և տեղեկատվության ապահովումը: Ատենախոսության համար տեսական, մեթոդաբանական ելակետ են ծառայել հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատությունները, ինչպես նաև ոլորտը կարգավորող օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, հայեցակարգային բնույթի նյութերը, Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության տեղեկատվական և վերլուծական նյութերը, Համաշխարհային ճանապարհորդությունների և զբոսաշրջության խորհրդի (World travel and Tourism council) զեկույցները, ՀՀ ԱՎԾ և Համաշխարհային բանկի հրապարակումները և վիճակագրական տվյալները: Հետազոտության նպատակին և խնդիրներին համապատասխան կիրառվել են գիտական ճանաչողության վերացարկման, համակարգային դինամիկ վերլուծությունների վիճակագրական ու ծրագրանպատակային մեթոդներ: Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծության և համադրության (սինթեզի) կառուցվածքային, ինչպես նաև՝ համակարգային վերլուծության մեթոդները:

Հետազոտության գիտական արդյունքները և նորույթը: Իրականացված ուսումնասիրությունների և վերլուծության ընթացքում ստացվել են գիտական նորույթ պարունակող հետևյալ արդյունքները.

- ՀՀ զբոսաշրջության ոլորտի ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև հնարավորությունների և սպառնալիքների (SWOT) վերլուծությամբ առանձնացվել են այն հիմնական գործոնները, որոնք կարող են նկատելիորեն նպաստել կամ խոչընդոտել տարածքային զարգացման հիմնախնդիրների հաղթահարմանը՝ զբոսաշրջության ոլորտի մրցունակության բարձրացման միջոցով:
- ՀՀ մարզերի տնտեսական և սոցիալական զարգացումը պայմանավորող մասնակի ցուցանիշների համախմբությունների ներառմամբ կառուցվել են մարզային տնտեսական և սոցիալական զարգացման ընդհանրական համաթվեր (գնահատման չափանիշներ), որոնց հիման վրա ռեյտինգային համակարգով գնահատվել են ՀՀ մարզերի տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակները, տնտեսական և սոցիալական զարգացման անհամամասնությունները ՀՀ մարզերում, հետազոտվել են դրանց շարժընթացն ու միտումները, ինչպես նաև գնահատվել է տնտեսական գործունեության առանձին ուղղություններում ՀՀ մարզային տնտեսությունների մասնագիտացման մակարդակը:
- Զբոսաշրջության ոլորտը դիտարկելով որպես մարզերի տնտեսության զարգացման հեռանկարային ուղղություն՝ հիմնավորվել է զբոսաշրջային կլաստերի ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը, վերհանվել են այդ ուղղությամբ առկա խոչընդոտները, մշակվել են դրանց հաղթահարմանը և մարզերում զբոսաշրջային կլաստերի ձևավորմանն ու զարգացմանը նպատակաուղղված քաղաքականության հիմնադրույթները:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ՀՀ-ում

զբոսաշրջության տարածքային զարգացման, ինչպես նաև տարածքային տնտեսության բնագավառում առկա հիմնախնդիրների լուծման հիմնավորված մոտեցումների մշակման համար:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ ստացված արդյունքները կարող են կիրառվել զբոսաշրջության ոլորտում ներդրումների խթանումը կարգավորող կառավարման մարմինների, ոլորտի հասարակական և միջազգային կազմակերպությունների և տնտեսավարող սուբյեկտների կողմից՝ զբոսաշրջության քաղաքականության, հայեցակարգերի, ռազմավարական ծրագրերի մշակման և կառավարման արդյունավետ մեթոդների կիրառման նպատակով: Հետազոտության արդյունքները կարող են ներառվել ոլորտին վերաբերող բուհական կրթական ծրագրերի ուսումնական նյութերում:

Ատենախոսությունում ստացված գիտական արդյունքները, արված առաջարկություններն ու եզրակացությունները կարող են օգտակար լինել ՀՀ մարզերի տնտեսական զարգացման ներուժային հնարավորությունների բացահայտման և կառավարման համարժեք գործիքների ու մեթոդների ընտրության և կիրառման, ՀՀ տարածքային զարգացման քաղաքականության նպատակայնության ու արդյունավետության բարձրացման, մարզային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մեթոդական և բովանդակային կատարելագործման խնդիրների լուծման նպատակով: Ատենախոսության տեսամեթոդական և գործնական որոշ արդյունքներ կարող են օգտակար լինել նաև տարածքային տնտեսությունների զարգացման և կառավարման հիմնահարցերով զբաղվող մասնագետների ու հետազոտողների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության դրույթները քննարկվել են 2015թ. (Միջդիսցիպլինար վերլուծության և քաղաքականությունը տարածաշրջանային կայունության շրջանակներում) “Interdisciplinary analysis and Policies for regional Sustainability” RSAI միջազգային ամառային դպրոցում, 2016թ., “Regional Development in Western Asia, Regional Science Perspective” գիտաժողովում, «Գիտելիք, նորաստեղծություն և

զարգացում» խորագրով ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովում, 2015 թ. “Международная заочная научно-практическая конференция “Современная наука: тенденции развития” Краснодар, 2014:

Կատարված հետազոտության արդյունքները հրապարակվել են 9 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի ծավալը 156 էջ է՝ առանց հավելվածների:

ԳԼՈՒԽ1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Տարածքային զարգացման էությունը և նշանակությունը

Գիտական և գործնական գրականության մեջ տարածքը (ռեգիոնը) բնորոշվում է որպես մարզ, շրջան, որն այլ տարածաշրջաններից առանձնանում է բնականորեն կամ պատմականորեն ձևավորված, հարաբերականորեն կայուն տնտեսական, աշխարհագրական, բնակլիմայական, ազգային-մշակութային և պատմական առանձնահատկությունների ամբողջությամբ: Շատ երկրներում նման բնորոշմանը կարելի է ավելացնել նաև նշված տարածքում ապրող բնակչության ազգային կազմի առանձնահատկությունները[1]: Տարածքային տնտեսությունը, ի տարբերություն ազգային տնտեսության, օժտված է մի շարք յուրահատկություններով[2]:

Կարևորագույն յուրահատկությունը տարածքային տնտեսության որոշակի հատվածայնությունն է կամ տարածքային անհամաչափ զարգացումը[3]: Տարածքային տնտեսության հաջորդ յուրահատկությունը բխում է կառավարման կենտրոնական և տեղական մակարդակների միջև դրադրոշակի միջանկյալ տեղադիրքի առանձնահատկություններից: Որոշ տեսաբաններ տարածքային տնտեսության յուրահատուկություններից նշում են բնական-աշխարհագրական գործոնի հետվերջինիս սերտ կապը[4]: Տարածքային տնտեսություններում առանցքային դերակատարում ունեն ռեսուրսների առկայությունը, բնակլիմայական պայմանները, հողի որակը, տեղադիրքը: Որոշ տարածքներ հարուստ են բնական ռեսուրսներով, այլ տարածքներ նպաստավոր են զբոսաշրջության համար կամ էլ գյուղատնտեսական առանձին մշակաբույսերի աճեցման, որոշ տարածքներ էլ պարզապես մոտ են գտնվում երկրի

---

[1] Սուվարյան Յու.Մ., Չոբանյան Մ.Խ. Տնտեսության տարածքային կառավարում. մեթոդաբանությունը և հիմնախնդիրները.- Եր.: ԱՌՏ, 2007, էջ 37:

[2] Joseph S. Chen Validating a Tourism development Tourism Management, 22. 2001, pp. 363-367

[3] Casey J. Dawkins “Regional Development Theory” Conceptual Foundations, Classic Works, and recent developments:, Nov. 21, 2014, pp. 14-18

[4] Սուվարյան Յու.Մ., Չոբանյան Մ.Խ. Տնտեսության տարածքային կառավարում. մեթոդաբանությունը և հիմնախնդիրները.- Եր.: ԱՌՏ, 2007, էջ 37:

մայրաքաղաքին կամ տնտեսական այլ կենտրոններին, ինչն էլ պայմանավորում է դրանց ներդումային գրավչությունը[5]:

Առավել ընդհանուր մոտեցմամբ, տարածքային տնտեսությունը (տարածքի տնտեսություն) որոշակի տարածքային-տնտեսական համալիր է, որը ներառում է ձեռնարկությունների, կազմակերպությունների, տնային տնտեսությունների, ինչպես նաև դրանց կենսագործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների որոշակի փոխկապակցված համախումբ[6]: Ըստ որում, այստեղ անհրաժեշտ է հատուկ ընդգծել տարածքային տնտեսության համալիր բնույթը, այսինքն՝ որոշակի տնտեսական համակարգ կազմավորող տնտեսական սուբյեկտների փոխկապվածությունը, այլ ոչ թե պարզապես որոշակի տարածքի շրջանակում դրանց առկայությունը: Հատկանշական է, որ տարածքային տնտեսությունների զարգացման, արդյունավետ կառավարման քաղաքականության մշակման և կենսագործման խնդիրներն առավել ցայտուն կերպով դրսևորվում են անցումային տնտեսության պայմաններում: Տարածքային տնտեսությունների կառավարման մոտեցումներում գերակայում են արդեն ավանդական դարձած սկզբունքները, որոնց իմաստն ու տրամաբանությունը հանգում է լուծման ուղիների բացահայտմանը: Մինչդեռ տարածքային տնտեսությունների զարգացման լավագույն միջազգային փորձը վկայում է, որ այստեղ անհրաժեշտ է քաղաքականության նպատակների հստակ աստիճանակարգում՝ նաև ըստ ժամանակային գործոնի ու քաղաքականության լիարժեք գործիքակազմի կիրառում[7]:

Տարածքային տնտեսության ուսումնասիրության մեթոդաբանական հիմքն են տարածքների զարգացումը հետազոտող տեսությունները և հայեցակարգերը[8]: Չնայած այն բանին, որ տարածքային տնտեսագիտությունը համեմատաբար նոր գիտություն է, սակայն դրա շրջանակներում արդեն իսկ մշակվել են մեծ թվով

---

[5] Joseph S. Chen Validating a Tourism development Tourism Management, 22. 2001. pp. 363-367

[6] Todt Horst “Tourism and Economic development in mountain regions an economic assessment” Germany, Hamburg. - P. 858-860

[7] Дергачев В.А., Вардомский Л.Б. Регионовидение: учебник пособие для студентов вузов. – М.: Юнити-дана, 2004. – С. 32-39;

[8] “Региональная экономика”, Учебник под ред. В.И.Видяпина, М.В.Степанова. – М.; ИНФРА-М, 2002. сс.8-12

տեսություններ, մեթոդներ և մոդելներ, որոնք ապահովում են տարածքային տնտեսությունների զարգացման համակողմանի հետազոտման տեսական և մեթոդաբանական գործիքակազմ: ՀՀ տարածքների համաչափ զարգացումը ենթադրում է քաղաքների և մարզերի, ինչպես նաև՝ մարզերի միջև առկա կենսամակարդակների տարբերությունների նվազեցումը և մարզերի զարգացման տեմպերի մոտեցումը Երևան քաղաքի զարգացման տեմպերին[9]:

Տարածքային տնտեսությունների զարգացման հիմնական տեսությունները կարելի է առանձնացնել հետևյալ դասակարգմամբ[10]:

- քաղաքային և տարածքային գլոբալ տեսություններ,
- վիճակագրական, քվազիվիճակագրական դինամիկ տեսություններ,
- տնտեսական, սոցիալական, բնապահպանական որոշիչների կամ համակցությունների վրահիմնված տեսություններ,
- տարածքային զարգացման ճյուղային, բնակավայրային, արդյունաբերական ասպեկտները արտացոլող յուրահատուկ տեսություններ,
- վարքաբանական (բիհեվյորիստական) տեսություններ, ինստիտուցիոնալ տեսություն:

Տարածքային տնտեսությունների զարգացման տեսությունների ներկայացված տիպաբանությունը ձևավորում է այնպիսի մի համակցություն, որը հնարավորություն է տալիս առավելագույնս պարզորոշել, իմաստավորել ու ըմբռնել տարածքային տնտեսություններում տեղի ունեցող գործընթացները: Հանգամանորեն դիտարկենք տարածքային տնտեսությունների զարգացման առավել լայն տարածում ունեցող տեսությունների խմբերը[11]:

Տեսություններից որպես հիմնասյուն առանձնանում է ֆրանսիացի գիտնական Վ. դե լա Բլաշ Պոլի կողմից 18-րդ դարի վերջին ձևակերպված պոսիբիլիզմի տեսությունը, որի առանցքային

---

[9] Հայաստանի Տարածքային զարգացման հայեցակարգ, Հավելված ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 20-ի նիստի 25 արձանագրային որոշման, էջ 10, ՀՀՊՏ 2014.08.27/46(1059).1

[10] Фетисов Г.Г., Орешин В.П. О 63 Региональная экономика и управление: Учебник. — М.:ИНФРА-М, 200— 416 с; Бутов В.И., Игнатьев В.Г. Основы региональной экономики.- М.:

[11] Ղուլարյան Ա.Մ., §Տարածքային տնտեսության զարգացման և կառավարման համակարգի կատարելագործման ուղությունները ՀՀ Տավուշի մարզի օրինակով!, Երևան 2011թ., էջ 12

գաղափարը առանձին տեղանքներում բնական միջավայրի հետմարդու փոխգործակցության հետազոտումն է: Ըստ այս տեսության սկիզբ դրվեց տարածքային զարգացման նոր մոտեցման, որի հիմքում ընկած են բնությունը (աշխարհագրական տեղադիրքը) և սոցիալ-մշակութային բանաձևը[12]: Այսպիսով, մարդու աշխարհագրության ֆրանսիական տեսությունը դարձավ 20-րդ դարում աշխարհաքաղաքական տնտեսագիտության հայեցակարգերի ձևավորման հիմքը: Զարգացման լայն տարածում գտած տեսությունների մեկ այլ խումբ ներառում է այսպես կոչված սոցիոբնական տեսական հայեցակետը, որը հնարավորություն է տալիս զարգացման գործընթացները դիտարկել հասարակության և բնության համատեղ էվոլյուցիայի տեսանկյունից:

Ժամանակակից տեսություններում տարածքը բնորոշվում է որպես բազմաֆունկցիոնալ համակարգ: Առավել լայն տարածում է գտել չորս հարացույց՝ տարածք-քվազիպետություն, տարածք-քվազիկորպորացիա, տարածք-շուկա (տարածքային գոտի), տարածք-սոցիում[13]:

Տարածքը՝ որպես քվազիպետություն, պետության և ազգային տնտեսության համեմատաբար առանձնացված ենթահամակարգ է: Շատ երկրներում տարածքներն իրականացնում են անհամեմատ ավելի շատ գործառույթներ և ունեն ֆինանսական ավելի շատ ռեսուրսներ, որոնք նախկինում պատկանում էին (կենտրոնին)[14]: Տարածքային իշխանության գլխավոր գործառույթներից մեկը տարածքային տնտեսության բարելավումն է, համապետական և տարածքային իշխանությունների փոխգործակցությունը: Միջտարածքային տնտեսական հարաբերությունների տարբեր տեսակները (օրինակ, տնտեսական փոխգործակցություն միջտարածքային ասոցիացիաների շրջանակներում) ապահովում են ազգային տնտեսության համակարգում տարածքային տնտեսությունների գործարկումը:

---

[12]Дергачев В.А. Регионоведение. Региональная экономика: организацонно-экономический механизм управления ресурсами развития региона. д-ра эконом. наук, проф. М.: Юнити-дана, 2010., с. 15.

[12] Якимец В. Н. Механизмы взаимодействия некоммерческих организаций, государства и бизнес-сектора в регионах России: состояние, проблемы и перспективы. М.: Институт системного анализа РАН, 2000

[13] Б.И. Герасимова. Тамбов: Изд-во Тамб. гос. техн. ун-та, 20211. - С. 5-6.

[14]Ղուլարյան Ա.Մ. §Տարածքային տնտեսության զարգացման և կառավարման համակարգի կատարելագործման ուղղությունները, ՀՀ Տավուշի մարզի օրինակով!, Երևան 2011թ., էջ 9

Տարածքը՝ որպես քվազիկորպորացիա, տարածքային ու համայնքային սեփականության և տնտեսական գործունեության խոշոր սուբյեկտ է: Այս որակով տարածքային տնտեսությունները ապրանքների, ծառայությունների, կապիտալի շուկաներում մրցակցային պայքարի մասնակիցներ են դառնում: Տարածքը՝ որպես տնտեսական սուբյեկտ, փոխգործակցում է ազգային և վերազգային կորպորացիաների հետ: Կորպորացիաների կենտրոնական գրասենյակների և մասնաճյուղերի տեղակայումը, դրանց գնագոյացման, աշխատատեղերի և պատվերների բաշխման, եկամուտների փոխանցման, հարկերի վճարման և այլ մեխանիզմներն ազդեցություն են թողնում ռեգիոնների տնտեսական վիճակի վրա: Ժամանակակից կորպորացիաներին գրեթե չզիջող չափերով տարածքներն օժտված են ինքնազարգացման էական ռեսուրսային ներուժով: Տարածքի դիտարկումը որպես որոշակի սահմաններ ունեցող շուկայի, ենթադրում է հիմնական ուշադրության կենտրոնացում տնտեսական գործունեության ընդհանուր պայմանների (ձեռնարկատիրական միջավայրի) և տարբեր ապրանքների ու ծառայությունների, աշխատանքի, ֆինանսավարկային ռեսուրսների, արժեթղթերի, տեղեկատվության, գիտելիքների և այլ տարածքային շուկաների յուրահատկությունների վրա[15]:

Տարածքի՝ որպես սոցիումի մոտեցումը առաջին պլան է մղում սոցիալական կյանքի վերարտադրությունը և բնակչության տեղաբաշխման համակարգի զարգացումը: Սույն մոտեցումն ավելի լայն է, քան տնտեսականը: Այն ներառում է տարածքային հանրույթի կյանքի մշակութային, կրթական, բժշկական, սոցիալ-հոգեբանական և այլ ոլորտները, որոնց համադրությանը տարածքային գիտությունն ի սկզբանե մեծ ուշադրություն էր հատկացնում[16]:

Ակնհայտ է, որ զարգացման ըմբռնումներում առաջընթացի կարելի է հասնել միայն գլոբալ դիտարկման պարագայում: Որքան ցածր է դիտարկման մակարդակը, այնքան այն մոտ է առանձին

[15]Ղուլարյան Ա.Մ. §Տարածքային տնտեսության զարգացման և կառավարման համակարգի կատարելագործման ուղղությունները, ՀՀ Տավուշի մարզի օրինակով¦, Երևան 2011թ., էջ 9-10
[16] Նույն տեղում:

մասնակի հայեցակարգերի և իրականության առանձին հատվածների հարաբերակցությանը:

Տարածքային տնտեսությունների զարգացման և արդիականացման հիմքում պետք է դրվի տարածքների կայուն զարգացումը, քանի որ կյանքի ամբողջականության գաղափարն ընկած է դրա բազմազանության մեջ, որի վրա հիմնվում են կայուն զարգացման տեսությունը, ինչպես նաև՝ հետազոտման համագիտական մեթոդները և մոտեցումները: Բնապահպանական, տնտեսական և սոցիալական հիմնախնդիրների առաջացումը, մարդու և կենսոլորտի ներդաշնակ զարգացման ուղիների որոնումը առաջին պլան են մղում համաէվոլյուցիայի գաղափարը:

Արդի պայմաններում տարածքային տնտեսական տարածությունների և գործընթացների կառավարման ընդհանուր հայեցակարգի ընտրությունը չզարգացած, զարգացող և անցումային տնտեսությունների համար բարդ խնդիր է: Ներկայումս մեր հանրապետությունը, մի կողմից ունենալով համեմատաբար բարձրորակ աշխատանքային ռեսուրսներ և արտադրողական ուժերի զարգացման միջինից բարձր մակարդակ, մյուս կողմից՝ գտնվելով տնտեսական հարաբերությունների կառուցվածքային և ինստիտուցիոնալ վերափոխումների՝ դեռևս շարունակվող գործընթացում ու այս իմաստով հանդիսանալով անցումային տնտեսությամբ երկիր, ըստ էության, գտնվում է երկակի վիճակում, ինչը որոշակի բարդություններ է պարունակում՝ կապված անցումային շրջանում տնտեսության ընդհանուր արդյունավետության նվազման, բայց միևնույն ժամանակ՝ զարգացման նոր հեռանկարների առկայության, համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից միտումներին ավելի ակտիվ կերպով ինտեգրվելու հնարավորության հետ:

Ակնհայտ է, որ ՀՀ-ում արտադրությունը և սպառումը դեռևս շատ հեռու են զարգացած երկրների մակարդակից, սակայն դա բնավ չի նշանակում, որ չպետք է հաշվի առնել վերը նշված միտումները: Այս հանգամանքը նկատի ունենալով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ-ում տնտեսական հարաբերությունների համակարգում քաղաքական, սոցիալական, մշակութային գործոնների

դերակատարության առանձնահատկությունները՝ կարելի է ձևակերպել հանրապետության տնտեսության և դրա մաս կազմող տարածքային տնտեսությունների կառավարման ժամանակակից հայեցակարգի հետևյալ հիմնադրույթները.

- տնտեսության հումանիզացում և բնապահպանական ուղղվածություն,
- տնտեսության նորարարականություն,
- տնտեսության շուկայական և պետական կարգավորման մեխանիզմների համակցում,
- տնտեսական արդյունավետության և սոցիալական արդարության սկզբունքների համադրում,
- տնտեսության ռեգիոնալացում և կառավարման ժողովրդավարացում[17]:

Նշված համատեքստում տարածքային տնտեսությունների պետական կառավարման արդյունավետ համակարգի կազմավորման և գործարկման խնդրի լուծումը կարելի է դիտարկել հետևյալ փուլերի շրջանակում.

Գծապատկեր 1.1. Տարածքային տնտեսությունների պետական կառավարման արդյունավետ համակարգի կազմավորման և

[17]Ղուլարյան Ա.Մ. §Տարածքային տնտեսության զարգացման և կառավարման համակարգի կատարելագործման ուղղությունները ՀՀ Տավուշի մարզի օրինակով, Երևան 2011թ., էջ 25

գործարկման փուլերը

Տնտեսական զարգացման նպատակները, ընդհանուր տեսքով, համապատասխանում են տարածքային տնտեսությունների կառավարման հայեցակարգի հիմնական դրույթներին և, իրենց հերթին, պայմանավորում են նշված խնդիրները (աղյուսակ 1.1):

Աղյուսակ 1.1. Տարածքային տնտեսությունների կառավարման նպատակները և խնդիրները[18]

Նպատակներ	Խնդիրներ
Տնտեսության հումանիզացում	-բնակչության բոլոր խմբերի համար կյանքի բարձր որակի ապահովում. -մարդու հոգևոր պահանջմունքների բավա-րարման հնարավորությունների ընդլայնում
Բնապահպանական ուղղվածության ապահովում	շրջակամիջավայրի վրա բնապահպանկան ճնշման թուլացում. էկոմիջավայրի՝մարդու կյանքի համար առավել նշանակալի բաղադրիչների վերականգնում
արդարության սկզբունքների ապահովում	արտադրական ռեսուրսների և դրանցից ստացվող եկամուտների արդարացի բաշխում. բնական ռեսուրսների շահագործումից եկա-մուտների արդարացի բաշխում.
Տնտեսության ռեգիոնալացում	տնտեսական զարգացման արդյունքների համար տարածքային միավորների պատասխանատվության բարձրացում.տնտեսական զարգացման կառավարման ոլորտում տարածքային միավորների իրավասությունների և հնարավորությունների ընդլայնում.
Շուկայական ինքնակարգավորման և պետական կարգավորման	պետական կարգավորում պահանջող ոլորտների առանձնացում,

[18] Мишуров С.С., Щуков В.Н. Основы регионалистики.- Иваново, 2003.- С. 64.

մեխանիզմների համակցում	տնտեսությունում պետության միջամտության սահմանների հստակեցում:

Ընդհանուր առմամբ, տարածքային տնտեսությունների կառավարման՝ ներկայումս գործող համակարգի վերլուծության արդյունքում կարելի է եզրակացություն անել վերը նշված նպատակներին և խնդիրներին դրա ոչ լրիվ համապատասխանության մասին: Տարածքային տնտեսությունների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է, առաջին հերթին, առավել հստակորեն բաշխել գործառույթները կառավարման մարմինների միջև և կառավարման ճյուղային համակարգից անցում կատարել գործառութային համակարգին:

Այսպիսով, տարածքի տնտեսության կառավարումն իրականացվում է դրա արդյունավետ զարգացման, ինչպես նաև՝ երկրի տնտեսական տարածությունում տարածքների ներդաշնակ ինտեգրման ապահովմամբ: Այս խնդրի լուծումը կարելի է ապահովել տարածքային տնտեսությունների մասնագիտացման կատարելագործման, տնտեսական շրջանառությունում նոր ռեսուրսների ներգրավման, առկա արտադրական և աշխատանքային ներուժի նպատակային օգտագործման, արտադրողական ուժերի և տրանսպորտային ու տնտեսական կապերի արդյունավետ տեղակայման ճանապարհով:

Տնտեսական հարաբերությունների զարգացման արդի փուլում տարածքային տնտեսությունների զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է տարածքային միավորների տնտեսական գործունեության պետական կարգավորում, որն իրականացվում է տարածքային տնտեսությունների վրա պետական ազդեցության գործիքների համակարգի մշակման և կիրառման միջոցով: Ծուկայական հարաբերությունների պայմաններում տարածքային տնտեսությունների վրա պետական ներգործության գործիքակազմը ներառում է առնվազն երեք փոխկապված տարր.

- ապագայում ձևավորվելիք տնտեսական իրավիճակներում տարածքային տնտեսությունների սուբյեկտներին կողմնորոշող պետական փաստաթղթեր,
- պետական իշխանության մարմիններին՝ տեղի ունեցող գործընթացների վրա ակտիվորեն ներգործելու հնարավորություն տվող պետական փաստաթղթեր,
- տարածքային տնտեսություններում վերարտադրության գործընթացի բոլոր սուբյեկտների գործունեությունը կանոնակարգող օրենսդրական ակտեր:

Տարածքային տնտեսության զարգացման պետական կարգավորման կողմնորոշիչ բնույթի գործիքների համակարգը ներառում է երկրի արտադրողական ուժերի զարգացման և տեղակայման գլխավոր սխեման, տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումը, տարածքային տնտեսության զարգացման ռազմավարական և ինդիկատիվ պլանները:

Տարածքային տնտեսությունների զարգացման կառավարման գործընթացի համար ելակետ են սոցիալ-տնտեսական զարգացման վերլուծությունը և կանխատեսումը: Հիմնավորված կանխատեսումների հիման վրա սահմանվում են տարածքային տնտեսության զարգացման նպատակները, ճշգրտվում են ծրագրային միջոցառումները և գերակայությունները: Տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի գնահատման համար օգտագործվում են տարբեր մասնակի և ընդհանրական ցուցանիշներ, իսկ հեռանկարում դրանց միտումների կանխատեսման համար կիրառվում են տարբեր գործիքներ, ինչպիսիք են արտարկումը, տնտեսաչափական հաշվարկները, մակրոկառուցվածքային մոդելների համակարգերը: Տարածքային տնտեսությունների զարգացման կանխատեսումները հիմնվում են տարածքային տնտեսական համալիրի գործարկման և զարգացման յուրահատկությունները բացատրող որոշակի տեսությունների վրա, որոնք հիմնականում նույնն են, ինչ ազգային տնտեսության համար: Այդ տեսություններից կարելի է հիշատակել Ու. Ռոստուի տնտեսական աճի փուլերի տեսությունը, աճի նեոդասական տեսությունը, Ա. Լյուիսի զարգացման տեսությունը, Հ. Չեներիի

կառուցվածքային վերակազմավորումների մոդելը, արտաքին կախվածության տեսությունները:

Ինչպես արդեն նշվել է, տարածքային տնտեսությունների զարգացման պետական կարգավորման կողմնորոշիչ բնույթի գործիքներից է տարածքային զարգացման ռազմավարական պլանը: Այն կառավարչական փաստաթուղթ է, որը պարունակում է տարածքային տնտեսությունների զարգացմանն ուղղված գործունեության առանձին ասպեկտների փոխկապված նկարագրություն: Ռազմավարական պլանը (ինդիկատիվ) համընդգրկուն փաստաթուղթ է, որը տարածքային միավորի կառավարման մարմիններին և հանրությանը համատեղ գործելու հնարավորություն է տալիս: Ըստ որում, այն ոչ թե բացառապես վարչարարական փաստաթուղթ է, այլ՝ տարածքային տնտեսական զարգացման բոլոր սուբյեկտների մասնակցությամբ մշակվող ուղենիշ,որի հիմնական բնութագրիչներից են.

Տարածքային տնտեսության ուժեղ և թույլ կողմերի առանձնացումը, բնակչության կյանքի որակի բարձրացման նպատակով տարածքային տնտեսության մրցակցային առավելությունների ձևավորման և զարգացման, մասնագիտացման խորացման ձգտումը,հակիրճ գաղափարները և սկզբունքները,որոնք կողմնորոշում են ապրանքների և ծառայությունների արտադրողներին, ներդրողներին, տարածքային իշխանություններին և բնակչությանը՝նրանց օգնելով իրագործել ապագա զարգացման տեսլականի վրա հիմնված որոշումները,ինչպես նաև բոլոր տարածքային ուժերի գործընկերային փոխգործակցությունը:

Ռազմավարական պլանի մշակման կարևոր փուլերից մեկը տարածքային տնտեսության զարգացման ռազմավարության մշակումը,որում կարևոր նշանակություն է տրվում տարածքային տնտեսության զարգացման առանցքների բացահայտմանը և դրանց զարգացման ուղիների մշակմանը:

Ինչ վերաբերում է ինդիկատիվ պլանավորմանը, այն պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության ուղղություններին համապատասխանող, տարածքային

տնտեսությունների վիճակը և զարգացումը բնութագրող ցուցանիշների համակարգի ձևավորման գործընթաց է: Ըստ այդմ, ինդիկատիվ պլանը զարգացման առավել արդյունավետ ուղիների ընտրության հարցում ձեռնարկատիրական հատվածի կողմնորոշման գործիք է: Այն ենթադրում է սահմանված թիրախային ցուցանիշներին հասնելու նպատակով սոցիալական և տնտեսական գործընթացների վրա պետական ներգործության միջոցների մշակում: Ինդիկատիվ պլանի ցուցանիշները նորմատիվային բնույթ չեն կրում: Այն պարունակում է պարտադիր հանձնարարությունների սահմանափակ քանակություն և առավելապես կողմնորոշող, ուղղորդող բնույթունի:

Տարածքային տնտեսությունների զարգացման վրա պետական ներգործության գործիքների երկրորդ խումբը, ինչպես արդեն նշվել է, ակտիվ ազդեցության գործիքների համակարգն է, որը ներառում է տարածքային զարգացման ծրագրավորումը, տարածքային միավորի բյուջեի կազմումը և բյուջետային ծրագրի իրագործումը: Այս գործիքների կիրառումը ենթադրում է, որ պետական կառավարման մարմինները ակտիվորեն մասնակցում են ոչ միայն տնտեսական գործընթացների վրա միջնորդավորված (անուղղակի) ներգործություններում, այլ նաև հասարակական վերարտադրության ընթացքի անմիջական կառավարմանը: Այս համատեքստում կարևորվում է նպատակային-ծրագրային մոտեցման կիրառումը, որի հիմքում դրվում է նպատակային ծրագրերի իրականացման միջոցով տարածքային տնտեսությունների զարգացման խնդիրների լուծումը: Նպատակային-ծրագրային մոտեցման կառուցվածքային տարրերն են՝ սոցիալ-տնտեսական զարգացման նպատակների սահմանումը, այդ նպատակների իրագործմանն ուղղված միջոցառումների մշակումը, նպատակների և միջոցառումների համաձայնեցման ապահովումը, ինչպես նաև նախատեսվող միջոցառումների իրականացման ռեսուրսային ապահովումը: Ըստ որում, ծրագրերն իրականցվում են կամ տարբեր մակարդակների պետական մարմինների կողմից, կամ էլ մասնավոր կազմակերպությունների կողմից, սակայն՝ պետության աջակցությամբ:

Այսպիսով, հիմնվելով ազգային և տարածքային տնտեսությունների կառավարման նպատակների ու խնդիրների, տարածքային տնտեսությունների կառավարման տարբեր տեսությունների հիմնադրույթների վրա, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ-ում տնտեսական հարաբերությունների համակարգում քաղաքական, սոցիալական, մշակութային գործոնների դերակատարության առանձնահատկությունները, կարելի է ձևակերպել հանրապետության տնտեսության և դրա մաս կազմող տարածքային տնտեսությունների կառավարման ժամանակակից հայեցակարգի հետևյալ հիմնադրույթները. տնտեսության հումանիզացում և բնապահպանական ուղղվածություն,տնտեսության նորարարականություն, տնտեսության շուկայական և պետական կարգավորման մեխանիզմների համակցում, տնտեսական արդյունավետության և սոցիալական արդարության սկզբունքների համադրում, տնտեսության տարածքայնացում և կառավարման ժողովրդավարացում:

1.2 Զբոսաշրջության դերը տարածքային զարգացման համակարգում

Տարածքային տնտեսությունների զարգացման կառավարման տեսական հիմքերի և արդի պատկերացումների հետազոտման հիման վրա զբոսաշրջության տարածքային կառավարման համակարգը կարելի է ներկայացնել որպես բաղադրիչների բարդ համակցություն: Վերջինիս մեջ կարելի է ներառել կառավարման մարմինները, նպատակային ռազմավարական դրույթները, սկզբունքները, գործառույթները, կառուցվածքները, ռեսուրսները,մեթոդները,տեխնոլոգիաները և գործիքները,որոնք բոլորը փոխկապված են,կազմում են ընդհանրական ամբողջություն և ձևավորում են բնակչության կյանքի որակի բարձրացման նպատակով զբոսաշրջային տարածքային տնտեսության,տարածքային ներուժի, սոցիալ-տնտեսական գործընթացների, բնակչության կենսապայմանների, կազմակերպությունների և տնային

տնտեսությունների վրա ներգործության մեխանիզմ[19]: Վերոնշյալ ձևակերպումից բխում է, որ զբոսաշրջային տարածքային կառավարման համակարգը ձևավորում է կառավարման մեխանիզմը՝ վերը նշված հիմնական բաղադրիչների միջոցով: Հարկ է նշել, որ առանց այդ համակարգային բաղադրիչների տարածքային կառավարման մեխանիզմը գոյություն ունենալ չի կարող, և, միևնույն ժամանակ, առանց կառավարման մեխանիզմի չի կարող, որպես այդպիսին լինել կառավարման համակարգը, քանի որ վերջինս ոչ թե կայուն, այլ փոփոխվող բնութագրիչներով դինամիզմի բարձր աստիճան ունեցող օբյեկտ է: «Տարածքային զբոսաշրջություն» հասկացությունը զբոսաշրջության առանցքային գաղափարներից է: Անգամ ՄԱԿ-ի համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության (այնուհետև՝ ՀԶԿ) կողմից ոլորտին վերաբերող բոլոր վիճակագրական տվյալներն ու հաշվետվություններն ամփոփվում են հենց տարածաշրջանների կտրվածքով[20]: Թեև մեթոդաբանական առումով զբոսաշրջության տերմինաբանական հիմքը բավականին լավ է մշակված, սակայն դեռևս կան որոշ հասկացություններ և եզրույթներ, որոնք մասնագիտական գրականության մեջ միարժեքորեն չեն ներկայացվում: Նման հասկացությունների թվին է դասվում նաև տարածքային զբոսաշրջությունը, որի բնորոշման հարցում գոյություն ունեն տարբեր մոտեցումներ:

Ընդհանուր առմամբ տարածքը կարելի է դիտարկել և՛ որպես յուրօրինակ ռեսուրս, և՛ որպես տարբեր բնական ռեսուրսներ կրող[21]: Տարածքի կարևոր յուրօրինակությունը որպես ռեսուրս այն է, որ վերջինս հանդես է գալիս որպես աշխարհագրական տարածք, որն ապահովում է բոլոր տեսակի տնտեսական գործառույթների իրականացումը: Ուստի զբոսաշրջային գործունեության համար բարենպաստ տարածքների սահմանափակության պատճառով

[19] A new conceptualisation of regional development strategies, Peter Nijkamp, Tinbergen Institute, Amsterdam, Adam Mickiewicz University, Poznan, pp25-30
[20] http://www.wttc.org/research/economic-research/economic-impact-analysis/,
[21] https://www.ukessays.com/essays/tourism/tourist-generating-region-and-tourist-destination-region-tourism-essay.php

նպատակահարմար է տարածքը դիտարկել որպես հատուկ զբոսաշրջային ռեսուրս[22]:

«Տարածքային զբոսաշրջություն» հասկացության տարբեր սահմանումները հիմնվում են զբոսաշրջության տարբեր հատկանիշների վրա: Մեր կողմից ուսումնասիրված սահմանումներից առանձնացնենք հետևյալները.

Ըստ արևմտյան տնտեսագետների, տարածքային զբոսաշրջությունը որոշակի տարածք է, որտեղ զբոսաշրջային ծառայությունների մատուցման հետ կապված գործունեություն է իրականացվում[23]: Զբոսաշրջության տարածքն պետք է ունենա զբոսաշրջային գրավչություն՝ ունենալով ինչպես որոշակի բնակլիմայական և (կամ) պատմամշակութային առանձնահատկություններ, այնպես էլ՝ սպասարկման զարգացած ենթակառուցվածք: Ռուսաստանյան դպրոցի հայտնի ներկայացուցիչ Ա. Ալեքսանդրովայի կարծիքով միջազգային բոլոր տիպի զբոսաշրջային տարածաշրջաններին ներկայացվող ամենաընդհանուր պահանջներն են՝ բնակլիմայական գրավչությունը, պատմամշակութային ռեսուրսների առկայությունը, որակի միջազգային ստանդարտներին համապատասխանող տեղավորման միջոցների, հանրային սննդի ձեռնարկությունների և սպասարկման այլ հաստատությունների առկայությունը, ժամանցային և էքսկուրսիոն մշակված ծրագրերի իրականացումը, տրանսպորտային և տեղեկատվական համակարգերի մատչելիությունը, տարածաշրջանի քաղաքական կայունությունը և զբոսաշրջիկների անձնական անվտանգության երաշխիքները, ողջ տարածաշրջանի կամ դրանում տեղակայված զբոսաշրջային օբյեկտների միջազգային ճանաչումը, հեղինակությունը, ձևավորված զբոսաշրջային վարկանիշը: Վարչատնտեսական գործունեության մեջ զբոսաշրջային տարածաշրջանները հաճախ անվանում են նաև տարածքային զբոսաշրջային-ռեկրեացիոն համալիրներ, քանի որ զբոսաշրջությունը և հանգիստը հիմնված են

[22] Casey J. Dawkins,Regional development theorey, Conceptual foundations, Classic works and recent development,p. 133

[23] Casey J. Dawkins,Regional development theorey, Conceptual foundations, Classic works and recent development. – pp. 135-136

տնտեսության մի քանի ճյուղերի վրա, օրինակ՝ առևտուրը, տրանսպորտը, առողջապահությունը, մշակույթը, կրթությունը, գյուղատնտեսությունը և այլն[24]: Այսպիսի համալիրի գործունեությունը կախված է կառավարման ռազմավարական համակարգի ձևավորումից, որի հիմնական նպատակը պետք է լինի սպառողների զբոսաշրջային-ռեկրեացիոն պահանջմունքների բացահայտումը և բավարարումը[25]:

Տարածքային զբոսաշրջությունը կարելի է բնորոշել՝ հաշվի առնելով նաև զբոսաշրջիկների պահանջները: Այս դեպքում հիմնականում առանձնացվում է չորս շարժառիթ, որոնցով զբոսաշրջիկները սովորաբար առաջնորդվում են իրենց զբոսաշրջային պահանջմունքներն իրացնելիս: Այդ շարժառիթներն են[26՝]

- վայրը (բնական լանդշաֆտը),
- հյուրանոցային և տեղավորման պայմանները,
- էքսկուրսիաները,
- գինը:

Ուշագրավ է Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության ներկայացրած սահմանումը. ‘’Տարածքային զբոսաշրջությունը համակարգված տարածք է, որտեղ կան տեսարժան վայրեր, ինչպես նաև դրանց հարմարեցված զբոսաշրջային շինություններ և ծառայություններ, որոնք ընտրվում են զբոսաշրջիկի կամ զբոսաշրջային խմբի կողմից և որոնք վաճառվում են ծառայություններ արտադրողի կողմից[27’] :

Սահմանումից երևում է, որ տարածքային զբոսաշրջությունը իր մեջ միավորում է զբոսաշրջիկի ուղևորության նպատակը և զբոսաշրջային ապրանքը՝ որպես մատուցվող ծառայությունների ամբողջություն:

Որպես ուղևորություն նպատակ (նույն ինքը՝ նպատակակետ, դեստինացիա, զբոսաշրջավայր), տարածաշրջանը պետք է առանձնանա զբոսաշրջային գրավչությամբ, իսկ այդ գրավչության աստիճանը

[24] http://turvids.ru/ponyatie-turizma.html
[25] Ստեփանյան Կ.Կ. §Զբոսաշրջության զարգացման անհրաժեշտ ենթակառուցվածքների արդի վիճակը ՀՀ-ում¦, դասախոսությունների ձեռնարկ, 2011Ã. ¿ç 15:
[26] “A Study on the Motivation-based Tourist Destination Image” Tourism Travel and Research Association:
[27] www.unwto.org. Tourism “Definition of Tourism”, Annual report, 2016,pp 28-39

կախված է զբոսաշրջիկի անհատական ընկալումից և շարժառիթներից օրինակ, եթե զբոսաշրջիկը լեռնադահուկորդության սիրահար է, ապա նրա համար գրավիչ կլինեն լեռնային զանգվածները և ոչ թե արևադարձային լողափերը, կամ եթե զբոսաշրջիկը հետաքրքրված է հնագույն քաղաքակրթություններով, ապա, ամենայն հավանականությամբ, նա կնախընտրի Եգիպտոս կամ Չինաստան մեկնել և այլն, որպես հյուրընկալման արդյունաբերական ձեռնարկությունների և մատուցվող ծառայությունների միասնական համալիր, տարածաշրջանը ներկայանում է որպես զբոսաշրջային ապրանք, այսինքն՝ շուկայի մրցակցային միավոր: Այս դեպքում զբոսաշրջային տարածաշրջանն առաջնորդվում է սեփական մրցունակության երկարաժամկետ պահպանման ռազմավարական նպատակով, որն էլ, իր հերթին, կախված է զբոսաշրջային արտադրանքի որակից, այսինքն՝ մատուցվող ծառայությունների և սպառողական պահանջմունքների համապատասխանությունից[28]:

Համեմատության համար հղում անենք, նաև ՝Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին՝ ՀՀ օրենքին. ՝Զբոսաշրջային տարածաշրջան և /կամ/ կենտրոն՝ առաջնահերթ զարգացման ենթակա, բնական, սոցիալ-մշակութային և առողջարանային ռեսուրսների կենտրոնացմամբ, զբոսաշրջության համար կարևոր նշանակություն ունեցող տարածք, որի սահմանները և կարգավիճակը որոշում ու հայտարարում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ [29]:

1979թ. պրոֆեսոր Լայպերը տվել է զբոսաշրջության համակարգային սահմանումը (Նոր Զելանդիա), ըստ որի զբոսաշրջությունը աշխարհագրական տարրերից, զբոսաշրջիկներից, զբոսաշրջային ինդուստրիայից բաղկացած համակարգ է: Աշխարհագրական տարրերն իրենց հերթին ստորաբաժանվում են զբոսաշրջիկներ «ծնող» տարածաշրջանների,

[28]Կարապետյան Ա.Ա., «Զբոսաշրջության տարածաշրջանների գրավչության և մրցունակության գնահատումը կայուն զարգացման սկզբունքների կիրառմամբ» ԵԿՏԱ, Երևան. - էջ 9-13:
29 «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը, ՀՀՊՏ 29.01.04./6(305):

տարանցիկ տարածաշրջանների և դեստինացիոն տարածաշրջանների (դեստինացիաների)[30]:

Տարածքային զբոսաշրջության դասակարգման հարցում կարևոր է դեստինացիաների տարանջատումը, այսինքն՝ սահմանների հստակ որոշումը: Հարցն այն է, թե որն է զբոսաշրջային տարածաշրջանը որպես ինքնուրույն տարածքային միավոր առանձնացնելու գլխավոր չափանիշը: Այդպիսի չափանիշներից են բնական ռեսուրսները, տնտեսության բնույթը, վարչական կառուցվածքը և այլն: Սակայն դրանցից ոչ մեկը չի կարող համապիտանի տարբերակ ճանաչվել, քանի որ հնարավորություն չի տալիս տարածքների սահմաններն անցկացնել գետահովիտների, լեռնաշղթաների և անտառների միջով, բացի այդ, հարց է ծագում՝ արժե՞ արդյոք զբոսաշրջային տարածքային միավորներին միացնել այն տարածքները, որոնք զբոսաշրջային չեն, սակայն տարածքային և ֆունկցիոնալ առումով կապված են վերջիններիս հետ: Այս խնդիրներն արդիական են գրեթե բոլոր երկրների համար: Եվ վերջապես հարց է ծագում, թե սահմանների որոշման հարցում որն է ավելի կարևոր՝ բնական լանդշաֆտները, թե՞ վարչաքաղաքական սահմանները: Այս առումով զբոսաշրջության տարածաշրջանային կազմակերպման և զբոսաշրջային գործունեության զարգացման գործընթացում հույժ կարևոր է զբոսաշրջային կամ ռեկրեացիոն շրջանացումը, որի օգնությամբ որոշվում են զբոսաշրջային տարածաշրջանների սահմանները [31]:

Զբոսաշրջային կամ ռեկրեացիոն շրջանացումը համաշխարհային պրակտիկայում կայացած գիտական ընթացակարգ է որը մեծ մասամբ հիմնվում է խիստ մեթոդաբանության վրա՝ լինելով շրջանցման մասնավոր, բնագավառային տեսակ, և ներկայացնում է միայն մեկ տեսանկյուն, այն է՝ առանձին տարածաշրջանների յուրացումը զբոսաշրջության զարգացման նպատակներով:

Այսպիսով, Զբոսաշրջային շրջանացումը տարածքային ենթաբաժանումն է որոշակի բնութագրիչների ընդհանրության

30 Դեստինացիա - ժամանման վայր (տարածք, տարածաշրջան, տեղանք): Օ·տա·գործվում է մասնա·իտա¬կան զբոսաշրջության բառապաշարում զբոսաշրջիկներ ընդունող տարածքի կամ երկրի սահմանման համար:

[31] Mc. Intosh. R.W., Tourism principles, practices, philosophies.Colunbas (Ohio), 2010, pp 15-25

սկզբունքով և ռեկրեացիոն օգտագործման նպատակով: Զբոսաշրջային շրջանացման գլխավոր գործոններն են.

- տարածաշրջանի զբոսաշրջային յուրացման մակարդակը (միջազգային պրակտիկայում սովորաբար արտահայտվում է առկա հյուրընկալման ձեռնարկությունների տեղերի ընդհանուր քանակի և տարածաշրջանի մեծության (հազ.ք.մ.) հարաբերության ցուցանիշով.
- ռեկրեացիոն գործառույթների կառուցվածքը (էքսկուրսիոն, սպորտային, բուժ-առողջարանային, ճանաչողական, ժամանցային և այլն), որը կարող է լինել միագործառութային և բազմագործառութային (օրինակ՝ Ֆրանսիան հայտնի է իր մշակութաճանաչողական, ժամանցային, սպորտային, բուժառողջարանային, գործարար, լողափնյա և բազմաթիվ այլ ռեկրեացիոն գործառույթներով),
- տարածաշրջանի բաց լինելը (գնահատվում է զբոսաշրջիկների զանգվածում տեղացիների կամ արտերկրից ժամանածների գերակշռությամբ),
- տարածաշրջանի հեռանկարային զարգացման հնարավորությունները (կախված են տարբեր ներքին և արտաքին գործոններից, ինչպես օրինակ՝ ռեսուրսների ծավալը, անվտանգությունը, ենթակառուցվածքների առկայությունը, հեղինակությունը ներքին և միջազգային շուկաներում և այլն)[32]:

Թվարկված շրջանագոյացնող գործոնները անփոփոխ չեն. դրանց բովանդակային, որակական և քանակական բնութագրերը ժամանակի ընթացքում կարող են փոփոխությունների ենթարկվել՝ ամենատարբեր հանգամանքների ազդեցությամբ:

Նշված գործոններից առավել կայունը ռեկրեացիոն գործառույթների կառուցվածքն է, քանի որ այն պայմանավորված է տարածաշրջանի զբոսաշրջային ռեսուրսներով:

Շրջանացումը պետք է ներառի նաև այնպիսի վայրեր, որտեղ զբոսաշրջություն առհասարակ չկա կամ շատ թույլ է զարգացած, սակայն ապագա զարգացման համար կան որոշակի նախադրյալներ:

[32] http://www.wttc.org/research/economic-research/economic-impact-analysis/regional-reports/

Արտերկրում զբոսաշրջային շրջանացումը հիմնվում է հետևյալ համակարգային մոտեցման վրա. որպես ամենախոշոր տարածքային միավոր հանդես է գալիս այն տարածաշրջանը, որը հաճախ համընկնում է մի ամբողջ մայրցամաքի տարածքի հետ: Ներկայումս զբոսաշրջային տարածաշրջանների տարանջատման և դրանց յուրացման աստիճանը գնահատելու համար ավելի նպատակահարմար է դրանք բաժանել հետևյալ երեք տարատեսակի[33].

- տարածաշրջաններ, որոնք ունեն ավելի արժեքավոր և բազմազան զբոսաշրջային ռեսուրսներ և լայնորեն օգտագործվում են զանգվածային հանգստի կազմակերպման համար:
- տարածաշրջաններ, որոնք ունեն համապատասխան ռեսուրսներ արձակուրդային և տոնական հանգստի համար:
- տարածաշրջաններ, որոնք ունեն սահմանափակ ռեսուրսներ, որտեղ զբոսաշրջությունը կարող է զարգանալ՝ կախված երկրի կարիքներից և տեղական իշխանությունների հատուկ նախաձեռնությամբ:

Նշենք նաև, որ բոլոր զբոսաշրջային տարածաշրջանները բաժանվում են լայն և նեղ մասնագիտացման շրջանների: Այս բաժանումը կապված է զբոսաշրջիկների մոտիվացիայի և ճանապարհորդությունների նպատակների հետ:

Այսպես, օրինակ՝ տրանսպորտային խոշոր հանգույցները, արդյունաբերական, վարչական, գործարար և կրթական կենտրոնները համարվում են լայն մասնագիտացման շրջաններ, քանի որ թեև դրանք ունեն զարգացած քաղաքային ենթակառուցվածքներ, սակայն հանգստի որոշակի ձևի անցկացման վայրեր չեն: Նեղ մասնագիտացման շրջաններն առանձնանում են հստակ արտահայտված բնակլիմայական գրավչությամբ, ունեն բազմաթիվ տեսարժան վայրեր և մեծ հետաքրքրություն են ներկայացնում զբոսաշրջության որոշակի ձևերի առումով, այսինքն՝ հանդիսանում են զբոսաշրջային ուղևորության նպատակ: Ներկայացված երկու տիպի շրջանները սերտորեն կապված են միմյանց հետ, անընդհատ փոխգործակցության մեջ են և, իրար

[33] Nijkkamp P., Cocossiss H. ,"Sustainable regional tourism development" 1995, Amsterdam pp.25-36

լրացնելով, առավել արդյունավետ են դարձնում զբոսաշրջային տարածաշրջանների գործունեությունը:

Զբոսաշրջային տարածաշրջանների առանցքային մաս են կազմում զբոսաշրջային կենտրոնները: Զբոսաշրջային կենտրոն ասելով՝ պետք է հասկանալ քաղաք, բնության հատված, տեղանքի մաս, որտեղ առկա զբոսաշրջային ռեսուրսների բազայի վրա ստեղծված է զբոսաշրջային էքսկուրսիոն սպասարկման խոշոր համալիր: Այդպիսի համալիրը պետք է կազմված լինի տեղավորման օբյեկտներից, սննդի, առևտրի ձեռնարկություններից, սպորտային-ժամանցային կառույցներից և սպասարկման ոլորտի այլ ձեռնարկություններից:

Մասնագիտական գրականության մեջ լայնորեն կիրառվում է նաև զբոսաշրջային տարածություն հասկացությունը, որը հաճախ շփոթում են տարածաշրջանի հետ: Զբոսաշրջային տարածությունը կարելի է դիտարկել թե՞ աշխարհագրական, թե՞ տնտեսագիտական տեսանկյունից: Սակայն եթե ուշադրությունն ուղղենք միայն զբոսաշրջության տնտեսական նշանակությանը, ապա զբոսաշրջային տարածությունը կարելի է դիտարկել տարածաշրջային տնտեսագիտության համատեքստում: Տարածաշրջանային տնտեսագիտության հասկացություններից տնտեսական տարածությունը հագեցած տարածք է, որն ընդգրկում է բազմաթիվ փոխկապակցված օբյեկտներ, ինչպես՝ բնակավայրերը, առևտրային կազմակերպությունները, տնտեսական սեփականությունը և հանգստյան գոտիները, ենթակառուցվածքը և այլն: Տնտեսական տարածության որակը պայմանավորված է մի շարք գործոններով[34]: Նշենք դրանցից մի քանիսը.

- խտություն (բնակչության թվաքանակ, համախառն տարածաշրջանային արդյունքի ծավալ, բնական ռեսուրսներ, հիմնական կապիտալ).
- տեղաբաշխում (հավասարաչափության ցուցանիշներ, կենտրոնացում, տարբերակում, բնակչության և տնտեսական գործունեության բաշխում, այդ թվում՝ տնտեսապես յուրացված և չյուրացված տարածքներ).

[34] Nijkkamp P., Cocossiss H., "Sustainable regional tourism development" 1995, Amsterdam pp.25-36

- կապվածություն (տնտեսական կապերի ինտենսիվությունը տարածության մասերի և տարրերի միջև, ապրանքների, ծառայությունների, կապիտալի, մարդկանց շարժունությունը, որը պայմանավորված է տրանսպորտային և հաղորդակցական ցանցերի զարգացմամբ):

Արևմտյան և ռուսական մասնագիտական գրականության մեջ և մամուլում ներկայումս լայնորեն օգտագործվում է «զբոսաշրջային դեստինացիա» հասկացությունը: Որպես զբոսաշրջության մասնագիտական եզրույթ՝ այն ակտիվ շրջանառության մեջ է մտել 1980-ականներին, իսկ առաջին անգամ կիրառվել է 1979թ. միջազգային զբոսաշրջության տեսության հայտնի մասնագետ, ավստրալիացի գիտնական պրոֆեսոր Նեյլ Լեյփերի (Neil Leiper) կողմից [35]:

Հատկանշական է, որ կիրառման առաջին իսկ պահից «դեստինացիա» հասկացությունը շաղկապված է եղել ՝տարածաշրջան' հասկացության հետ: Լեյփերի Զբոսաշրջության համակարգը (Leipers Tourism System), որն ի դեպ աշխարհում ճանաչվել է զբոսաշրջության գրեթե բոլոր ազգային դպրոցների կողմից, բաղկացած է երեք հիմնական տարրերից՝ զբոսաշրջային արդյունաբերությունից և զբոսաշրջիկներից, աշխարհագրական տարրերից:

Իր հերթին՝ աշխարհագրական տարրը կազմված է երեք տիպի տարածաշրջաններից՝ զբոսաշրջիկներ առաջացնող տարածաշրջան (tourist generating region), տարանցիկ կամ տրանզիտային տարածաշրջան,(transit region) զբոսաշրջիկների դեստինացիայի տարածաշրջան (tourist destination region)[36]:

Դեստինացիան դիտարկվում է նաև որպես մի վայր, որի այցելությունը զբոսաշրջիկներին տալիս է զանազան տպավորություններ, փորձ և զգացումներ: Սակայն զբոսաշրջության կառավարման համատեքստում դեստինացիան ներկայանում է որպես հստակ սահմանված տարածքային միավոր՝ իր պարտադիր բաղադրիչներով: Դիտարկենք այն անհրաժեշտ

[35] Էլիզբարյան Ն.Ա. «Ներդրումների խթանման հիմնախնդիրները» ՀՀ զբոսաշրջության ոլորտում, էջ 25
[36] https://www.usaid.gov/sites/default/files/documents/2151/DMOworkbook_130318.pdf

նախադրյալները, որոնք պետք է ունենա տարածաշրջանը՝ զբոսաշրջային դեստինացիա ճանաչվելու համար:

Լինելով զբոսաշրջային համակարգի կարևորագույն տարրերից մեկը՝ դեստինացիան կարող է առաջին հերթին բնութագրվել որպես զբոսաշրջիկների տարաբնույթ կարիքների բավարարման համար անհրաժեշտ պայմաններով և հարմարություններով հագեցած կենտրոն: Դեստինացիաների կարևորությունն ընդգծվում է նաև այն պատճառով, որ դրանք իրենց իմիջով գրավում են զբոսաշրջիկներին, առաջացնում են այցելությունների շարժառիթներ՝ խթանելով ողջ զբոսաշրջային համակարգի ակտիվությունը:

Դեստինացիան պարտադիր բաղադրիչների այնպիսի ամբողջություն է, որի մեջ մտնում են տեսարժան վայրերը (բնական և ձեռակերտ ժառանգություն), հյուրընկալման արտադրանքային ենթակառուցվածքը (տեղավորումը, սնունդը, ժամանցը, սպորտը և մշակույթը, ավտոմեքենաների վարձույթը, բժշկական ծառայություններ և այլն), զանազան լրացուցիչ ծառայություններ, որոնք ոչ միայն համալրում են դեստինացիայում հյուրերի սպասարկման համակարգը, այլև տվյալ զբոսաշրջավայրում ստեղծում են հյուրընկալության ջերմ մթնոլորտ, տեղեկատվական համակարգը, որը կազմված է զբոսաշրջիկներին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրող կենտրոններից և ամրագրման գլոբալ համակարգերից, ինչպես նաև՝ զբոսաշրջության կառավարման և կազմակերպման արհեստավարժ կադրերը [37]:

Դեստինացիայի հարմարություններից և ծառայություններից օգտվում են ոչ միայն զբոսաշրջիկները, այլև տեղի բնակչությունը, հետևաբար՝ դեստինացիայի ձեռնարկությունները պետք է ուղղված լինեն դեպի թե՛ տեղացիների, թե՛ օտարերկրացիների կարիքների բավարարմանը: Որպես զբոսաշրջային համակարգի տարրեր՝ դեստինացիաները ենթարկվում

[37] https://www.usaid.gov/sites/default/files/documents/2151/DMOworkbook_130318.pdf

են որոշակի տիպաբանական դասակարգման, որի համաձայն առանձնացվում է երեք տիպի դեստինացիա[38].

- խոշոր քաղաքներ մայրաքաղաքներ կամ այլ մեգապոլիսներ, որոնք զբոսաշրջիկներին գրավում են հիմնականում ճանաչողական և գործարար զբոսաշրջության հնարավորություններով, բացի այդ, կարևոր տեղ են զբաղեցնում նաև ազգականների և ծանոթների այցելությունները:

- զբոսաշրջության զարգացման նպատակային կենտրոններ, այսինքն՝ այն քաղաքները, գյուղերը, որոնք պահպանել են իրենց ավանդական մշակույթը, սովորույթները և կարող են դրանցով ներկայանալ միջազգային զբոսաշրջային շուկայում,

- հատուկ զբոսաշրջիկների համար կառուցված կենտրոններ, օրինակ՝ Փարիզի Eurodisneyland-ը կամ Ճապոնական Ocean Dome-ը և այլն:

Այսպիսով, տարածաշրջանը դեստինացիա կոչելու համար անհրաժեշտ է ունենալ զարգացած տրանսպորտային համակարգ զբոսաշրջային գրավչությունն ապահովող տեսարժան վայրեր, որակի միջազգային չափանիշներին համապատասխանող և գնային տարբեր կարգերի տեղավորման միջոցներ, սննդի բազմատեսակ ձեռնարկություններ, տարածքի մասին զբոսաշրջային շուկան տեղեկացնելու համար անհրաժեշտ տեղեկատվական և հաղորդակցական համակարգեր: Զբոսաշրջային տարածաշրջանի զարգացման գլխավոր ներուժը զբոսաշրջային ռեկրեացիոն ռեսուրսներն են՝ բնության և մարդու կողմից ստեղծված օբյեկտների այն ամբողջությունը, որն անհրաժեշտ է զբոսաշրջային ապրանքի ձևավորման և կառավարման համար: Զբոսաշրջային դեստինացիաների գործակալությունները /Destination management Organisation/ DMO, զբոսաշրջության տարածքային զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման հզոր գործիք: Զբոսաշրջային տարածաշրջանի զարգացմանն ուղղված ռացիոնալ և արդյունավետ գործունեությունն իր հերթին անհնար կլինի առանց տարածքի ռեկրեացիոն ներուժի գնահատման ոլորտում խոր ուսումնասիրությունների, քանի որ զբոսաշրջային տարածաշրջանների տարողունակության կանխատեսումը

[38] https://www.usaid.gov/sites/default/files/documents/2151/DMOworkbook_130318.pdf

հնարավորություն է տալիս որոշել թույլատրելի բեռնվածության չափը և դրա հիման վրա քայլեր ձեռնարկել տարածքի էկոլոգիական պաշտպանության, ռեսուրսային ներուժի ռացիոնալ օգտագործման, սպառված ռեսուրսների վերականգնման և զբոսաշրջային գործունեության իրականացման արդյունքում առաջացող բազմաթիվ տնտեսական, սոցիալ-մշակութային և այլ խնդիրների լուծման ուղղությամբ:

Այսպիսով, զարգացած տնտեսությամբ երկրներում ՝զբոսաշրջության տարածքային քաղաքականություն՝ հասկացությունը էականորեն նեղացված է: Դրանում ներառվում են պետության գործունեության միայն այն ուղղությունները, որոնցում տարածքային-տարածական նպատակների կենսագործումը գիտակցաբար դրված է առաջին տեղում: Ըստ որում, տարածքային միավորների գործունեությանը պետության միջամտության հիմնական խթան է հանդիսանում այսպես կոչված ՝սոցիալական արդարության՝ նպատակների իրագործումը, այսինքն՝ տարածքային միավորներում բնակչության կյանքի որակի, հետևաբար նաև՝ զբոսաշրջային տարածքային տնտեսությունների զարգացման մակարդակի անհամամասնության՝ չափից դուրս խորացման կանխումը: Տարածքային քաղաքականությունը զարգացած տնտեսությամբ երկրներում միշտ հիմնված է տարածական ընտրողականության սկզբունքի վրա, ըստ որում, այդ ընտրությունն իրականացվում է կառավարման կենտրոնական մարմինների կողմից՝տարբեր տարածքային միավորների խնդիրների ՝կշռման՝ և համեմատության արդյունքներով: Համաշխարհային տնտեսության գլոբալացման գործընթացն արտահայտվում է նյութական և ոչ նյութական ռեսուրսների ազատ փոխադրումներով, ազգային տնտեսությունների փոխազդեցության ոճով, որն էլ իր հերթին պայմանավորված է այդ նույն ազգային ռեսուրսների սահմանափակ քանակությամբ: Այս ամենը հանգեցնում է համաշխարհային տնտեսության սուբյեկտների տարածաշրջանների, երկրների միջև ծավալվող մրցակցային պայքարի սրացման: Նույն գործընթացի համատեքստում է զարգանում նաև միջազգային զբոսաշրջությունը, որն այսօր համաշխարհային տնտեսության

ամենաեկամտաբեր ճյուղերից մեկն է: Ամբողջ աշխարհում տեղի է ունենում զբոսաշրջության տարածքային պատկերի և զբոսաշրջային հոսքերի ուղղվածության արագընթաց փոփոխություն:

Զբոսաշրջությունը՝ որպես տնտեսական գործունեության տեսակ և որոշակի տարածքների յուրացման միջոց, վիթխարի նշանակություն է ձեռք բերել առանձին տարածաշրջանների և երկրների զարգացման հարցում: Այսօր միջազգային զբոսաշրջության տարածման աշխարագրությունն ապացուցում է, որ երկրագնդի ցանկացած անկյունում (ընդհուպ մինչև Հյուսիսային և Հարավային բևեռներ) հնարավոր է հայտնաբերել կամ ստեղծել յուրահատուկ զբոսաշրջային ռեսուրս՝ ծառայեցնելով այն զբոսաշրջային հոսքերի ներգրավման նպատակին[39]: Սակայն, մեր կարծիքով, չպետք է անտեսել նաև այն փաստը, որ զբոսաշրջային ծառայություններ արտադրող մեխանիզմ լինելուց բացի, տարածաշրջանն առաջին հերթին կենդանի սոցիալական գոյացություն է, որում փոխադարձ ադապտացման և փոխշահավետության սկզբունքով պետք է գոյատևեն թե՛ տեղի բնակչությունն իր բոլոր սոցիալական ինստիտուտներով, թե՛ հյուրընկալման համակարգը՝ տարածաշրջան ժամանող զբոսաշրջիկների հետ միասին, թե՛ շրջակա բնական միջավայրն իր էկոհամակարգերով:

Ամփոփելով փաստենք, որ ուսումնասիրված տեսություններից ելնելով արածքային զբոսաշրջությունն առանձնանում է հետևյալ առանձնահատկություններով.

- Իր բնույթով և գործունեության ելքային արդյունքով սոցիալական կառույց է, քանի որ նրա տված արտադրանքը այն ծառայություններն են, որոնք ուղղված են հանգստի, ժամանցի, ճանաչողության և այլ պահանջմունքների բավարարման միջոցով սպառողի ֆիզիկական և հոգևոր ուժերի վերականգնմանը:
- Ապահովում է սպասարկման բարդ հասարակական գործընթացի ամբողջ շրջափուլը՝ իր չորս հիմնական տարրերով. դրանք են՝ ծառայությունների արտադրությունը, փոխանակումը,

[39] Dean Carson, Jim Macbeth" Regional Tourism caes innovation in regional tourism'', Asutria 2005, p.49

տեղաբաշխումը և սպառումը: Այստեղ ի հայտ է գալիս զբոսաշրջային արդյունաբերության կարևորագույն հատկանիշներից մեկը՝ արտադրության և սպառման անբաժանելիությունը, քանի որ ծառայությունները չեն կարող պահեստավորել, և հետևաբար՝ դրանց արտադրության և սպառման պահերի միջև բացակայում է աշխարհագրական և ժամանակային տարածությունը:

➢ Հիմնվում է առկա ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման, վերարտադրության և նոր ռեսուրսների ստեղծման վրա:

Բազմաթիվ զբոսաշրջային տարածաշրջաններ գործում են սեզոնայնության սկզբունքով, որը հիմնականում կապված է բնակլիմայական պայմանների հետ, երբեմն էլ պայմանավորված է տեղի հասարակական կյանքի առանձնահատկություններով կամ տեղի ունեցող իրադարձությունների պարբերականությամբ[40]: Զբոսաշրջային ռեսուրսներն անսպառ չեն և ունեն որոշակի ծավալ, արժեք, օգտագործման ժամկետներ և շահագործման պայմաններ: Հետևաբար՝ զբոսաշրջային-ռեկրեացիոն ռեսուրսների կառավարումը պետք է ներառի դրանց հայտնաբերումը, գնահատումը, շահագործման պայմանների և պաշտպանության միջոցառումների մշակումը: Այստեղից բխում է, որ 'տարածքային զբոսաշրջություն' հասկացությունը ներկայանում է որպես բազմաթիվ շղթայված օղակներից կազմված բարդ համակարգ, որի բոլոր տարրերը, առանց մեկը մյուսին վնասելու, պետք է ներդաշնակորեն զարգանան և անպայման հաշվի առնվեն զբոսաշրջության ժամանակակից մենեջմենթի կողմից:

1.3. Զբոսաշրջության տարածքային զարգացման համաշխարհային փորձը

ՀՀ-ն իր աշխարհագրական դիրքով, տարածքային տնտեսությունների զարգացման մակարդակով, տարածքային տնտեսությունների հիմնախնդիրների առկայությամբ, մեր կարծիքով, առավել համադրելի է Եվրոպական Միության

[40] Shama K.K. "Tourism and regional development", UK 2014, p. 125

պետություններին, այդ իսկ պատճառով նպատակահարմար է ուսումնասիրել և դիտարկել այդ երկրների զբոսաշրջային տարածքային տնտեսությունների զարգացման կառավարման փորձը:

1950-70-ական թվականներին մեծ թվով զարգացած երկրներ, ձգտելով նվազեցնել զբոսաշրջության տարածքային սոցիալ-տնտեսական անհամաչափության աստիճանը, առավել զարգացած տարածքների և ագլոմերացիաների (առաջին հերթին՝ մայրաքաղաքային) նկատմամբ սկսեցին կիրառել զարգացումը սահմանափակող միջոցառումներ[41]: Սակայն գլոբալացման, կապիտալի շարժունակության բարձրացման նոր պայմաններում այդ միջոցառումները բավարար արդյունավետություն չկարողացան ապահովել:

Հարկ է նշել, որ առհասարակ տարածքային տնտեսությունների զարգացման անհամաչափությունների վերացման կամ նվազեցման նպատակ հետապնդող պետական միջոցառումները ոչ թե միանգամյա գործողություններ են, այլ ներկայացնում են ամբողջական համակարգ: Այդ միջոցառումները, առաջին հերթին, իրագործվում և իրենց նպատակին են հասնում տևական ժամանակահատվածի: Պետք է հաշվի առնել, որ տարածքային տնտեսությունների զարգացման քաղաքականության համար բնութագրական ժամանակաշրջանը չափվում է տասնամյակներով[42]: Օրինակ, եվրոպական զարգացած երկրներում այսօր կան խնդրահարույց տարածքներ, որոնք 1930-ական թվականներից մինչ օրս ստանում են պետական օժանդակություն[43]: Բացի այդ, տարածքային զարգացման անհամամասնությունների հաղթահարման պետական միջոցառումները միավորված են միասնական ՝տրամաբանական՝ համալիրներում: Դրանց կենսագործման տարածված ձևեր են տարածքային զարգացման ծրագրերը:

Համաշխարհային պրակտիկայում գոյություն ունի ներգնա զբոսաշրջության տարածքային զարգացման պետական կարգավորման երեք մոտեցում:

---

[41] Joseph S. Chen Validating a Tourism development Tourism Management, 22. 2001, pp. 363-367

[42] European regionalpolicy an inspiration for countries outside rhe EU. Applying the principles, sharing the lessons, exchanging experience. EU, 2009 pp.10-16

[43] նույնը

Առաջին մոտեցումը ենթադրում է, որ զբոսաշրջության տարածքային զարգացման խնդիրները լուծվում են շուկայական տնտեսության սկզբունքներով տնտեսվարող սուբյեկտների կողմից: Այս մոտեցման կիրառումը արդյունավետ է զարգացած երկրներում, որտեղ առկա են զարգացած ենթակառուցվածքներ, զբոսաշրջիկների անվտանգության պահպանման համակարգ, բանկային, ապահովագրական ծառայությունների և բուժսպասարկման բարձր մակարդակ: Նման մոտեցման հիմնական պայմանն այն է, որ երկիրը միջազգային զբոսաշրջիկների համար պետք է լինի գրավիչ բոլոր առումներով և համաշխարհային շուկայում հատուկ գովազդի կարիք չպետք է ունենա: Այս դեպքում զբոսաշրջության պետական կարգավորման հատուկ մարմինների առկայությունը պարտադիր չէ: Զբոսաշրջության կարգավորման այսպիսի մոդել ձևավորվել է ԱՄՆ-ում, որը հիմնավորվում է նրանով, որ ԱՄՆ-ն պահպանում է իր կայուն դիրքերը միջազգային զբոսաշրջային շուկայում, և մասնավոր զբոսաշրջային կազմակերպությունները կարող են ինքնուրույն անցկացնել գովազդային ակցիաներ ի շահ ազգային շուկայի:

Երկրորդ մոտեցումը ենթադրում է հատուկ պետական մարմնի ստեղծում, որն օժտված կլինի զգալի լիազորություններով և ֆինանսական ռեսուրսներով: Պետական հատուկ մարմնի ստեղծումը արդյունավետ է այն դեպքում, երբ ներգնա զբոսաշրջությունը պահանջում է զբոսաշրջային արտադրաքի և զբոսաշրջային ենթակառուցվածքի ստեղծման և այն բարձր մակարդակի վրա պահելու հնարավորություն, ինչպես նաև՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման, փոքր և միջին բիզնեսի աջակցման, միջազգային զբոսաշրջիկների անվտանգության պահպանման համար զգալի միջոցների ներգրավում: Զբոսաշրջության պետական կարգավորման նման մոտեցումը տարածված է հիմնականում զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում: Այդ երկրներից են՝ Թուրքիան, Թունիսը, Բուլղարիան, Եգիպտոսը և այլ երկրներ, որտեղ գործում են զբոսաշրջության նախարարություններ:

Երրորդ մոտեցման էությունն այն է, որ զբոսաշրջության պետական կարգավորումն իրականացնում է բազմաֆունկցիոնալ նախարարությունը (օրինակ՝ տնտեսական քաղաքականության նախարարությունը Ֆրանսիայում, տնտեսական զարգացման և առևտրի նախարարությունը Ռուսաստանում, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը Հայաստանում և այլն): Նախարարության կառուցվածքում ստեղծվում է հատուկ մասնագիտացված ստորաբաժանում, որը զբաղվում է նորմատիվ-իրավական բազայի մշակմամբ և կատարելագործմամբ, միջազգային զբոսաշրջության զարգացման հարցերով, իրականացնում է նախարարությունների, գերատեսչությունների և տարածքային իշխանությունների կոորդինացում, միջազգային զբոսաշրջության զարգացման հարցերով այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ հաստատում է կապեր, իրականացնում է զբոսաշրջային արտադրանքի տեղեկատվական սպասարկումը և գովազդը միջազգային շուկայում: ՀՀ-ում այդ հարցերով զբաղվում է Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կառուցվածքում գործող զբոսաշրջության կոմիտեն:

Հարկ է նշել, որ ներգնա զբոսաշրջության ոլորտում զգալի հաջողությունների հասած որոշ զարգացած եվրոպական երկրներ, այդուհանդերձ, ունեն զբոսաշրջության տարածքային զարգացման խնդիրներ: Այդ երկրներից կարելի է առանձնացնել Ֆրանսիան և Իտալիան: Մասնավորապես Ֆրանսիայում զբոսաշրջության զարգացման գլխավոր առանձնահատկությունն այն է, որ Փարիզի շրջանը զգալի գերազանցել է երկրի այլ տարածքներին: Հաշվի առնելով այդ փաստը՝ կառավարությունը միջոցներ է կիրառել զսպելու զբոսաշրջիկների հոսքը Փարիզ և խթանելու առավել խնդրահարույց շրջանների զարգացումը: Այդ կապակցությամբ դոտացիաներ են տրամադրվել այդ շրջաններին զբոսաշրջության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու համար՝ առաջին հերթին ենթակառուցվածքների զարգացման համար: Պետական տարբեր լծակներ են օգտագործվել տեղի ձեռնարկատիրության խթանման և մասնավոր կապիտալի ներգրավման համար: Զբոսաշրջության տարածքային զարգացման քաղաքականության մշակման գործում

կարևոր դեր է խաղում Ֆրանսիայի Ծրագրերի տեղայնացման կոմիտեն:

Ֆրանսիայում զբոսաշրջության մասին օրենքով կարգավորվում են հարաբերությունները զբոսաշրջային արտադրանք առաջարկողի և սպառողի միջև: Օրենքում նշված են նրանց իրավունքներն ու պարտականությունները, որոնք պետք է ամրագրված լինեն պայմանագրի մեջ: Օրենքով նաև սահմանված է զբոսաշրջային արտադրանք վաճառողի պատասխանատվությունը՝ իր փաթեթի մեջ ներառված ծառայությունների որակի համար, ինչպես նաև այն դեպքերը, որոնք բացառում են նման պատասխանատվությունը: Օրենքում նշված են նաև խախտողների դեմ կիրառվող պատժամիջոցները և պետական մարմինների վերահսկողության մեխանիզմները[44]:

Ֆրանսիայում պետական կարգավորման հարցերով զբաղվում է Տրանսպորտի և հանրային աշխատանքների նախարարությունը, որի կառուցվածքում գործում են Զբոսաշրջության հարցերով պետքարտուղարությունը և Զբոսաշրջության վարչությունը: Բացի վերը նշվածներից, գոյություն ունեն նաև մի շարք այլ մարմիններ, որոնք զբաղվում են զբոսաշրջության պետական կարգավորման հարցերով՝ խորհրդատվական ձայնի իրավունքով, դրանք են[45].

- Տրանսպորտի և հասարակական աշխատանքների նախարարության զբոսաշրջության խորհուրդը,
- Զբոսաշրջային ինժեներինգի ֆրանսիական գործակալությունը և Զբոսաշրջության ազգային հսկիչ խորհուրդը (մարքեթինգային ուսումնասիրություններ և վիճակագրություն),
- Արձակուրդային ճանապարհորդությունների ազգային գործակալությունը (սոցիալական զբոսաշրջություն),
- Ֆրանսիայի բարեկարգման ազգային կոմիտեն (քաղաքների կանաչ ապատման և բնապահպանական հարցեր):

Տարածքներում գործում են կենտրոնական գործադիր իշխանության ներկայացուցիչները, որոնք զբոսաշրջային ոլորտի

[44] https://en.wikipedia.org/wiki/Minister_of_Tourism_%28France%29

[45] Էլիզբարյան Ն. Ա «Զբոսաշրջային տարածքային զարգացման կառավարման համաշխարհային փորձը» Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում, Երևան 2015թ. էջ 412-416

զարգացմանը վերաբերող հարցեր են լուծում և անմիջականորեն ենթարկվում վերադասներին:

Միջազգային շուկայում Ֆրանսիայի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի առաջխաղացմամբ զբաղվում է “Maison de la France” ասոցիացիան, որն առաջացել է 1987թ. տեղական ադմինիստրացիաների, զբոսաշրջային ֆիրմաների, հյուրանոցների, էքսկուրսիոն օբյեկտների ադմինիստրացիաների միջև համագործակցության ձևավորման արդյունքում: Ներկայումս ասոցիացիան ունի մոտ 800 անդամ: Ասոցիացիայի աշխատակազմում ներգրավված է մոտ 200 աշխատող և 33 ներկայացուցչություն աշխարհի 26 երկրներում: Ասոցիացիայի ղեկավար մարմինը 27 մարդուց բաղկացած տնօրենների խորհուրդն է, նրանցից 1/3-ը պետական պաշտոնյաներ են, 2/3-ը կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ասոցիացիայի գործունեության 60%-ը ֆինանսավորվում է պետբյուջեից [46]:

Իտալիան ունի բարդ տարածքային կառուցվածք, որն արտահայտվում է նրա հյուսիսի և հարավի սոցիալ-տնտեսական մակարդակների էական տարբերությամբ: Հետամնաց շրջաններում զբոսաշրջության զարգացման կարգավորման նպատակով ստեղծվել է հատուկ գործակալություն, որն ի սկզբանե ստեղծված էր ենթակառուցվածքների զարգացմանն աջակցելու համար, այնուհետև նրան փոխանցվեցին արտադրական նախագծերի ֆինանսավորման և կարգավորման, վարկային և հարկային խթանման քաղաքականություն վարելու լիազորություններ[47]:

1983թ. ընդունվեց զբոսաշրջության և հյուրանոցային ոլորտի կատարելագործման և զարգացման հիմնական օրենքը: Օրենքում նշված են զբոսաշրջության կառավարման տարածքային մարմինները, դրանց գործառույթները, տրված են զբոսաշրջային կազմակերպության, ինչպես նաև՝ հյուրանոցային տնտեսության սահմանումները, դրանց գրանցման կարգը և դասակարգումը, նշված են այն պայմանները, որոնց դեպքում տրանսպորտային և

[46] https://en.wikipedia.org/wiki/Minister_of_Tourism_%28France%29
[47] http://www.tourvest.ru/articles/article0009
[47] Белорусский журнал международного права и международных отношений 2004 — № 4 международные экономические отношения, “международный опыт регулирования въездного туризма”, Милена Акопян, с. 15. (http://evolutio.info/index.php?option=com_content&task=view&id=726&Itemid=55)

զբոսաշրջային բյուրոներին, հասարակական կազմակերպություններին թույլատրվում է զբաղվել զբոսաշրջային գործունեությամբ, կարգավորվում է զբոսաշրջային ոլորտում մասնագետների գործունեությունը, սահմանված են պետական աջակցության ձևերը և այլն:

Զբոսաշրջության դեպարտամենտը մտնում է Արտադրական գործունեության նախարարության կազմի մեջ: Դեպարտամենտի հիմանական գործառույթներից են՝ տարածքային զբոսաշրջային ծառայությունների կարգավորումը, իրավաչափորոշիչային ակտերի մշակումը, վիճակագրական տվյալների ուսումնասիրումն ու մշակումը, ինչպես նաև միջազգային գործունեությունը (միջկառավարական համաձայնագրեր, միջազգային կազմակերպությունների և ԵՄ-ի հետհարաբերությունները)[48]:

Տեղական զբոսաշրջային ծառայությունների իրավասությունները նույնպես բավականին լայն են: Նրանք իրենց տարածքներում զբաղվում են զբոսաշրջային գործունեության լիցենզավորման բոլոր հարցերով, իրականացնում են հյուրանոցների դասակարգումը, իրավունք ունեն գովազդել և առաջարկել իրենց զբոսաշրջային արդյունքները երկրի ներսում և արտասահմանում:

Այնուամենայնիվ միջազգային զբոսաշրջային շուկայում Իտալիան ներկայացնելու գլխավոր դերը պատկանում է Զբոսաշրջության ազգային վարչությանը (ENIT), որի հիմանական գործառույթներն են՝ գովազդատեղեկատվական աշխատանքները, մարքեթինգային ուսումնասիրությունները, տեղական զբոսաշրջային ծառայությունների միջազգային գործունեության կարգավորումը[49]: ENIT-ն ենթարկվում է Զբոսաշրջության դեպարտամենտին և ամբողջությամբ ֆինանսավորվում է պետբյուջեից: ENIT-ի աշխատակազմում 200 մարդ է աշխատում, այդ թվում՝ 16 երկրների 20 ներկայացուցչությունների աշխատակիցներ: Տարածքային զարգացման ազգային ծրագրերի հետ մեկտեղ գործում են նաև զբոսաշրջային տարածքային զարգացման ծրագրեր վերազգային մակարդակով:

[48] http://www.uetitalia.it/en/" The Other side of Tourism
[49] http://www.uetitalia.it/en/" The Other side of Tourism

Անգլիայում 1999 թվականին ստեղծվեցին ինը «Շրջանային զարգացման գործակալություններ» (Regional Development Agencies, այսուհետ՝ RDA), որոնց գործունեությունն ունի երեք հիմնական բաղադրիչ. առաջինը՝ նրանք հավաքում են տվյալներ և մշակում շրջանային տնտեսական ռազմավարություններ, երկրորդը՝ նրանք ունեն իրենց սեփական ռեսուրսները, որոնք կարող են ներդնել վերլուծական ծրագրերում, ուսուցման և զարգացման ոլորտներում, և երրորդը՝ նրանք փորձում են ազդել այլ մարդկանց/կազմակերպությունների վրա՝ ներդրումները և բիզնես գործունեությունը ներդաշնակեցնելու նպատակով: Այդ գործակալությունները ֆինանսավորվում են վեց տարբեր պետական դեպարտամենտների կողմից հատկացվող միջոցների փուլից, որոնք բոլորն էլ շահագրգռված են նշված շրջանների տնտեսական զարգացման խթանման գործում: Այդ գործակալությունները կառավարում են նաև տարածաշրջանային մակարդակով գործող կազմակերպություններից (օրինակ՝ Տարածաշրջանային զարգացման եվրոպական հիմնադրամ) հայթայթված միջոցները: RDA-ի կողմից Անգլիայում իրականացված վերլուծության արդյունքների համաձայն՝ ներդրված յուրաքանչյուր ֆունտ ստերլինգի դիմաց նրանք շրջանի համար ապահովում են £4.50 վերադարձելիություն՝ հզորացված առևտրային գործունեության և այլ միջոցներով: Անգլիայի շրջանային զարգացման գործակալություններից մի քանիսն (օրինակ՝ One North East-ը) իրականացնում են հատուկ զբոսաշրջային ծրագրեր: One North East շրջանային զարգացման գործակալությունը ստանձնել է տվյալ շրջանի զբոսաշրջային խորհրդի գործառույթները (խորհրդատվություն և զբոսաշրջային բիզնեսների ուղղորդում, սկսնակ բիզնեսների ֆինանսավորում, հետազոտությունների համակարգում/թեմատիկ ընտրություն, վիճակագրական տեղեկությունների հավաքում և խթանման ծառայությունների մատուցում), ինչպես նաև՝ դեպի շրջան զբոսաշրջային այցելությունների ռազմավարության մշակման իրավասությունը: Գործակալությունը ստեղծել է զբոսաշրջության խորհրդատվական խորհուրդ, որի կազմում ներառվում է 10-ից 18 հոգի, որոնք պատասխանատու են

զբոսաշրջային բիզնեսներին և շրջանի գրավչությունն ապահովող կազմակերպություններին տրամադրվող աջակցության և զարգացման գործընթացների վերահսկողության համար:

Մեծ Բրիտանիայում մշակույթի և սպորտի նախարարությանը կից գործում է Բրիտանական զբոսաշրջային ծառայությունը (British Tourist Authority), որի հիմնական խնդիրն է բրիտանական զբոսաշրջային արտադրանքի առաջխաղացումը արտասահմանում[50]: Դրա համար ծառայությունն իրականացնում է գովազդային միջոցառումներ իր արտասահմանյան գրասենյակների ցանցի, մամուլի, հեռուստատեսության և ռադիոյի միջոցով, կազմակերպում է միջազգային գիտաժողովներ, առաջարկում է մարքեթինգային և խորհրդատվական ծառայություններ զբոսաշրջության զարգացման հետ կապված, թողարկում է տեղեկատվական նյութեր: Կազմակերպության կազմում զբաղված է 300 աշխատող, որոնց միայն 30%-ն է աշխատում Լոնդոնում, մնացածը՝ աշխարհի 26 երկրներում: BTA-ն իր կազմակերպաիրավական ձևով մասնավոր ձեռնարկատիրական ընկերություն է համարվում: Կազմակերպությունը գլխավորում է 5 հոգուց բաղկացած տնօրենների խորհուրդը և նախագահը: Այն, բացի զբոսաշրջային տեղեկատվության տարածումից և ցուցահանդեսներում մասնակցելուց, մատուցում է վճարովի խորհրդատվական և մարքեթինգային ծառայություններ, կազամկերպում է ցուցահանդեսներ և սեմինարներ, օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ իրականացնում է տարբեր նախագծեր, հրատարակում և իրացնում է զբոսաշրջային ուղեցույցեր, տեսաֆիլմեր և այլ տեսակի գովազդային–տեղեկատվական նյութեր: BTA-ի գործունեության 2/3-ը ֆինանսավորվում է պետբյուջեից:

Իսպանիայում զբոսաշրջային գործունեությունը համազգային մակարդակով սահմանվում է §Զբոսաշրջության ոլորտում իրավասության մասին¦ օրենքով 1965թ.-ից ի վեր: Բացի համազգային օրենքից, Իսպանիայում 17 ինքնավար շրջաններից յուրաքանչյուրն ունի զբոսաշրջության մասին իր սեփական օրենքը, որի իրավական հիմքը համազգային օրենքն է: Իսպանական զբոսաշրջային օրենսդրությունը կարգավորում է

[50] http://www.velascolawyers.com/en/civil-law/130-consumer-rights-in-the-travel-and-tourism-industry-in-spain.html

հարաբերությունները զբոսաշրջիկի և զբոսաշրջային արդյունք վաճառողի միջև, պայմանները, որի դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձանց թույլատրվում է զբաղվել զբոսաշրջային գործունեությամբ, զբոսաշրջային ծառայությունների տրամադրման կարգը, պետական վերահսկողության միջոցները և իրավախախտումների դեպքում պատասխանատվությունը: 1996թ. ապրիլին Իսպանիայի խորհրդարանը հաստատեց 'Կոմբինացված ճանապարհորդությունների մասին' օրենքը, որով հստակ սահմանվեցին ինչպես սպառողների, այնպես էլ տուրիստական գործակալության իրավունքներն ու պարտականությունները: Կոմբինացված ճանապարհորդությունը զբոսաշրջային արտադրանք է, որը ներառում է իր մեջ ստորև նշվածներից առնվազն երկուսը.

- տրանսպորտ,
- գիշերակաց,
- ցանկացած այլ զբոսաշրջային ծառայություն:

Նշված է տեղեկագրերում հետևյալ տվյալների առկայության անհրաժեշտությունը.

- ճանապարհորդության վերջնակետը և տևողությունը,
- տրանսպորտի տեսակը,
- գիշերակացի ձևը,
- ճանապարհորդության արժեքը,
- լրացուցիչ առաջարկները,
- ճանապարհորդությունից հրաժարվելու պայմանները:

Եթե առաջարկված ճանապարհորդությունը չի համապատասխանում տեղեկագրում նկարագրվածին, զբոսաշրջիկը կարող է հայց ներկայացնել: Ընդունելով վերը նշված օրենքը՝ Իսպանիան իր ազգային օրենսդրությունը համապատասխանեցրեց 1990թ-ի զբոսաշրջային ծառայությունների մասին ԵՄ դիրեկտիվին[51]:

Իսպանիայում զբոսաշրջության հարցերով զբաղվում է Առևտրի, զբոսաշրջության և մանր բիզնեսի պետական քարտուղարությունը, որը գործում է էկոնոմիկայի նախարարության ենթակայության ներքո: Բացի վերը նշվածից,

[51] http://www.velascolawyers.com/en/civil-law/130-consumer-rights-in-the-travel-and-tourism-industry-in-spain.html

էկոնոմիկայի նախարարության ենթակայության ներքո են գտնվում[52]՝

- Զբոսաշրջության կենտրոնական տնօրինությունը, որը զբաղվում է վարչական հարցերով և զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության ընդհանուր ուղղությունների մշակմամբ,
- “Paradores” պատմական արժեք ունեցող շինություններում տեղակայված հյուրանոցային շղթաէ,
- երկու ցուցահանդես-կոնգրեսային կենտրոններ Մադրիդում և Մալագայում և Զբոսաշրջության իսպանական ինստիտուտը՝ “Turespaca”-ն, որը զբաղվում է միջազգային զբոսաշրջիկների ներգրավմամբ, իրականացնում է գովազդային գործունեություն:

Կազմակերպությունն ունի ներկայացուցչությունների լայն ցանց ինչպես Իսպանիայում, այնպես էլ 29 ներկայացուցչություն աշխարհի 21 երկրներում: Ինստիտուտի գործունեությունը ամբողջությամբ ֆինանսավորվում է պետբյուջեից:

Էկոնոմիկայի նախարարության իրավասություններն այնքան էլ մեծ չեն: Լիցենզավորման, ծառայությունների սերտիֆիկացման գործառույթները տեղային իշխանությունների առանձնաշնորհն են: Նրանց գործունեության կոորդինացման նպատակով երկրում ստեղծվել է Զբոսաշրջության զարգացման խորհուրդ, որի կազմի մեջ մտնում են պետական իշխանության տարբեր մակարդակների և համապատասխան ոլորտի ձեռնարկությունների ներկայացուցիչներ: Խորհրդի գործունեությունը կրում է խորհրդատվական բնույթ:

Գերմանիայում ներգնա զբոսաշրջությամբ զբաղվում է Էկոնոմիկայի նախարարության Ազգային զբոսաշրջային կոմիտեն, որի ներկայացուցչությունները գործում են աշխարհի 27 երկրներում: Ավստրիայում զբոսաշրջային ոլորտը կառավարում է Էկոնոմիկայի նախարարությունը, իսկ Ավստրիայի զբոսաշրջային հնարավորությունների զովազդմամբ զբաղվում է Ավստրիական ազգային զբոսաշրջային գրասենյակը, որն ունի ներկայացուցչություններ աշխարհի 26 երկրներում[53]:

---

[52] Նույն տեղում:

[53] http://www.en.bmwfw.gv.at/Tourism/TourisminAustria/Seiten/default.aspx

Ծվեյցարիայում ներգնա զբոսաշրջության հարցերով զբաղվում է Զբոսաշրջության կենտրոնական տեսչությունը, որի հիմնական խնդիրներնը օտարերկրյա զբոսաշրջիկների ներգրավումը երկիր և երկրի ներսում զբոսաշրջային պահանջարկի ակտիվացումը: Այս կազմակերպության գործունեությունը հիմնականում ֆինանսավորվում է կառավարության կողմից: Այն ունի 20 ներկայացուցչություն 4 մայրցամաքներում: Զբոսաշրջության կենտրոնական գործակալությունը, ելնելով համաշխարհային և ներքին զբոսաշրջային շուկաների վիճակից, մշակում է ազգային մարքեթինգային ծրագիր ընթացիկ ժամանակաշրջանի համար:

Զարգացող և անցումային տնտեսությամբ երկրները, ինչպես նաև արդյունաբերական զարգացած երկրները շատ ընդհանրություններ ունեն միջազգային զբոսաշրջության քաղաքականության հարցերում: Սակայն նրանք բոլորն էլ ունեն իրենց առանձնահատկությունները ներգնա զբոսաշրջության կարգավորման գործում: Ենթակառուցվածքների զարգացումը, զբոսաշրջային ոլորտում ներդրումների ներգրավումը և ազգային զբոսաշրջային արտադրանքի առաջխաղացումը համաշխարհային զբոսաշրջային շուկայում այս երկրների զբոսաշրջային ծառայությունների գլխավոր խնդիրներն են: Չեխիայում ներգնա զբոսաշրջության հարցերով, զաբոսաշրջային ինդուստրիայի զարգացմամբ և զբոսաշրջային գրավչության բարձրացման հարցերով, ինչպես նաև զբոսաշրջության նոր տեսակների առաջխաղացմամբ զբաղվում է Ազգային զբոսաշրջային վարչությունը: Այն ստեղծվել է 1993թ. և գտնվում է Չեխիայի Տարածքային զարգացման նախարարության ենթակայության ներքո: Նրա մարքեթինգային ռազմավարությունն առաջին հերթին կողմնորոշված է դեպի այն երկրները, որոնցից ամենից շատ զբոսաշրջիկներ են այցելում Չեխիա: Ազգային զբոսաշրջային վարչությունը օտարերկրյա և չեխական զբոսաշրջային ֆիրմաների համար կազմակերպում է ճանաչողական տուրեր, Չեխիայի տարածքով վարում է զբոսաշրջային բիզնեսի մասնագետների համար նախատեսված (www.CzechTourism.cz) էքսկուրսիաներ և հանգստի

անցկացման առաջարկների վեբ կայքեր (www.kudyznudy.cz), անցկացնում է աշխարհի ամենահին զբոսաշրջային թեմատիկայով ֆիլմերի փառատոնը, Չեխիայի տարածքում համագործակցում է տեղեկատվական կենտրոնների հետ: ¦Czechtourism'-ը իրականացնում է գովազդային միջոցառումներ օտարերկրյա ԶԼՄ-ների միջոցով, Չեխիայի մասին հրապարակում և տարածում է նյութեր 17 լեզուներով, չեխերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով հրատարակում է պրեսս-ռելիզներ, ինչպես նաև՝ INFO-bulletin էլեկտրոնային ամսագիրը, որն արտացոլում է զբոսաշրջության, մշակույթի, սպորտի և տրանսպորտի բնագավառներում իրադարձությունները, աշխարհի բոլոր զբոսաշրջիկների համար վեբ կայք է վարում 18 լեզուներով (www.czechtourism.com), Հունգարայի, Լեհաստանի և Սլովակիայի հետ համատեղ վեբ կայք է վարում, տեղեկատվության առավել արդյունավետ տարածման նպատակով (www.european-quartet.com), ամեն տարի մասնակցում է ավելի քան 30 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների և տոնավաճառների, օտարերկրյա տուրօպերատորների համար կազմակերպում է ցուցահանդես "VISIT CZECHIA" խորագրով, օտարերկրյա ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար իրագործում է Չեխիա ժամանման ծրագրեր: Չեխիային՝ որպես զբոսաշրջային այցելության վայր ներկայացման գործում մասնակցում են CzechTourism գործակալության 27 ներկայացուցչություններ ամբողջ աշխարհով[54]:

Զբոսաշրջության ազգային հունգարական գրասենյակը (ԶԱՀԳ), որը ստեղծվել է 1994թ.-ին սկզբում Հունգարական զբոսաշրջային ծառայություն անվան տակ, ապա 1996թ. վերանվանվել է ԶԱՀԳ, միջազգային շուկայում առաջ է մղում Հունգարիայի զբոսաշրջային արդյունքը, այդպիսով ավելացնելով մուտքերը ներքին և ներգնա զբոսաշրջությունից, ստեղծելով նոր աշխատատեղեր, ավելացնելով ՀՆԱ-ն, ապահովելով տարածքային համաչափզարգացում և այլն: Նպատակներին հասնելու համար ԶԱՀԳ-ն կառուցում և բարելավում է Հունգարիայի՝ որպես զբոսաշրջային

54 OECD Tourism Trends and Policies 2014 - Hungary

կենտրոնի կերպարը, ավելացնում տեղեկացվածությունը դրա մասին, անմիջական աջակցություն է ցուցաբերում հունգարական զբոսաշրջային կազմակերպություններին ազգային և միջազգային շուկաներ ներխուժելու համար, իրականացնում է տարածքային համագործակցություն զբոսաշրջային գովազդի և մարքեթինգի բնագավառում ինչպես երկրի սահմաններում, այնպես էլ դրանից դուրս, զբոսաշրջային ինֆորմացիայով է ապահովում ներքին, միջազգային զբոսաշրջիկներին, ինչպես նաև օտարերկրյա զբոսաշրջային կազմակերպություններին[55]:

ՁԱՀԳ-ն իր գործունեությունն իրականացնում է գլխավոր գրասենյակի և ներքին ցանցի միջոցով, որը ներառում է Տարածքային մարքեթինգի դիրեկցիաները (ՏՄԴ) և Տարածքային զբոսաշրջային նախագծերի գրասենյակը (ՏԶՆԳ), օտարերկրյա ներկայացուցչությունները և “Tourinform” տեղեկատվական կենտրոնների ցանցը:

Տարածքային գրասենյակները պատասխանատու են տարածքների համաչափ զարգացման, գյուղական համայնքների տեղեկացվածության, ինչպես նաև՝ տարածքային ծառայություններ մատուցող կազմակերպություններին խրախուսելու համար: Նրանք համագործակցում են տարածքային ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ նրանց արտադրանքի զարգացման և բրոշյուրների կազմման հարցերում, ներկայացնում են այդ կազմակերպությունները ազգային և միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին: Տարածքային մարքեթինգի դիրեկցիաները գործում են յոթ զբոսաշրջային տարածքներում, իսկ երկու Տարածքային զբոսաշրջային նախագծերի գրասենյակները կարևոր դեր են խաղում ներքին զբոսաշրջության զարգացման հարցում: “Tourinform” տեղեկատվական կենտրոնների ցանցը զբոսաշրջիկներին ապահովում է Հունգարիայի զբոսաշրջային առաջարկների, ծառայություններ մատուցող կազմակերպությունների և սպասվող միջոցառումների մասին ամենաթարմ տեղեկատվությամբ: Tourinform”

[55] https://www.google.am/?gws_rd=ssl#q=Hungarian+National+Tourism+Office&start=10 "The operation of the Hungarian National Tourist office, Budapest, Vemezo" pp 15-25.

տեղեկատվական կենտրոններ գործում են նաև օդանավակայանում, որոնք օրական սպասարկում են 500 զբոսաշրջիկների[56]:

ՁԱՀԳ-ը ունի 19 ներկայացուցչություն աշխարհի 17 երկրներում, որոնք ապահովում են Հունգարայի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի կերպարի զարգացումը և հանրության տեղեկացվածությունը դրա մասին: Այդ նպատակով այն հրապարակում է հատուկ նպատակային շուկաների համար բրոշյուրներ, մասնակցում է միջազգային ցուցահանդեսներին, իրականացնում գովազդային միջոցառումներ, վարում է տեղեկատվական վեբ կայքեր զբոսաշրջիկների համար, կազմակերպում ճանաչողական այցեր և պրեսս-կոնֆերանսներ:

Շատ հետաքրքիր է Մալթայի զբոսաշրջության վարչության գործունեությունը և մոտեցումը զբոսաշրջության տարածքային զարգացման և կարգավորման հարցերում: Վարչության ներկայացուցչությունները գործում են աշխարհի տարբեր երկրներում է շեշտը դնում են տեղեկատվական և խորհրդատվական աջակցմանը այն տուրգործակալություններին, որոնք մասնագիտացված են դեպի Մալթաուղևորությունների ասպարեզում: Վարչությունը նաև կազմակերպում է ցուցահանդեսներ, պրեսս-տուրեր, հիմնում է մալթյան ակումբներ աշխարհի տարբեր երկրներում,որոնք միավորում են այն ընկերությունները,որոնք ընտրել են Մալթան որպես իրենց հիմնական ուղղություն, մասնակիորեն փախհատուցում է նրանց գովազդային ծախսերը: Եվրամիության շրջանակներում նման քաղաքականություն վարում են ԵՄ Նախարարների խորհրդին կից Տարածքային քաղաքականության կոմիտեն և Տարածքային զարգացման եվրոպական ֆոնդը, որը գործում է ԵՄ բյուջեի շրջանակում: Եվրոպական երկրներ միջազգային զբոսաշրջիկների ներգրավման գործում ոչ պակաս նշանակություն ունի Զբոսաշրջության եվրոպական հանձնաժողովը,որը ստեղծվել է 1948թ-ին Եվրոպան համաշխարհային շուկայում որպես զբոսաշրջային ուղղություն գովազդելու նպատակով: Այս կազմակերպության կազմի մեջ են մտնում ԵՄ

[56] https://www.google.am/?gws_rd=ssl#q=Hungarian+National+Tourism+Office&start=10 "The operation of the Hungarian National Tourist office, Budapest, Vemezo", 2015, pp 4-7:

երկրների առաջատար զբոսաշրջային կազմակերպությունները: Զբոսաշրջության եվրոպական հանձնաժողովի գլխավոր առավելությունն ընթացիկ ծախսերի ցածր մակարդակն է, ինչը թույլ է տալիս միջոցների հիմնական մասը ներդնել զբոսաշրջային կազմակերպությունների գործունեության մեջ արտասահմանում[57]:

Այսպիսով, կարելի է ընդհանրացնել, որ ԵՄ զբոսաշրջային քաղաքականությունն ուղղված է անդամ երկրներում զբոսաշրջության համաչափ զարգացմանը, ինչի համար մշակվել են ընդհանուր միջոցառումների գերակա ուղղությունները: Այդ միջոցառումների շարքին են պատկանում մաքսային և սահմանային հսկողության պարզեցումը, զբոսաշրջիկների անվտանգության բարձրացումը և նրանց պաշտպանությունը խեղաթյուրող գովազդներից, տեղեկացումը իրենց սոցիալական իրավունքների մասին, տարբեր երկրների հարկային քաղաքականության ներդաշնակեցումը, որակավորման և լիցենզավորման համընդհանուր կարգի ընտրությունը, արձակուրդային ժամանակաշրջանների համաձայնեցված բաժանումը, որը կթուլացնի լարվածությունը թեժ սեզոններին[58]:

Չնայած ձևավորված մոտեցումներին՝ յուրաքանչյուր երկիր ունի զբոսաշրջության տարածքային զարգացման կարգավորման իր առանձնահատկությունները, ուստի գրագետ համադրելով համաշխարհային փորձը և տեղական տարածային զարգացման յուրահատկությունները՝ պետք է հնարավորինս բացահայտել զբոսաշրջության տարածքային զարգացման առկա հիմնախնդիրները և պարզորոշել դրանց լուծման ուղիները:

[57] https://ec.europa.eu/growth/sectors/tourism/policy-overview_en

[58] Белорусский журнал международного права и международных отношений 2004 — № 4 международные экономические отношения, “международный опыт регулирования въездного туризма”, Милена Акопян (http://evolutio.info/index.php?option=com_content&task=view&id=726&Itemid=55)

ԳԼՈՒԽ 2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

2.1. Զբոսաշրջության դերի վիճակը ՀՀ-ում

Զբոսաշրջությունը տարածքային զարգացում ապահովող շարժիչ ուժերից է, որը նպաստում է մարզերի հավասարաչափ զարգացմանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանմանը: Հայաստանը, որպես զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային և բնական ռեսուրսներով հարուստ երկիր, մեծ ներուժ ունի միջազգային զբոսաշրջային շուկային առաջարկելու բազմաբնույթ, մրցունակ զբոսաշրջային արդյունք, որի համար անհրաժեշտ է որակավորված աշխատուժ, ներդրումներ, բարձրակարգ ենթակառուցվածքներ, հետազոտությունների ավելի ժամանակակից մեթոդներ, տեխնոլոգիաներ և նպաստավոր գործարար միջավայր, որոնք կենտրոնացված կլինեն ոչ միայն Երևանում, այլ նաև՝ մարզերում: Զբոսաշրջության տարածքային զարգացումն ուղղակիորեն պայմանավորված է զբոսաշրջային այցելություններից և դրանից ստացված եկամտի աճով[59]:

Գծապատկեր 2.1. 2010-2016թթ-ի ներգնազբոսաշրջիկների միջին տարեկան հավելաճի տեմպը[60]



Գծապատկերից զբոսաշրջության ոլորտի դերը տարածքային տնտեսության համար՝ անդրադառնանք ներգնա զբոսաշրջության

[59] www.ev.am/media/documents/brainwork/Case/Diaspora/brief.pdf
[60] Աղյուսակը կազմված է մեր մողմից ըստ ՀՀ ԱՎԾ ներգնազբոսաշրջիկների միջին տարեկան հավելաճի տվյալների հիման վրա:

զարգացման միտումներին: Զբոսաշրջության ոլորտի վերջին տարիների հիմնական ցուցանիշների դինամիկայի վերլուծությունից պարզ է դառնում, որ 2010-2016 թթ. ներգնա զբոսաշրջիկների միջին տարեկան հավելաճի տեմպը կազմել է շուրջ 21.5%[61]:

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2016 թվականին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է շուրջ 1 միլիոն 292 հազար՝ 1.0 տոկոսով ավել, քան 2015 թվականին[62]: Տարեկան զարգացման ծրագրերի իրականացման արդյունքում վերջին տարիներին գրանցվել է դինամիկ աճ, մասնավորապես՝ վերջին հինգ տարիներին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է շուրջ 9.0 տոկոս, իսկ ներքին զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը՝ 14.5 տոկոս[63]: Հարկ է նշել, որ չնայած Ցեղասպանության 100-ամյակի հիշատակի միջոցառումներին, ներգնա զբոսաշրջիկների այցելությունների 2015թ-ի ցուցանիշների քանակի աճ չի գրանցվել, և արձանագրվել է անկում շուրջ 1%-ի չափով[64]: Զբոսաշրջության չափաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում գնահատվում է 5%, զբոսաշրջության մեջ զբաղվածների չափաբաժինը ընդհանուր զբաղվածության մեջ՝ 6-7%[65]: Զարգացած երկրներում, որտեղ տնտեսությունը բազմակողմանի է, զարգացած զբոսաշրջության բաժինը ՀՆԱ-ում կազմում է 2%, իսկ զարգացող երկրներում, որոնցում զբոսաշրջությունը տնտեսության հիմնական և արտահանման ամենամեծ ծավալներ ապահովող ճյուղն է, զբոսաշրջության բաժինը կազմում է 10% և ավելի [66]: ՀՀ-ում զբոսաշրջության ընդհանուր բաժինը ՀՆԱ-ում կազմում է 8.2% (336.9 մլրդ դրամ)[67]: Այնուամենայնիվ,

---

[61] http://www.armstat.am/am/?nid=82&id=1882, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010-2017 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ըստ վիճակագրական հրապարակումների:

[62] www.armstat.am/html, Ներգնազբոսաշրջային այցելություններ, 2016, էջ 2:

[63] http://www.mineconomy.am/arm/39/gortsaruyt.html, Ներգնա զբոսաշրջային այցելություններ,2015, էջ 4

[64] Հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում հանգրվանածների հաշվառումն իրականացվել է միայն ԱՎԾ վիճակագրական ծածկույթում ընդգրկված հյուրանոցների և հյուրանոցային հանգրվանների վիճակագրական հաշվետվությունների հիման վրա, հետևաբար տվյալ ցուցանիշը իրականում ավելի բարձր կարող է լինել:

[65] www.wttc.com annual report 2014

[66] նույն տեղում:

[67] www.armstat.am .ՀՀ սոցիալ տնտեսական վիճակը 2012 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին:

զբոսաշրջությունից ստացվող եկամուտների համեմատական բաժինը ՀՆԱ-ում բավականին ցածր է այդ հատվածի հսկայական ներուժի համեմատությամբ[68]: 2014թ.-ի համեմատությամբ այդ ցուցանիշն աճել է 0.2 տոկոսային կետով 2015 թվականի համեմատ: 2014թ.-ի համեմատությամբ տոկոսային հարաբերությունը մնացել է նույնը՝ 2.169%: Այս ցուցանիշներն ունեն աճի միտում և, ի տարբերություն ՀՀ տնտեսության այլ ճյուղերի, որտեղ տատանումները մեծ են, վկայում են, որ ՀՀ-ում ավելի է կարևորվում զբոսաշրջությունը, որպես տարածքային զարգացման գործոն, որի զարգացման թիրախավորման պայմաններում կառուցվում են հյուրանոցներ, ներդրվում են գլոբալ հեռահաղորդակցության համակարգեր, միջազգային ինտեգրացումը էլ ավելի է մեծանում: Ընդհանուր և ուղղակի մասնաբաժինների տարբերությունը շեշտադրելիս հարկ է նշել, որ ուղղակի մասնաբաժինն արտացոլում է նախկին ծախսերի արժեքը, որն իր մեջ ներառում է ավիաընկերությունների, օդանավակայանների, հյուրանոցների, զբոսաշրջային ընկերությունների, մինչդեռ մյուս կողմից՝ զբոսաշրջիկների անմիջական ֆինանսական հարաբերությունները:

Աղյուսակ 2.1.

Զբոսաշրջության ցուցանիշների դինամիկան ՀՀ-ում 2010-2016թ[70]

	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ներգնազբոսաշրջիկներ, մարդ	684979	758694	843330	1082365	1203746	1192120	1259657
Արտագնա զբոսաշրջիկներ, մարդ	640032	714953	806555	1071254	1198060	1187369	1262687
Ներքին զբոսաշրջիկների քանակ, մարդ	435674	456432	489419	514771 6	669540	871888	979968
Զբոսաշրջային ծառայություններ արտահանում, մլն ԱՄՆ դոլար	366.44	445.45	473.31	473.94	470.0*	480.0	490.0
Զբոսաշրջային ծառայություններ ներմուծում, մլն ԱՄՆ դոլար	306.74	352.52	415.02	416.75	420.0*	430.0	430.15

Այսինքն՝ հարաբերությունների առանցքը զբոսաշրջիկն է, իսկ անուղղակին՝ իր մեջ ներառում է միջնորդավորված ծառայությունները, որոնք անուղղակի կապ ունեն զբոսաշրջիկների

[68] նույն տեղում:

[69] World travel and tourism Economic Impact (WTTC) 2012, p. 3.

[70] http://www.armstat.am/file/article/sv_01_15a_421.pdf

սպասարկման հետ, օրինակ՝ հյուրանոցների կողմից օդանավերի վառելիքի գնումները, նոր հյուրանոցի կառուցումը և այլն:

Ընդհանուր առմամբ, օտարերկրյա քաղաքացիների կողմից ՀՀ այցելությունների քանակը 2016թ-ին 2015թ-ի համեմատությամբ աճել է 5.6%-ով, ընդ որում՝ աճի ամենամեծ բաժինն ընկնում է Իրանին՝ 2.5%-ային կետով, իսկ ամենամեծ բացասական ազդեցությունը՝ Վրաստանը՝ 2.8%-ային կետով[71]: Առհասարակ, օտարերկրյա քաղաքացի ճանապարհորդների առումով հիմնական «դոնոր երկրներն են եղել ՌԴ-ն, Վրաստանը և Իրանը, համապատասխանաբար՝ 39%, 27% և 13% մասնաբաժնով: Ընդ որում՝ 2016թ-ին 2015թ-ի համեմատ առաջին երկու երկրների դեպքում արձանագրվել է ճանապարհորդների քանակի անկում՝ համապատասխանաբար 5%-ով և 9.5%-ով, իսկ Իրանի դեպքում՝ 24.4% աճ[72]: Եթե ՌԴ-ից ճանապարհորդների քանակի անկումը հիմնականում պայմանավորված է տնտեսական իրավիճակի վատթարացմամբ, մասնավորապես 2015թ-ին ռուբլի/դրամ միջին փոխարժեքի 28.15% անկմամբ, ապա Վրաստանի պարագայում ճանապարհորդների թվաքանակի անկման հիմնական պատճառը 2014թ-ի հոկտեմբերից Թբիլիսի-Մոսկվա պարբերական ուղիղ չվերթների վերագործարկումն է[73], որի արդյունքում Վրաստանի հազարավոր քաղաքացիներ սկսել են չօգտվել Երևան-Մոսկվա չվերթներից: Թեև եթե հաշվի առնենք, որ Վրաստանից Հայաստան կատարած այցելությունների մոտ 84%-ը բաժին է ընկնում ծագումով հայ քաղաքացիներին, իսկ նրանց (մասնավորապես ջավախահայության) եկամուտների զգալի մասը ստացվում է ՌԴ ռուբլով, ապա ռուբլու արժեզրկման հանգամանքը նույնպես որոշակի ազդեցություն է ունեցել այցելությունների թվաքանակի կրճատման վրա: Իրանի դեպքում այցելությունների աճը պայմանավորված է տնտեսական պատժամիջոցների վերացմամբ՝ պայմանավորված դրական սպասումներով[74] (տե՛ս աղյուսակ 2.2):

---

[71] http://www.tert.am/am/news/2016/03/31/ameria/1979635

[72] նույն տեղում:

[73] http://rbth.com/news/2014/10/27/aeroflot_resumes_regular_flights_between_moscow_tbilisi_40908.html

[74] [74] http://www.armstat.am/file/article/sv_01_15a_421.pdf

[74] http://www.armstat.am/file/article/sv_01_15a_421.pdf

[74] Հայաստան Միջազգային այցելությունների հետազոտություն 2013թ. հունվար- դեկտեմբեր:

[74] http://www.mineconomy.am/uploades/2013_

[74] Հայաստան Միջազգային այցելությունների հետազոտություն 2013թ հունվար- դեկտեմբեր ամիսներին, էջ 10-20:

Աղյուսակ 2.2.

Ներգնաճանապարհորդների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի %[75]

	Գործ-նական	Աշխատանք	Կրթություն	Բուժման	Հանգստի ժամանցի	Մարզական, մշակութ.	Հարազատներին այցելություն,	Ուխտագնաց.	Այլ	Ընդամենը
Ընդամենը	**12.18**	**3.86**	**2.15**	**8.47**	**14.4**	**1.5**	**51.22**	**0.28**	**5.95**	**100**
Նախկին ԽՍՀՄ երկրներ	**7.64**	**2.51**	**1.62**	**8.38**	**4.62**	**0.96**	**45.98**	**0.22**	**5.49**	**77.43**
ՌԴ	3.97	0.5	0.41	0.98	3.44	0.57	31.42	0.12	4.94	46.36
Վրաստան	2.54	1.77	1.12	7.37	0.69	0.21	12.63	0.09	0.41	26.83
Ուկրաինա	0.68	0.2	0.06	-	0.24	0.07	1.28	0.01	0.06	2.6
Բելառուս	0.24	0.01	0.03	-	0.17	0.06	0.36	-	0.03	0.89
Ղազախստան	0.14	0.01	-	0.02	0.05	0.05	0.15	-	0.04	0.45
Նախկին ԽՍՀՄ երկրներ այլ երկրներ	0.06	0.03	-	0.02	0.03	0.01	0.15	-	0.07	0.3
Մնացած աշխարհ	4.54	1.35	0.53	0.08	9.78	0.53	5.23	0.06	0.47	22.57
ԵՄ երկրներ	2.33	0.21	0.21	0.04	3.95	0.4	2.14	0.03	0.27	9.58
Գերմանիա	0.51	0.03	0.02	-	0.85	0.05	0.27	-	0.04	1.77
Լեհաստան	0.13	0.03	0.02	-	0.46	0.03	0.24	0.01	0.02	0.93
Իտալիա	0.16	-	-	-	0.43	0.04	0.08	-	0.02	0.73
Ֆրանսիա	0.09	-	0.04	-	0.35	0.04	0.23	-	0.02	0.78
Միացյալ Թագավորություն	0.3	-	0.01-	0.01	0.2	0.01	0.07	-	0.03	0.61
Չեխիա	0.08	-	0.02	-	0.33	-	0.21	0.01	-	0.63
Բելգիա	0.2	-	0.04	0.01	0.06	0.02	0.24	-	0.03	.57
Ավստրիա	0.18	-	0.03	-	0.16	0.02	0.06	-	0.01	0.47
Նիդեռլանդներ	0.07	0.01	0.01	-	0.17	-	1.16	-	0.01	0.46
Իսպանիա	0.07	-	-	-	0.19	0.01	0.16	-	0.01	0.45
Դանիա	0.04	-	-	-	0.15	0.05	-	-	-	0.26
Հունաստան	0.07	-	-		0.1	0.2	0.15	-	0.05	0.36
Շվեդիա	0.07	0.12	-	-	0.08	0.02	0.08	-	0.01	0.27
Բուլղարիա	0.04	-	-	--	-	0.02	0.03	-	-	0.24
Սլովենիա	0.05	-	-	-	0.11	-	0.02	-	0.01	0.18
Հունգարիա	0.19	0.02	0.04	-	0.06	0.01	0.02	-	0.03	0.13
Այլ ԵՄ երկրներ	**2.22**	**1.14**	**0.32**	**0.5**	**0.27**	**0.08**	**0.12**	**-**	**0.2**	**0.75**
Այլ երկրներ	**0.82**	**0.75**	**0.12**	**-**	**5.82**	**0.13**	**3.09**	**0.01**	**0.01**	**12.99**
Իրան	0.36	0.02	0.03	0.03	4.03	0.01	0.96	-	0.07	6.71
ԱՄՆ	0.26	-	0.04	-	0.33	0.02	0.8	-	0.02	1.65
ԱՄԷ	0.22	0.3	-	-	0.21	-	0.36	-	-	0.89
Թուրքիա	0.06	-	0.01	0.02	0.05	-	0.07	-	0.04	0.64
Կանադա	0.01	-	-	-	0.05	-0.02	0.19	0.01	-	0.37

[75] Նույն տեղում:

Իսրայել	0.04	-	-	-	0.21	-	0.05	-	0.03	0.27
Լիբանան	0.05		-	-	0.04	0.01	0.18		-	0.29
Ճապոնիա	-	0.01	-	-	0.22	0.01	-		0.02	0.29
Սիրիրա	0.1	-	0.07	-	0.03	-	0.14	0.01	-	0.2
Հնդկաստան	0.02	0.01	0.01	-	0.04	-	0.02	-	-	0.17
Չինաստան	0.07	0.01	0.04	-	0.05	-	0.02	-	-	0.18
Այլ	0.16	0.05-	0.01	-	0.4	0.04	0.09	-	0.02	0.87

Անցկացված հարցումների արդյունքները փաստում են, որ Հայաստան այցելած զբոսաշրջիկների ընկերներին և հարազատներին այցելության եկած զբոսաշրջիկներն իրենց ուղևորության ընթացքում ավելի հաճախ հանգրվանում են հարազատների և ընկերների տանը (93.83 %): Աշխատանքի, հանգստի կամ գործնական նպատակով այցելող զբոսաշրջիկները ավելի քիչ են հակված այդտեղ հանգրվանել (համապատասխանաբար՝ 15.37%, 19.06% և 22.04%): Հետաքրքիր է փաստել, որ մեծ թվով զբոսաշրջիկներ նախընտրում են հանգրվանել այդտեղ մարզական և մշակութային միջոցառումներին մասնակցելու համար (67.57%): Աշխատանքի և կրթության նպատակով ժամանած զբոսաշրջիկները առավել հաճախ հանգրվանում են վարձակալվող բնակարաններում կամ բարեկամի տանը: Առողջարաններում հանգրվանել են բուժման նպատակով այցելած զբոսաշրջիկների 0.84 %-ը. ըստ հարցումների՝ վերջիններս հիմնականում հանգրվանել են բարեկամի կամ հարազատի տանը: Հայկական ծագումով զբոսաշրջիկների մոտ 89.95 %-ը նախընտրել է հանգրվանել բարեկամի կամ հարազատի տանը, ինչը կարելի է ասել տրամաբանական է: Զբոսաշրջիկների 14.4%-ը եկել են հանգստի և ժամանցի նպատակով, 12.18%-ը՝ գործնական, 2.15%-ը՝ կրթության, 4.8%-ը՝ աշխատելու, 3.86%-ը՝ բուժման, 8.47%-ը՝ հարազատներին այցելության, 51.22%-ը՝ սպորտային և մշակութային միջոցառումներին մասնակցելու՝ 1.5%-ը, իսկ մնացած 5.95%-ը այլ՝ նպատակներով: (Տե՛ս աղյուսակ 2.3):

Աղյուսակ 2.3.

ՀՀ միջազգային այցելությունների ցուցանիշներն ըստնպատակի[76]

մարդ

	2015թ. հունվար-դեկտեմբեր	Տեսակարար կշիռը (2014թ. հունվար-դեկտեմբեր,%)	2016թ. հունվար-Դեկտեմբեր	Տեսակարար կշիռը (2015թ. հունվար-դեկտեմբեր,%)
Ժամանողներ[1] **Ընդամենը զբոսաշրջիկներ**	136 644	100.0	148 730	100.0
որոնցից ըստնպատակի				
Գործնական	41 172	30.1	47 472	31.9
հանգստի և ժամանցի	29 093	21.3	40 674	27.3
Կրթության	19	0.0	23	0.0
Բուժման	618	0.5	558	0.4
Այլ	65 742	48.1	60 003	40.3
Մեկնողներ[2] **Ընդամենը զբոսաշրջիկներ**	12 880	100.0	8 062	100.0
որոնցից ըստնպատակի				
Գործնական	840	6.5	766	9.5
հանգստի և ժամանցի	6 057	47.0	3 047	37.8
Կրթության	42	0.3	-	-
Բուժման	1 345	10.4	-	-
Այլ	4 596	35.7	4 249.0	52.7

Ուշագրավ են այն տվյալները, որոնցում գերակշռում են սփյուռքից ժամանած զբոսաշրջիկները. ուսումնասիրելիս ակնհայտ դառնում, որ նրանց 90.09 %-ը ժամանել է նախկին ԽՍՀՄ երկրներից, բնականաբար Ռուսաստանից, Վրաստանից (88.29 5)%, ընդ որում, նրանց հիմնական մասը ժամանել է հարզաատներին այցելելու նպատակով՝ 67.14%, և բուժման նպատակով 11.92 %, իսկ հանգստի ու ժամանցի նպատակով՝ընդամենը 3.85%-ը:

Հետազոտության արդյունքների ներգնա զբոսաշրջիկները հանգստի ու ժամանցի նպատակն ընտրել են, հատկապես, հաշվի առնելով Հայաստանի գրավիչ բնությունը՝ 28.6 %, արկածային զբոսաշրջությունը՝ 25.8 % և մշակույթը 25.4, ընդ որում, եթե ԵՄ երկրների համար առավել գրավիչ են բնությունը և մշակույթը՝ ապա այլ երկրներից ժամանած զբոսաշրջիկների համար արկածային զբոսաշրջությունը առավել գրավիչ է: Ինչ վերաբերում է բնությանը, ապա այն համեմատաբար գրավիչ է եղել Եվրամիության երկրների համար (Չեխիա, Իտալիան և այլն): Նշենք, որ այստեղ հայկական ծագմամբ զբոսաշրջիկների արդյունքները նույնպես արտացոլված են, և պատկերը գրեթե նույնն է, միայն այն տարբերությամբ, որ առավել շատ

[76] Հայաստան միջազգային այցելությունների հետազոտություն 2013 թ. հունվար-դեկտեմբերին:

նշվել է տարբերակներից §այլ¦պատասխանը:

Աղյուսակ 2.4.

Հայաստան այցելությունների տևողությունն ըստ այցելության նպատակի, %[77]

	Գործ-նական	Աշխատանք	Կրթություն	Բուժման	Մարզական, մշակութ. մասնակց.	Հանգստի և ժամանցի	Հարգա զառներին այցելություն	Ուխտագնաց.	Այլ	**Ընդամենը միջին**
1-3/օր	37.30	58.60	9.57	50.50	25.83	18.05	15.22	30.00	12.87	22.91
4-6/օր	38.30	24.70	27.83	35.14	32.50	44.81	18.42	23.33	20.09	28.82
7-14/օր	14.27	2.66	29.13	5.19	21.25	21.75	21.23	16.67	28.10	18.95
15-21/օր	4.76	3.87	6.96	1.22	7.01	7.01	16.15	10.00	16.01	11.36
22 և ավելի/օր	5.37	10.17	26.52	7.96	8.38	8.38	28.98	20.00	22.92	19.96
Գիշերների միջին քանակը/օր	8.01	22.79	43.86	7.44	9.86	11.93	22.04	11.91	20.45	17.52

Հարցվողների մեծ մասը նշել է, որ Հայաստանում իրենց այցելության միջին տևողությունը 7-14 գիշեր է:

Հարկ է նշել, որ հայկական ծագումով զբոսաշրջիկների այցելությունների տևողությունը ամենաերկարն է (25.5 %): Հայաստան այցելած զբոսաշրջիկների անցկացրած գիշերների միջին քանակն ընկնում է այն զբոսաշրջիկներին, ովքեր Հայաստան են եկել կրթության կամ ընկերներին ու հարազատներին այցելության նպատակով՝ 43.86% և 22.04% գիշեր համապատասխանաբար: Նրանց այցելությունների ժամկետն ամենաբարձրն է՝ 22 և ավելի գիշեր տևողությամբ: Գործնական և աշխատանքի նպատակով ժամանած զբոսաշրջիկների մեծամասնությունը Հայաստանում մնացել է ընդամենը 1-7 գիշեր: Այսպես է պատասխանել գործնական նպատակով ժամանածների 75.6%-ը և աշխատանքի նպատակով ժամանածների 37.9%-ը: Հարցման արդյունքներով արձանագրվել է, որ Հայաստանում աշխատանքի նպատակով ժամանում են շատ կարճ ժամանակով, մասնավորապես աշխատանքի նպատակով ժամանողների 58.6%-ի կողմից նշվել է 1-3 գիշեր ժամանակահատվածը, իսկ 22 և ավել օր՝ 10.2 % կողմից:

[77] Հաշվետվություն 2013թ ՀՀ սահմանային անցման կետերում միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային հետազոտության արդյունքների մասին, էջ 1-10:

Հայկական ծագում ունեցող զբոսաշրջիկների շրջանում միակ նշանակալի տարբերությունն այն է, որ կրթության նպատակով այցելողների դեպքում գիշերների միջին քանակն ավելի մեծ է, քան միջին զբոսաշրջիկի դեպքում, բացի այդ, մեծ է նաև 22 գիշերից ավելի տևողությամբ այցելություն կատարած զբոսաշրջիկների տոկոսը:

Զբոսաշրջիկների կողմից մարզերում անցկացրած գիշերների քանակի առումով՝ առաջին տեղում **Երևանն** է՝ 64.9%[78], որին հաջորդում են **Արմավիրի, Գեղարքունիքի ու Շիրակի** մարզերը: **Շիրակի** մարզ այցելող զբոսաշրջիկները հիմնականում ժամանել են Հայաստան՝ ընկերներին և բարեկամներին հանդիպելու նպատակով, այդ իսկ պատճառով կացարանի վրա նրանց կատարած ծախսերը նշանակալի չեն[79]: Անժխտելի է, որ Երևանը Հայաստանի առավել շատ այցելուներ ունեցող վայրն է: Առկամիտումները ցույց են տալիս, որ զբոսաշրջիկները հակված են Երևանին մոտ տեղակայված վայրերն ավելի շատ այցելելու, բացառությամբ Արարատի մարզը, իսկ Երևանից առավել հեռու շրջաններն ամենամեծ դժվարություններն ունեն՝ կապված զբոսաշրջիկներ գրավելու հետ: Նշենք, որ հայկական ծագում ունեցող այցելուների քանակը նույնպես Երևանում է բարձր: Մարզային այցելությունների միջին գիշերակացը կազմել է 9.4 օր, ընդ որում ամենաերկար գիշերակացն արձանագրվել է Շիրակի և Լոռու մարզերում՝ համապատասխանաբար՝ 17.5 և 14.5 օր, իսկ ամենակարճը՝ Սյունիքի՝ (3.9 օր), Վայոց ձորի՝ (4.2 օր) և Արմավիրի՝ (4.4 օր) մարզերում: Երևանում այն կազմել է 10.8 օր: /Տես աղյուսակ 2.5/

Աղյուսակ 2.5.

Այցելության վայրերում գիշերակացի կառուցվածքն ըստ մարզերի

ՀՀ Մարզեր	Միջին գիշերակաց	Այլ
Երևան	*10.8*	*0.78*
Արագածոտն	*7.9*	*-*
Արմավիր	*4.4*	*0.01*
Գեղարքունիք	*6.0*	*0.10*
Կոտայք	*6.1*	*0.02*
Լոռի	*14.5*	*0.04*

[78] Հաշվետվություն 2013թ ՀՀ սահմանային անցման կետերում միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային հետազոտության արդյունքների մասին, էջ 1-10:

[79] Նույնը

Շիրակ	*17.5*	*0.01*
Տավուշ	*7.8*	*0.01*
Վայոց Ձոր	*4.2*	*0.00*
Արարատ	*7.3*	*0.00*
Սյունիք	*3.9*	*0.07*
Միջին այցերի քանակը	**9.4**	**3.02**

Աղուսակ 2.6. Այցելության վայրերի կառուցվածքն ըստ այցի նպատակի (%)

	Գործնական	*Աշխատանք*	*Կրթության*	*Բուժում*	*Հանգիստ և ժամանց*	*Մարզ. Աշակերտական միջոց*	*Այցելություն հարազատներ*	*Ուխտագնացություն*	**Ընդամենը**
Երևան	13.21	3.69	2.37	9.56	16.92	1.71	48.18	4.36	**100.0**
Արագածոտն	4.16	0.72	1.63	0.54	31.83	2.17	52.08	6.70	**100.0**
Արմավիր	8.28	0.37	1.41	0.62	33.44	2.21	49.57	4.15	**100.0**
Գեղարքունիք	3.94	0.56	1.13	0.50	46.86	1.25	48.06	3.79	**100.0**
Կոտայք	7.86	1.04	1.18	0.70	37.65	2.78	45.09	3.68	**100.0**
Լոռի	4.07	1.06	1.06	0.92	12.77	1.63	56.63	11.65	**100.0**
Շիրակ	6.12	0.98	1.50	6.19	12.77	1.63	56.29	16.01	**100.0**
Տավուշ	3.22	1.33	0.78	0.78	36.29	1.55	52.61	3.44	**100.0**
Վայոց Ձոր	2.58	1.10	1.10	1.84	51.93	1.47	37.94	2.40	**100.0**
Արարատ	3.42	1.14	1.28	1.14	48.2	1.85	39.94	2.20	**100.0**
Սյունիք	10.28	8.89	0.69	0.28	42.50	1.11	33.19	3.60	**100.0**

Ըստ նպատակի ճանապարհորդների այցելության տևողության հաշվարկված գիշերակացով, ամենաբարձր մասնաբաժինը նույնպես ընկնում է Երևանին՝ 51.0 %, որին հաջորդում է Շիրակի մարզը՝ 14.6 %,: Բոլոր մյուս վայրերից յուրաքանչյուրին ընկնում է զբոսաշրջիկների կողմից անցկացրած գիշերների 1.2-5 -ը %:

Երևանյան այցելություններում բարձր մակարդակ են ունեցել գործնական, կրթության և բուժման նպատակով այցերը, համապատասխանաբար՝ 76.9%, 88.7% և 78.4 %: Հարազատներին և բարեկամներին, ընկերներին այցելելու նպատակով այցերը գիշերակացի առումով ամենաբարձրն են եղել Արարատի և Գեղարքունիքի մարզերում՝ 87 % և 85%: /Տես աղյուսակ 2.9/

Աղյուսակ 2.9.

Այցելության վայրերում գիշերակացի կառուցվածքն ըստնպատակի (%)

	Երևան	Արագածոտն	Արմավիր	Գեղարքունիք	Կոտայք	Լոռի	Շիրակ	Տավուշ	Վայոց Ձոր	Արարատ	Սյունիք

Գործնական	**8.91**	**3.11**	**2.30**	**1.25**	**2.48**	**1.59**	**2.96**	**1.29**	**2.89**	**1.84**	**13.35**
Աշխատանք	**3.43**	**1.07**	**0.07**	**1.49**	**4.48**	**0.43**	**1.17**	**8.22**	**0.39**	**4.73**	**13.35**
Կրթություն	7.76	0.41	1.31	0.40	0.64	0.60	2.02	0.50	0.00	0.47	4.04
Բուժում	5.94	0.91	2.22	1.62	0.80	2.03	2.18	0.54	2.50	0.98	0.76
Հանգստի և ժամանցի	10.70	4.34	7.72	5.50	8.85	6.31	5.77	7.28	12.48	2.26	0.00
մարզական մշակույթին միջոցառումների մասնակցություն	1.35	0.09	0.73	0.44	1.49	0.69	1.19	0.21	0.44	0.08	12.09
Այցելություն հարազատների, ընկերների	57.48	77.17	77.18	84.79	73.18	76.23	70.32	75.97	70.61	86.97	0.25
Ուխտագնացություն	0.38	0.00	1.25	0.67	0.17	0.09	0.01	0.10	0.00	0.10	62.07
Այլ	1.04	12.89	7.22	3.84	7.92	12.03	14.39	5.87	10.69	2.57	0.43
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
Այլ	0.78	-	0.01	0.10	0.02	0.04	0.01	0.01	0.00	0.00	0.07
Միջին գիշերակաց, օր	10.08	7.9	4.4	6.0	6.0	14.5	17.5	7.8	4.2	7.3	3.9

Ստորև ներկայացնենք նաև գիշերակացի կառուցվածքն ըստ նպատակի այցելության ձևի համատեքստում:

Աղյուսակ 2.10.

Այցելության վայրերում գիշերակացի կառուցվածքն ըստնպատակի տոկոս

	գործնական	*Աշխատանք*	*Կրթություն*	*Բուժում*	*Հանգիստ և ժամանց*	*Մարզ. Մշակույթ միջոց*	*Այցելություն հարազատներ*	*Ուխտագնացություն*	**Ընդամենը**
Երևան	8.91	3.43	7.76	5.94	10.70	1.35	57.48	4.38	**100.0**
Արագածոտն	3.11	1.07	0.07	0.41	0.91	4.34	77.17	0.00	**100.0**
Արմավիր	2.30	0.07	1.31	2.22	7.72	0.73	77.18	1.25	**100.0**

Գեղարքունիք	1.25	1.49	0.40	1.62	5.50	0.44	84.79	0.67	**100.0**
Կոտայք	2.48	4.48	0.64	0.80	8.85	1.49	73.18	0.17	**100.0**
Լոռի	1.59	0.43	0.60	2.03	6.31	0.69	76.23	0.09	**100.0**
Շիրակ	2.96	1.17	2.02	2.18	5.77	1.19	70,32	0.01	**100.0**
Տավուշ	1.29	8.22	0.50	0.54	7.28	0.21	75.97	0.10	**100.0**
Վայոց Ձոր	2.89	0.39	0.00	2.50	12.48	0.44	70.61	0.00	**100.0**
Արարատ	1.84	4.73	0.47	0.98	2.26	0.08	86.97	62.07	**100.0**
Սյունիք	13.35	4.04	0.76	0.00	12.09	0.25	62.07	0.43	**100.0**

Զբոսաշրջության կացարաններում, ինչպիսիք են հյուրանոցները, B&B-ները, հոսթելները, կարճ ժամանակահատվածով հանգստի/ժամանցի, գործնական և սպորտային ու մշակութային միջոցառումներ) հյուրընկալության տվյալներով փաստվում է, որ ավելի մեծ թվով զբոսաշրջիկներ ներգրավելու նպատակով պետք է բարելավել մարքեթինգային քաղաքականությունը, ծառայությունների մատուցման որակը, ինչը հնարավորություն կտա նաև ավելացնել զբոսաշրջիկների կատարած ընդհանուր ծախսերը[80]:



Գծապատկեր 2.2. ՀՀ այցելած զբոսաշրջիկների կազմն ըստ Հայաստանի մասին ստացած տեղեկատվության աղբյուրի

Զբոսաշրջությունը էական նշանակություն ունի երկրի

[80] Էլիզբարյան Ն.Ա «Հիմնական զբոսաշրջային կենտրոնների զարգացման հեռանկարները ՀՀ-ում»,«Հայաստանի ճարտարագիտական ակադեմիա», /Լրաբեր- Երևան, 2014, հատոր 11, համար 2 էջ 231-234

տնտեսության և սոցիալական կյանքում, ուստի կարևոր է գնահատել ծառայությունների այն ծավալը, որը մատուցվում է ՀՀ ռեզիդենտների կողմից Հայաստանի տնտեսական տարածքում ճանապարհորդող ՀՀ ոչ ռեզիդենտներին կամ՝ ներգնա զբոսաշրջիկների ծախսերը Հայաստանում: Վերջին հաշվով այդ ծախսերի հիման վրա է հաշվարկվում նաև զբոսաշրջության ոլորտում առաջացած ավելացված արժեքը: Բացի այդ, ծախսերի չափերի և կառուցվածքի մասին տեղեկատվության հիման վրա պետք է մշակվի ոլորտի հետագա առաջմավարությունը:

Աղյուսակ 2.11.

2013թ. հունվար-դեկտեմբերին մեկ ներգնաճանապարհորդի ծախսերի կառուցվածքն ըստայցելության նպատակի և ճանապարհորդության կազմակերպման *ԱՄՆ դոլար*[1]

	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն	Այցելություն հարազատներին, ընկերներին	Ուխտագնացություն	Այլ	Ընդամենը, միջին
ՏՈՒՐ-ՓԱԹԵԹՈՎ										
Ընդամենը միջին ծախսեր	-	-	-	-	1330.8	-	-	-	-	1330.8
Ուղևորության միջին տևողությունը (օր)	-	-	-	-	7	-	-	-	-	7
Միջին օրական ծախսերը	-	-	-	-	179.5	-	-	-	-	179.5
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ										
Ընդամենը միջին ծախսեր	703.5	398.4	593.3	256.8	904.0	776.6	775.1	664.3	1196.7	726.0
Ուղևորության միջին տևողությունը (օր)	8	16	35	7	11	14	22	20	21	18
Միջին օրական ծախսերը	86.6	25.5	16.8	35.3	80.7	55.7	35.2	33.9	55.9	41.3
ՏՈՒՐ-ՓԱԹԵԹՈՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ										
Ընդամենը միջին ծախսեր	703.5	398.4	593.3	256.8	906.6	776.6	775.1	664.3	1196.7	839.5
Ուղևորության միջին տևողությունը (օր)	8	16	35	7	10	14	22	20	21	17
Միջին օրական	86.6	25.5	16.8	35.3	79.9	55.7	35.2	33.9	55.9	47.8

ծախսերը									

Ինչպես երևում է վիճակագրական վերլուծություններից, մեկ անձին ընկնող միջին և օրական ծախսերը տարբերվում են ըստ զբոսաշրջիկի այցելության նպատակի և ճանապարհորդության կազմակերպման ձևի: Բոլոր զբոսաշրջիկների համար միջին ծախսերը մեկ անձի հաշվարկով կազմում են 726.0 ԱՄՆ դոլար, այցելության միջին տևողությունը 17.4 օր է, իսկ միջին օրական ծախսերը կազմում են 41.3 ԱՄՆ դոլար: Քանի որ Հայաստան ճամփորդական փաթեթով այցելողները ընդհանուր զբոսաշրջիկների մեջ փոքր թիվ են կազմում, նրանց ծախսերը մեկ ուղևորության հաշվարկով ավելի մեծ են՝ կազմելով միջինում օրական 172.2 ԱՄՆ դոլար միջին տևողությամբ այցելության: (7.7) այս ընթացքում զբոսաշրջիկը մոտավորապես ծախսում է միջինում 1331.4 ԱՄՆ դոլար: Ի դեպ նշենք, որ ծախսերի մեծ բաժինն ընկնում է ԱՄՆ-ից ժամանող զբոսաշրջիկներն (2960 ԱՄՆ դոլար), իսկ ամենաքիչը ԱՄԷ-ից և Ռուսաստանից ժամանողներին՝ (համապատասխանաբար՝ 690.0 և 855.3 ԱՄՆ դոլար): Ինքնուրույն ճանապարհորդողների միջին ծախսերը կազմում են 711.0 ԱՄՆ դոլար, 17.6 օր ընդհանուր տևողությամբ և օրական ծախսերը՝ միջինում 40.3 ԱՄՆ դոլար:

Հայաստանը՝ որպես զբոսաշրջային դեստինացիա, ընդհանուր առմամբ զբոսաշրջիկների կողմից գնահատվել է բավարար: Լավագույն գնահատականները տրվել են զբոսավարների ծառայություններին, տեսարժան վայրերին, ռեստորաններում սննդի որակին, իսկ ամենացածր գնահատականները՝ ճանապարհներին և ծառայությունների գների մակարդակին: Այցելուների մեծամասնությունը նշել է, որ խորհուրդ կտա այցելել Հայաստան իր ընկերներին և հարազատներին: Այցելուների ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում միջազգային տրանսպորտային ծախսերին ու կացարաններին:

Հայաստան այցելած զբոսաշրջիկների մեծամասնությունը (80.%) նշել է կրկին այցելելու մտադրության կամ հետաքրքրվածության մասին: Հայաստան կրկին այցելելու ամենաքիչ ցանկությունն արտահայտել են գերմանացիները, որոնց 10.1%-ը պատասխանել է, որ մտադիր չէ վերադառնալ: Նրանց հաջորդում են ֆրանսիացիները՝ 4.2%, հույները և Սիրիայից ժամանած զբոսաշրջիկները:

Համաձայն կատարված զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության արդյունքների՝ Հայաստանում միջազգային զբոսաշրջիկների կատարած ծախսերը նույնպես դինամիկ աճում են: Համեմատության առումով նշենք նաև արտագնա զբոսաշրջիկների ծախսերի կառուցվածքը (տե՛ս հավելված 2.2.3): Արտագնա զբոսաշրջիկների ծախսերի կառուցվածքը ուսումնասիրելիս ակնհայտ է, որ մեր հայրենակիցների մեծ մասը գերադասում է հանգստանալ արտասահմանում, որտեղ զբոսաշրջային ծառայությունների մատուցման գնային քաղաքականությունը ավելի հրապուրիչ է: Արտագնա զբոսաշրջիկների ծախսերը կրճատում են ներուժային ներքին զբոսաշրջիկների կողմից կատարվող ծախսերը, ուստի այս առումով ներգնա զբոսաշրջությունը խթանելու համար անհրաժեշտ է որոշակի հետևություններ անել՝ մշակել միջոցառումների ծրագիր և այլն:

Հարկ է նշել, որ եթե առկա է հանրապետական մակարդակով Հայաստանի ներգնա զբոսաշրջության պատկերին առնչվող վիճակագրական տվյալների բավականին համեստ քանակություն, ապա մարզային կամ շրջանային, տարածքային մակարդակով զբոսաշրջությանն առնչվող գործունեության տեսակների պահանջարկի կամ առաջարկի մասին տվյալներ գործնականում չկան: Նշված բացը լրացնելու նպատակով, որպես ատենախոսության հետազոտության մաս, մեր կողմից իրականացվել են ինտերակտիվ գործնական հարցումներ զբոսաշրջության շուկայի տարբեր բնագավառներում աշխատող մասնագետների հետ: Հետազոտության ընթացքում կատարվել են Հայաստանի հարավային միջանցքի շրջաններում (Վայոց Ձորի և Սյունիքի մարզեր) այցելող զբոսաշրջիկների մասին քանակական և որակական վերլուծություններ: Ինչպես ցույց է տրվում աղյուսակում, մասնակիցները, որպես իրենց հարավային միջանցքի զբոսաշրջության առավել նշանակալից աղբյուր նշել են «պատմական վայրեր տուրերի, բնության, պատմամշակութային ժառանգության» շուկան: Շուկայի վերոթվարկյալ հատվածը ներառում է զբոսաշրջային այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են Նորավանքը, Տաթևը և Ձորաց քարերը: Ըստ մասնակիցների՝

զբոսաշրջային այլ նշանակալից շուկաներ նշվել են «արկածային զբոսաշրջությունը» (հետիոտն և հեծանվային արշավներ դեպի լեռներ, ժայռամագլցում, դահուկային մարզաաձևեր և այլն) և «գործարար/գործնական նպատակներով զբոսաշրջություն» դեպի Ջերմուկ,Գորիս և Սիսիան: Ինչ վերաբերում է այն շուկաներին, որոնք կարող են ունենալ ապագա աճի առավել մեծ ներուժ, ապա մասնակիցների կարծիքով դրանք ներառում են՝ «առողջության/բուժման նպատակներով» զբոսաշրջությունը (Medical Tourism), որն ունի մեծ հնարավորություն ընդլայնման (այն է՝ առողջարանային, առողջապահական և բուժական նպատակներով զբոսաշրջություն) և «արկածային զբոսաշրջությունը»: Նշենք, որ հարցվողների շրջանում առողջության նպատակներով զբոսաշրջության շուկան ունի ծախսումների ամենամեծ մակարդակը և հարավային միջանցք այցելելու ամենաերկար տևողությունը (7-10 օր): Առանձնացնենք նաև այն փաստը, որ հարավային միջանցք այցելող զբոսաշրջիկների տարբեր հատվածներ ունեն ամբողջ շրջանի վրա ազդելու պոտենցիալ, քանի որ իրենց շրջագայության ընթացքում նրանք այցելում են տարբեր տեսարժան վայրեր, ներգրավվում են տարբեր միջոցառումներում. մասնավորապես առողջարանային բուժման նպատակով շրջան այցելող զբոսաշրջիկները սովորաբար մնում են նույն վայրում՝ իրենց այցելության ողջ ընթացքում, մինչդեռ հարավային միջանցքի տարբեր շրջաններում պատմական տուրերի մասնակցող զբոսաշրջիկներն այցի ընթացքում շրջագայում են տարբեր վայրերով՝ զբոսաշրջային օպերատորի կողմից մշակված երթուղով: Հարավային միջանցքի զբոսաշրջության պատկերի ուսումնասիրությունը թերի կլինի, եթե չնշվի այն առանցքային դերը, որը կատարում են տեղերում տուր օպերատորները՝ զբոսաշրջային ծառայություններ մատուցողները: Դրանք այն կազմակերպություններն են, որոնք օգնում են կազմել շրջագայության երթուղին Հայաստանում՝ այն միջազգային զբոսաշրջիկների համար, ովքեր չունեն կամ չեն ցանկանում ինքնուրույն ձեռք բերել իրենց շրջագայության կազմակերպման համապատասխան ծառայություններ: Հայաստանում առկա է

զբոսաշրջային ծառայություններ մատուցող խիստ փոքրաքանակ անձանց մի ամբողջ «բանակ», որոնց մի մասն իրականացնում է հատուկ մասնագիտացում պահանջող գործունեություն, օրինակ՝ ժայռամագլցում, իսկ մյուսներն օգնում են զբոսաշրջիկներին ընտրություն կատարել Հայաստանում շրջագայելու ստանդարտ մի շարք երթուղիների փաթեթներից, ինչպես նաև ապահովում են, որ զբոսաշրջիկներն ունենան Հայաստանի ամենահայտնի և ճանաչված տեսարժան վայրերն այցելելու հնարավորություն: Սույն ատենախոսության շրջանակներում իրականացված մեր հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց թիվը մեծանում է, և նրանց օգնությամբ խրախուսվում է միջազգային զբոսաշրջիկների այցի տևողության երկարացումը, քանի որ նրանք քաջատեղյակ են այն բոլոր զբոսաշրջային արդյունքներին և գործունեության տեսակներին, որոնք երկիրն առաջարկում է: Ի լրումն սեմինար-քննարկումների՝ մեր կողմից իրականացվել են հեռախոսային զրույցներ մի շարք տուրօպերատորների զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց հետ, որոնց արդյունքները ներկայացվում են աղյուսակ 2.15-ում:

Աղյուսակ 2.15.
Զբոսաշրջային օպերատորների կողմից տրամադրված զբոսաշրջային ծառայություններ մատուցվող անձանց հետազոտության արդյունքներ[81]

Տուր օպերատոր	Գործունեության Տեսակ	Միտում	Այցի միջին տևողություն օր/օրեր		Կացարան
			Ընդամենը	արավաղ միջանց	
Արմենիա թրեվլ	Մշակութային, էկոզբոս., արշավներ, բուսաբանություն	Կայուն	10	2	Հյուրանոց,հուրատուն B&B, Վրանային ճամբար
Սաբերատուրս	Մշակութային, արկածային զբոս.	Կայուն	7	2	3-4 աստղանի հյուրանոց
Գոթրեվալ	Մշակութային, արկածային զբոս.	Կայուն	7	3	Հյուրանոց,հուրատուն B&B, Վրանային ճամբար

[81] Աղյուսակը կազմված է մեր կողմից համաձայն զբոսաշրջային օպերատորների կողմից տրամադրված տեղեկատվության ամփոփման/ Հայաստանի զբոսաշրջային ծառայություններ մատուցվող անձանց հետազոտության արդյունքներ:

Ավարայր	Արշավներ հեծանվային, տարածաշրջանային, մշակութային	Աճ	7	2	Հյուրանոց,հուրատուն B&B, Վրանային ճամբար
Հյուր սերվիս	Մշակութային, արկածային զբոս.	Աճ	8	3	Հյուրանոց
Լևոն թրեվալ	Մշակութային, արկածային զբոս.	Կայուն	10	2	2,3աստղանի հյուրանոցներ
Էլիտար թրեվալ	Մշակութային, արկածային զբոս.	Բավականի ն կայուն	7	3	Հյուրանոց,հյուրատուն B&B, Վրանային ճամբար

Ինչպես կարելի է նկատել, տվյալ բնագավառում գործող զբոսաշրջային ծառայություններ մատուցող խոշոր կազմակերպությունների կողմից տարեկան սպասարկվում են մեծ թվով այցելություններ: Այդ խմբի հարցվողների հետ մեր քննարկումների արդյունքները ցույց են տալիս, որ ներկայումս սեփական միջոցներով Հայաստան ժամանող զբոսաշրջիկները, սովորաբար, հարավային միջանցքի շրջաններում ծախսում են իրենց շրջագայության ժամանակի մոտ 25%-ը, այսինքն՝ 7-10օր : Հարցման մասնակից բոլոր օպերատորներն այն կարծիքն էին արտահայտում, որ տվյալ պահի դրությամբ իրենց կողմից կառավարվող բիզնեսի ծավալները կայուն են, կամ էլ արձանագրում են աճ: Նրանց կողմից սպասարկվող շրջագայությունների ցանկում գերակայում են մշակութային երթուղիները,սակայն կա նաև հետիոտն և լեռնահեծանվային արշավների, թռչնասերների և այլ մասնագիտացված արշավների պահանջարկ: Զբոսաշրջային ծառայություններ մատուցողների գերակշիռ մասն իրենց հյուրերին տեղավորում է հյուրանոցներում և հյուրատներում:

Անշուշտ, համաշխարհային տնտեսական ճգնաժամը բացասաբար է անդրադարձել նաև Հայաստանի տնտեսության վրա, սակայն առողջացման գործընթացը թվում է կայուն, իսկ կառավարությունը ցուցաբերում է հաստատակամություն՝ ստեղծելով ամուր հիմք երկրի տնտեսական զարգացման համար: Կարևոր է նշել, որ ներսի զբոսաշրջության պահանջարկի հիմնական աղբյուրը ձևավորվում է ոչ թե հարավային միջանցքի աշխարհագրական տարածքի շուրջը բնակվող քաղաքացիներից, այլ Երևանի և հարավային այլ շրջանների ներսի զբոսաշրջիկներից, քանի որ ներքին բնակչության թվաքանակը Հարավային միջանցքում համեմատաբար

փոքր է, ինչպես նաև միջանցքում ներառված երկու մարզերը Հանրապետության ամենանոսր բնակեցված շրջաններն են:

Անհրաժեշտ է հատուկ կարևորել սույն հետազոտության համատեքստի պոտենցիալ դրական նախադրյալները, որոնք կապված են Հայկական Սփյուռքի ընդհանուր թվաքանակի (8-10 միլիոն) և երկրի հանդեպ տածած զգացմունքների ամրության հետ: Այստեղ հնարավորություններ կան օգտվել ոչ միայն Սփյուռքի ներկայացուցիչների հմտություններից, փորձից և կրթական գիտելիքներից, այլև ստանալ նրանց աջակցությունը զբոսաշրջության հարավային միջանցքի զարգացման և հետագա զբոսաշրջային մասնակցության խրախուսման գործում՝ նոր արդյունքների և ծառայությունների առաջարկների ձևավորմանը զուգահեռ:

Վերջին մի քանի տարիներին արձանագրվել է Հայաստանի զբոսաշրջության շուկայի, ինչպես նաև զբոսաշրջային ծառայությունների շուկայի ծավալների կայուն աճ: Զբոսաշրջության հատվածի միջազգային միտումները (ինչպիսիք են, օրինակ՝ արկածային զբոսաշրջության հանդեպ աճող հետաքրքրությունը և նոր ուղղություններ հետազոտելու ցանկությունը) նոր հնարավորություններ են ստեղծում Հայաստանի զբոսաշրջության համար՝ հաշվի առնելով երկրի պրոֆիլը և շուկայի դիրքավորումը: Մեր հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ Հարավային միջանցքի զբոսաշրջության զարգացման համար ներկայումս առկա են զբոսաշրջային արդյունքն ամրապնդելու հնարավորություններ: Չնայած գրավիչ բնությանը և հարուստ պատմամշակութային ժառանգությանը՝ հյուրընկալության որակը, ըստ միջազգային ստանդարտների, ընդհանուր առմամբ դեռևս համեստ է:

Աղյուսակ 2.17.
2013թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ներգնաճանապարհորդների միջին ծախսերի նպատակայնության բաշխվածությունն ըստ ուղղությունների՝

ԱՄՆ դոլար

	Միջազգային	Տեղավորման	Սննդի (ռեստորանային	Էքսկուրսիաների	Ներքին տրանսպորտ	Հուշանվերներ,	Այլ ծախսեր	Ընդամենը

	ն տրան ս-պորտ ի համա ր	համա ր	ման, բար և այլ) համար	, շրջագա-յություն ն-ների համար	ս-պորտ ի համա ր	տնայ-նագոր ծա-կան իրեր	եր	
Ընդամենը, միջին	274.61	93.14	108.09	12.38	29.82	73.98	243.69	835.72
Գործնական	525.72	175.75	87.29	3.26	16.72	61.38	244.97	1 115.10
Աշխատանքի	149.77	76.42	91.10	3.07	16.09	46.10	127.82	510.38
Կրթության	157.95	151.82	98.84	4.55	22.38	52.19	166.37	654.08
Բուժման	40.14	7.76	22.28	0.56	8.14	17.88	143.85	240.60
Հանգստի և ժամանցի	456.37	322.83	143.41	33.95	43.40	81.18	149.06	1 230.20
Մարզական, մշակութային Միջոցառումների ն Մասնակցություն	301.84	121.29	174.40	11.56	24.64	92.71	356.15	1 082.60
Այցելություն հարազատ-ներին, ընկերներին	264.52	56.86	128.16	14.17	36.59	87.19	267.32	854.80
Ուխտագնացություն	238.73	51.44	36.09	22.42	30.91	68.04	270.85	718.48
Այլ	409.03	105.60	117.20	3.80	23.87	133.03	591.00	1 383.53

Դեռևս չկա Իրանի հետ կապող երկաթուղային ճանապարհ, ինչը կխթաներ ինչպես առևտուրը, այնպես էլ զբոսաշրջությունը: Ավտոճանապարհային տրանսպորտով Հայաստան մուտք ու ելք անող զբոսաշրջիկները հիմնականում հարևան պետություններից են՝ Վրաստանից և Իրանից: Ավտոճանապարհները վերջին տարիներին զգալիորեն բարելավվել են, սակայն գյուղական և ներմարզային ճանապարհները նույնպես գտնվում են ոչ այնքան բարվոք վիճակում: Այստեղ առավել կարևոր է դեպի զբոսաշրջային օբյեկտներ տանող ճանապարհների բարեկարգումը: Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ ներգնա զբոսաշրջությունը Հայաստանի արտահանման երկրորդ խոշորագույն հոդվածն է հանքահումքային

արտադրանքի և մետաղներից հետո և ապահովում է ծառայությունների արտահանման կեսից ավելին: Միևնույն ժամանակ ներգնա, արտագնա և ներքին զբոսաշրջության ոլորտում ներկայումս զբաղված են մոտ 20 հազար մարդ, որը կազմում է ոչ գյուղատնտեսական զբաղվածության մոտ 3 տոկոսը[82]:

ՀՀԾ-ն նախատեսում է, որ ներգնա և արտագնա զբոսաշրջությունը կշարունակեն աճել նույն տեմպերով, ինչ որ 2008-2012 թթ. ժամանակահատվածում, շուրջ 8-9 տոկոս, որի արդյունքում 758 հազարի համեմատ 2017 թ. ներգնազբոսաշրջիկների թիվը կկազմի 1.35 միլիոն, իսկ 2025 թ.՝ 2.7 միլիոն[83]:

Աղյուսակ 2.18.

Զբոսաշրջության ոլորտի զարգացումը 2011-2025 թթ.[84]

	2011	2017	2021	2025
Ներգնատուրիզմը, հազար մարդ	757.9	1351.2	1907.3	2692.3
% 2011 նկատմամբ	100.0	178.3	251.6	355.2
Արտագնատուրիզմը, հազար մարդ	715.0	1232.9	1677.3	2282.0
% 2011 նկատմամբ	100.0	172.4	234.6	319.2
Ներգնատուրիզմի ծախսերը, միլիոն ԱՄՆ դոլար	513.0	1030.0	1573.7	2404.5
% արտահանման	21.6	25.5	24.9	24.1
Արտագնատուրիզմի ծախսերը, միլիոն ԱՄՆ դոլար	513.5	1130.2	1869.0	3090.7
% ներմուծման	10.7	18.9	22.8	27.4
Զբաղվածությունը տուրիզմի ոլորտում, հազար	20.6	23.9	26.0	28.3
% ոչ գյուղատնտեսական զբաղվածության	2.9	3.0	3.0	3.0

Վերլուծությունները ցույց են տալիս, որ դիվերսիֆիկացված տնտեսական բազա ստեղծելու արդյունքում Հայաստանի ներքին շուկան, որը կձևավորվի զբոսաշրջության զարգացման ռազմավարական նախագծի իրականացման միջոցով,

---

82 Елизбарян Н. А.” Role of tourism in the economic development of RA”,Современная наука: Тенденции развития, Краснодар, 201 5, стр 122-127

[83] Նույն տեղում.

[84] Աղբյուրը՝ Հաշվարկված է ԱՎԾ, Էկոնոմիկայի նախարարության, Համաշխարհային բանկի World Development Indicators 2010, 2011, 2012 տարեգրքերի տվյալների հիման վրա, ՀՀԾ կանխատեսումներ:

ստեղծվող ցանկացած բիզնեսի պահանջարկի կենսական աղբյուրը համեմատաբար կայուն է իր ծավալի/չափի առումով: Սա ենթադրում է, որ ցանկացած ապագա գործարար նախաձեռնություն ավելի հուսալիորեն կհիմնվի ոչ թե շուկայի ընդհանուր չափի, այլ ՀՀ քաղաքացիների բարեկեցության մակարդակի ավելացման և տնտեսական զարգացման վրա[85]:

Այսպիսով ստացված տվյալները նաև ցույց են տալիս, որ Հայաստանի՝ որպես զբոսաշրջային ուղղության մասին այնքան էլ շատ տեղեկատվություն չկա, մասնավորապես այն շուկաներում, որտեղից ունենում ենք հանգստի նպատակով ժամանող զբոսաշրջիկներ: Սա կապվում է նաև տեղեկատվության ստացման աղբյուրների վերաբերյալ հավաքագրված տվյալների հետ: Հայաստանի ավանդույթները և արկածային/էկոտուրիզմը նշվել են որպես Հայաստան այցելելու հիմնական պատճառներ՝ ցույց տալով, որ այս երկու նիշային շուկան կարելի է շարունակել զարգացնել, ի լրումն ավելի ավանդական բնական, պատմական և մշակութային զբոսաշրջության վայրերի հետագա զարգացման: Հայկական ծագում չունեցող զբոսաշրջիկների մոտ կրկնվող այցելությունների բացակայությունը ցույց է տալիս, որ առաջին անգամ այցելող և հայկական ծագում չունեցող զբոսաշրջիկները շուկայի լավ հնարավորություն են ընձեռում: Ուստի զբոսաշրջության տարածքային զարգացման միջոցով զբոսաշրջային հանգույցների և կենտրոնների զարգացման նպատակով պետական քաղաքականությունն պետք է ուղղված լինի մասնավոր հատվածի ներդրումների խթանմանն ու արդյունավետ ուղղորդմանը: Երևան քաղաքի և մարզերի միջև զբոսաշրջության զարգացումը կունենա հետևյալ բնությագիրը: Դիլիջանը որպես Հայաստանի հյուսիսային զբոսաշրջային օջախ իր ժամանցի հնարավորություններով մեղմ կլիմա, թավ անտառներ, գերազանց մարզական բազաներ և ընտանեկան հանգստի համար հիանալի պայմաններ, բնությունը ճանաչելու հնարավորություններով արշավներ, շրջագայություններ: Դիլիջանի ներսում և Սևանի ազգային այգիներում ինչպես նաև

[85] Էլիզբարյան Ն.Ա, «Զբոսաշրջության տնտեսական բովանդակությունը և կապը ներդրումների հետ», Բանբեր « Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան», Երևան, 2011 /2/էջ 115:

ավելի էկզոտիկ շրջագայություններ, Տավուշի և Լոռու մարզերում և միջնադարյան մշակույթ պատմական տեսարժան վայրեր, այցելություն Հաղպատ, Սնահին, Գոշավանք և Հաղարծին: Եղեգնաձորը կդառնա Հայաստանի հարավային զբոսաշրջային օջախը՝ հարուստբնաշխարհով արշավներ Վայոց Ձորի, հետագայում նաև՝ Սյունիքի լեռներով, կիրճերով ու քարանձավներով/, մշակութային տեսարժան վայրերով Նորավանք, Տաթև, Գլաձոր, Քարահունջ և Սելիմ, ինչպես նաև գյուղական կոլորիտով /խաղողի այգիներ, այգեգործություն և անասնաբուծություն/: Էջմիածինը Հայաստանի կրոնական զբոսաշրջության կենտրոն դառնա՝ զբոսաշրջիկներին հնարավորություն տալով ուսումնասիրել առաքելական եկեղեցին, հոգևոր արժեքները, վանականների կյանքը այցելել մերձակա կրոնական տեսարժան վայրերը /Խորվիրապ, Գեղարդ, Ամբերդ, Օշական/: Դիլիջանում, Եղեգնաձորում և Էջմիածնում հարկավոր է զարգացնել ճանապարհային, հաղորդակցական, հյուրանոցային, ռեստորանային և ժամանցի գերազանց պայմաններ: Բացի զբոսաշրջային օջախներից, կհիմնվեն զբոսաշրջային կենտրոններ այն կարևորագույն տարածքներում, որոնք ունեն բավարար չափով բնական և մշակութային ռեսուրսներ՝ առանցքային շուկաների զբոսշրջիկներին գրավելու համար: Այս կենտրոններում նույնպես հարկավոր է բարելավել ենթակառուցվածքները, բայց կրկնակի ուշադրություն պետք է հատկացվի բնության և մշակույթի կարևորագույն տեսարժան վայրերի գեղագիտական բարեկարգմանը: Ստորև ներկայացնենք նախատեսվող բոլոր զբոսաշրջավայրերը ինչպես նաև հիմնական զբոսաշրջային արդյունքը, որը պետք է ներկայացվի և խթանվի շուկայում:

Աղյուսակ 2.18

. ՀՀ զբոսաշրջության տարածքային զարգացման հեռանկարները 2010-2030թթ.[86]

Զբոսաշրջային	Հիմնական արդյունք	Հյուրանոցային

[86] Ն..Ա.Էլիզբարյան Հայաստանի ճարտարագիտական ակադեմիա, §Հիմնական զբոսաշրջային կենտրոնների զարգացման հեռանկարները ՀՀ-ում¦ Հատոր 11, համար 2 , 2014, ք. Երևան, էջ 235:

օջախ/կենտրոն		կտրիքներ
Երևան	**Մշակութային ժառանգություն Քաղաքային մշակույթ**	20000-25000
Դիլիջան	Բնություն, մշակույթ, գիտություն, կրթություն	5000-9000
Եղեգնաձոր	Բնություն,Պատմություն,մշակույթ. գիտություն կրթություն	3000-5000
Էջմիածին	Կրոն մշակութային ժառանգություն	1000-2000
Արագած	Զմեռային սպորտաձևեր, բնություն, մշակութին ժառանգություն	1500-2500
Ծաղկաձոր	Զմեռային մարզձևեր, բնություն, սպորտ, մշակութային ժառանգություն	4000-7000
Ջերմուկ	Զմեռային մարզաձևեր, բժշկական զբոսաշրջություն	2500-4500
Իջևան	Բնություն, մշակույթ, սպորտ գիտություն,կրթություն	2000-4000
Գորիս	Մշակույթ բնություն, գիտություն, կրթություն	1000-1500
Գյումրի	Մշակույթ,բնություն,կրթություն	500-1000
Ստեփանավան	Մշակույթ,բնություն	1000-2000
Մեղրի	Մշակույթ,բնություն	500-2000

2.2. Զբոսաշրջության տարածքային զարգացման հիմնախնդիրները ՀՀ մարզերում

Հայաստանում զբոսաշրջության տարածքային զարգացման ճանապարհին առկա են մի շարք մարտահրավերներ ու խոչընդոտներ, որոնք անհրաժեշտ է հաղթահարել՝ զարգացման ներուժը առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու տարածքային համաչափ զարգացման համատեքստում և զբոսաշրջության պետական քաղաքականությամբ սահմանված նպատակներին հասնելու համար: Պետության գերակա առաջնահերթություններից է պետություն-մասնավոր հատված փոխգործակցության միջոցով ազգային մրցունակության բարելավումը, առողջապահության, զբոսաշրջության և այլ ոլորտներում: ՀՀ կառավարության կողմից

զբոսաշրջությունը հռչակվել է տնտեսության զարգացման գերակա ոլորտներից մեկը: Չնայած այն հանգամանքին, որ պետական և մասնավոր հատվածի կողմից ձեռնարկվում են որոշ քայլեր ոլորտի զարգացման համար, այնուամենայնիվ վերջինս կարիք է զգում նորարարական մոտեցումների՝ հանրապետության ողջ տարածքում զգալի առաջընթաց ունենալու համար:

Գծապատկեր 2.3.1.

Զբոսաշրջության տարածքային զարգացման հիմնախնդիրները[87]



ՀՀ մարզերում զբոսաշրջության զարգացման առկա հիմնախնդիրներից առանձնացնենք ստորև նշվածները.

- *Տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրներ:*

Պետական կարևորագույն հիմնախնդիրներից մեկը տարածքային համաչափ զարգացման ապահովումն է: Հայաստանում տրանսպորտային միջոցների, զբոսաշրջային օպերատորների, հյուրանոցային, սննդի և զվարճանքի օբյեկտների, ինչպես նաև այլ զբոսաշրջային ենթակառուցվածքների մեծամասնությունը կենտրոնացած է Երևանում: (Տես *Գծապատկեր* 2.3.2):

Գծանկար 2.3.2.

Հյուրանոցային տնտեսության օբյեկտների թիվը

[87] Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից:



Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ Հայաստանում 2015 թ. հյուրանոցների հասույթն աճել է 48,9 տոկոսով՝ կազմելով 33,9 մլրդ դրամ (70,7 մլն դոլար)[88]: 2015 թ.-ի վերջի դրությամբ հանրապետությունում գործում էր 523 հյուրանոց, որոնց սպասարկող անձնակազմը կազմել է միջինը 4920 մարդ տարեկան կտրվածքով: ԱՎԾ տվյալների համաձայն, հյուրանոցների հասույթի 86,8 տոկոսը բաժին է հասել Երևանին[89]: Այդպես, 2015 թ.-ին երևանյան հյուրանոցների հասույթն աճել է 59,8 տոկոսով՝ մինչև 29,4 մլրդ դրամ (61,3 մլն դոլար) 2014 թ.-ի արդյունքում գրանցված 18,4 մլրդ դրամի (մոտ 38,4 մլն դոլար) դիմաց: Բացի Երևանից, ամենաբարձր հասույթն ունեցող հյուրանոցների եռյակում են՝ Կոտայքը, Տավուշը և Սյունիքը[90]: Մասնավորապես, Կոտայքի մարզի հյուրանոցների հասույթը, որտեղ գտնվում են զբոսաշրջության ամենաճանաչված ուղղությունները, այդ թվում, լեռնադահուկային հանգստավայր Ծաղկաձորը, 2015թ.-ին կազմել է 1 579 մլն դրամ (մոտ 3,3 մլն դոլար՝ 2,5 տոկոսի անկում): Այս մարզում գործում է 53 հյուրանոց՝ 421 աշխատակիցներով[91]: Տավուշի մարզում, որը ճանաչված է զբոսաշրջիկների շրջանում Դիլիջանում գտնվող հանգստավայրերով, գործում է 48 հյուրանոց՝ 209 աշխատակիցներով: Այս մարզի հյուրանոցների հասույթը

[88] http://www.armstat.am/am/?nid=82, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հյուրանոցների հասույթը. 2015թ., էջ 1-20:
[89] նույն տեղում:
[90] նույն տեղում:
[91] նույն տեղում:

հաշվետու ժամանակահատվածում նվազել է 12,4 տոկոսով՝ մինչև 897,5 մլն դրամ (մոտ 1,9 մլն դոլար): Սյունիքի մարզում, որի ճանաչվածությունը հիմնականում ապահովվում է աշխարհում ամենաերկար «Տաթև» ճոպանուղու շնորհիվ, տեղակայված է 33 հյուրանոց՝ 221 աշխատակցով: Այդ հյուրանոցների հասույթը կազմել է 590,7 մլն դրամ (1,2 մլն դոլար, 3,1 տոկոսի աճ)[92]:

Ներկայումս զբոսաշրջությունից ծագած եկամուտների շատ փոքր մասն է փոխանցվում մարզեր, ինչը չի արդարացնում զբոսաշրջության պետական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը՝ համաչափ տարածքային զարգացումը, չնայած նրան, որ Հայաստանի այլ համայնքներում առկա է զբոսաշրջային գործունեության զարգացման և ծավալման մեծ ներուժ: (Տե՛ս գծանկար 2.3.3[93]):

Գծանկար 2.3.3.

Հյուրանոցների հասույթը մլն դրամ[94]



Կատարված վերլուծությունից պարզ է դառնում, որ Հյուրանոցային տնտեսության օբյեկտների հասույթի մեծ մասը բաժինը ընկնում է մայրաքաղաք Երևանին: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ մեծ մասամբ հյուրանոցների սեփականատերերի գրանցումը պետական ռեգիստրում իրականացվում

[92] http://www.armstat.am/am/?nid=82, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հյուրանոցների հասույթը. 2015թ., էջ 1-20:

[93] http://www.armstat.am/am/?nid=82http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__4%20Transport%20and%20tourism__42%20Tourism/TT-tu-1-2015.px/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a

[94] http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__4%20Transport%20and%20tourism http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__4%20Transport%20and%20tourism__42%20Tourism/TT-tu-1-2015.px/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a

է Երևանում, ուստի մարզերի բյուջեն անմասն է մնում հյուրանոցային տնտեսությունից ստացվող հասույթից: Վերջինը տարածքային զարգացման անհամաչափության լուրջ հիմնախնդիրն է:

- *Ենթակառուցվածքային հիմախնդիրներ և դրանց ուղեկցող գնային, որակական և անվտանգության պահպանման խնդիրներ.*

Հյուրընկալության ոլորտ Հյուրընկալության ոլորտը զբոսաշրջության հիմնարար տարրերից մեկն է: Հյուրանոցային տնտեսության օբյեկտները զբոսաշրջային փաթեթների հիմնական մասն են կազմում և զբոսաշրջիկների համար առաջնային ուշադրության կենտրոնում են գտնվում, որոնք առավելագույնս պետք է իրենց գնային և որակական հատկանիշներով ներդաշնակ լինեն և բավարարեն զբոսաշրջիկի պահանջմունքները և սպասելիքները: Հայաստանում հյուրանոցների և հյունանոցային տների առաջարկած պայմանները և սպասարկման որակը չեն համապատասխանում դրանց դիմաց պահանջվող գներին: Զբոսաշրջության սոցիալական և տնտեսական մասշտաբների զգալի ընդլայնումը տարածքների զարգացման համատեքստում պետություն-մասնավոր հատվածի ակտիվ համագործակցության արդյունքում փորձում է առաջարկել առավել շահավետ պայմաններ ներառող զբոսաշրջաջային փաթեթներ, որոնք հասանելի կլինեն միջին եկամուտներ ունեցող զբոսաշրջիկներին: Զբոսաշրջիկները հետաքրքրված են հնարավորինս չբացահայտված և դարավոր պատմություն ունեցող զբոսաշրջային կենտրոններով և քանի որ Կովկասյան տարածաշրջանը դասվում է հնագույն պատմությամբ հարուստ, ինչպես նար համեմատաբար չբացահայտված զբոսաշրջային երթուղիներից մեկը ներկայացնենք Հայաստան-Վրաստան-Ադրբեջան մեկ գիշերակացի համար զբոսաշրջիկներին առաջարկվող փաթեթների գները: Վերլուծությունը կատարվել է հետևյալ մեթոդաբանությամբ՝ ուսումնասիրվել է հյուրանոցային տնտեսության օբյեկտների 3-րդ,4-րդ,5-րդ կարգեր ունեցող հյուրանոցների, ավիափոխադրումներ իրականացնող ընկերությունների կողմից առաջարկվող ավիատոմսերի արժեքները ինչպես նաև զբոսաշրջային փաթեթների արժեքները:

Յուրաքանչյուր երկրում հյուրանոցային տնտեսության օբյեկտի միջին գինը որոշելու համար հիմք են ընդունվել ինտերնետային կայքում տեղադրված հյուրանոցային համարների գները ըստտարվա ժամանակահատվածների, որից հետո այդ ժամանակահատվածների ահամար առաջացկվող գների հիման վրահաշվարկվել է յուրաքանչյուր տնտեսության օբյեկտի միջին արժեքն ամբողջ տարվա համար (տե՛ս գծապատկեր 3.1-3.3): Ուսումնասիրության արդյունքները առավել մանրամասն անփոփված են Հավելված 1-ում:



Գծապատկեր 2.3.4

Որակավորման 5-րդ, 4-րդ, 3-րդ կարգ ունեցող հյուրանոցների 1 գիշերակացի միջին արժեքը, ԱՄՆ դոլար

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զբոսաշրջային որ զբոսաշրջայիին փաթեթը բացի հյուրանոցային տնտեսությունից ներառում է նաև տեղափոխման ծախսերը ուսումնասիրվել է մի շզրք Եվրոպական երկրներից, ՌԴ-ից և ԱՄՆ-ից դեպի Հայաստան, Վրաստան և ադրբեջան ավիափոխադրումներ իրականացնող ավիափոխադրում իրականացնող ընկերությունների կողմից առաջարկվող ավիատոմսի միջին արժեքը: Ուսումնասիրության արդյունքները ամփոփված են հավելված և գծապատկեր:



Գծապատկեր 2.3.5 Ավիափոխադրումներ իրականացնող ընկերությունների կողմից առաջարկվող ավիատոմսերի միջին արժեքը

Այնուհետև հաշվարկվել է ԵՄ-ից, ՌԴ-ից, և ԱՄՆ-ից դեպի Հայաստան, Վրաստան, Ադրբեջան մեկ գիշերակացի համար առաջարկվող զբոսաշրջային փաթեթի արժեքը՝ որակավորման 3.4 և 5 կարգ ունեցող հյուրանոցներում /տես հավելված 3/:



Գծապատկեր 2.3.6.

Վերոնշյալ հետազոտության արդյունքների հիման վրա առավել մանրամասն պատկերացում կազմելու նպատակով հաշվարկվել է նշված երկրներից դեպի Հայաստան, Վրաստան և ադրբեջան մեկ անձի համար առաջաչկվող զբոսաշրջային փաթեթի միջին արժեքը, որը իրենից ներկայացնում է ժամանման յուրաքանչյուր երկրի որակավորման 3,4 և 5 կարգ ունեցող հյուրանոցներում մեկ գիշերակացի համար առաջարկվող գների միջին թվաբանականը /տես աղյուսակ..../:

➢ *Ներդրումային և օրենսդրահրավական կարգավորման հիմախնդիրներ:* Հայաստանում զբոսաշրջության ոլորտը բավականաչափ չի ֆինանսավորվում: Երկրի զբոսաշրջությունից ստացված եկամուտների չնչին մասն է ներդրվում զբոսաշրջության զարգացման մեջ, իսկ մասնավոր ներդրողները թերահավատորեն են վերաբերում Հայաստանում ներդրումներ կատարելուն կամ ուղղակի խուսափում են դրանից: Այս առումով ներդրումների խրախուսման, շարժառիթների, հնարավորությունների ու փաստացի և հուսալի տվյալների տրամադրման միջոցով աջակցություն պետք է ցուցաբերվի հնարավոր ներդրողներին: Կա նաև իրավական դաշտում, մաքսային համակարգում, երկարաժամկետ բիզնես-վարկերի համակարգերում բարեփոխումներ իրականացնելու

անհրաժեշտություն: Ներդրումների խրախուսման համար նախ և առաջ անհրաժեշտ է ստեղծել թափանցիկ և բարենպաստ գործարար միջավայր, որի հիմքում ընկած կլինի հստակ զբոսաշրջության զարգացման քաղաքականությունը և իրավական դաշտը: Ոլորտում պետական և մասնավոր ներդրումների ներկայիս մակարդակը բավականին ցածր է տարածաշրջանի այլ երկրների համեմատությամբ, և եթե Հայաստանը դիտարկում է մրցունակ լինելու հնարավորությունը,դրանք պետք է ավելանան:

➢ *Կադրային հիմնախնդիրներ:*

Հայաստանի զբոսաշրջության ոլորտում աշխատող կադրերի մասնագիտական որակը, հմտություններն ու գիտելիքները միջազգային ընդունված ստանդարտներից ցածր են: Նորամուծության գործոնը չափազանց թույլ է,որը հանգեցնում է նրան,որ ոլորտում գործող ընկերությունները դժվարությամբ են ընկալում միջազգային լավագույն փորձը, իսկ արագընթաց զարգացման պայմաններում զբոսաշրջային ծառայությունների միջազգային շուկայում պատշաճ մրցելու մասին նույնիսկ խոսք չի կարող լինել: Ընդհանուր տնտեսական և սոցիալական համատեքստում զբոսաշրջության ոլորտը ներկայումս ցածր հեղինակություն է վայելում: Պահանջվում է զբոսաշրջության ոլորտի մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրի մշակում՝ ներառյալ զբաղվածության հնարավորությունների, պայմանների բարելավման քաղաքականության բարելավումը և մարդկային ռեսուրսների վերապատրաստումը, որը կապահովի ծառայությունների համաշխարհային շուկայում առկա պահանջարկին համահունչ աշխատուժի զարգացումը:



Գծանկար 2.3.7. Հյուրանոցային տնտեսությունում աշխատողների տարեկան միջին ցուցակային թվաքանակը, մարդ[95]

Ի դեպ մարզերում որակյալ կադրերի բացակայությունը հանգեցնում է նրան, որ երբեմն մարզերում զբոսաշրջության ոլորտի շատ աշխատողներ հաճախ Երևան քաղաքից են ընտրվում: Վերջինս թե՛ գործատուի, և թե՛ տեղի բնակչության համար խնդիր է:

- *ճշգրիտ քանակական և որակական հետազոտությունների անցկացման հիմնախնդիրներ:*

Ներկայումս Հայաստանի ներգնա զբոսաշրջային այցելությունների մասին միակ հավաստի և ճշգրիտ տվյալները ներկայացնում են սահմանային հսկիչ կետերում հավաքագրված հայ և օտարերկյա քաղաքացիների վերաբերյալ համադրված տվյալները: Չնայած վերջերս իրականացված տարեկան ուսումնասիրությունը ներկայացնում է որոշակի տվյալներ ծախսերի, ճամփորդությանը վերաբերող խնդիրների, տևողության, կեցության նախասիրությունների և այլնի վերաբերյալ, այնուամենայնիվ, տվյալների որակը բավարար չէ պետական քաղաքականության լավագույն մշակման կամ Հայաստանի տնտեսության վրա զբոսաշրջության ոլորտի ազդեցությունն արդյունավետ կերպով գնահատելու համար: Անհրաժեշտ է որակական և քանակական տվյալների հավաքագրման հուսալի համակարգ՝ ներգնա և ներքին զբոսաշրջության մասին տվյալների հավաքման և մշակման համար: Այս առումով նշանակալից է նաև զբոսաշրջային

95 http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__4%20Transport%20and%20tourism__42%20Tourism/TT-tu-1-2015.px/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a

մասնագիտացումների ուսանողներին և կրթական հաստատություններին՝ ոլորտի համաշխարհային և տեղական միտումների ու հնարավորությունների վերաբերյալ հետազոտություններ կատարելու խրախուսումը:

- *Սոցիալական հիմնախնդիրներ:*

Ցավոք, ներկայումս Հայաստանում շատ քաղաքացիներ զբոսաշրջիկին չեն ընդունում որպես հյուր այդ բառի բարոյական հիմքերի բոլոր դրսևորումներով: Ցավալի է, բայց շատ հաճախ կարելի է հանդիպել զբոսաշրջիկի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի: Հայաստանում զբոսաշրջիկը ապահովագրված չէ ծաղրված կամ խաբված լինելուց: Այս իրավիճակում ընկած զբոսաշրջիկը խորը հիասթափություն է ապրում, և երկրորդ անգամ Հայաստան այցելությունը արդեն կասկածի տակ է դրվում: Սոցիալական մյուս կարևոր հիմնախնդիրներից է հասարակական փակ տարածքներում ծխելու սահմանափակումների բացակայությունը: Հայաստանում սննդի և ժամանցի կազմակերպմանշատ քիչ օբյեկտներում են պահպանվում հաճախորդի իրավունքները, մինչդեռ եվրոպական շատ երկրներում հասարակական գրեթե բոլոր վայրերում արգելվում է ծխելը, իսկ Հայաստանում դեռևս չկա համապատասխան օրենսդրական կարգավորում այդ հարցի շուրջը: Երթևեկության կանոնների մշտական խախտումները և անդադար հնչող ազդանշանները, գետնին աղբ թափող քաղաքացիներ տեսնելը զբոսաշրջիկներին ստիպում են կասկածել Հայաստանի՝ որպես անվտանգ և ապահով երկիր լինելու մասին:

- *Բնության և մշակութային ժառանգության պահպանման հիմնախնդիրներ:*

Բնության և մշակութային ժառանգության պահպանման հիմնախնդիրը հետզհետե խորանում է Հայաստանում, որովհետև միջոցառումներ գրեթե չեն ձեռնարկվում այդ խնդիրը լուծելու ուղղությամբ: Մարդկանց անբարեխիղճ պահվածքի հետևանքով աղբը բնության մեջ շարունակում է շատանալ: Մարդկանց մոտ բնության գրկում հանգստանալը դառնում է սովորություն: Սակայն մարդկանց գիտակցության մեջ դեռևս չի արմատավորվել բնության նկատմամբ խնամքի անհրաժեշտությունը: Պետք է մշակել բնության

մաքրման և պահպանման վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև կրթական, դաստիարակչական ծրագրեր մշակել երեխաների շրջանում բնության նկատմամբ սեր ու հոգատարություն սերմանելու համար: Մշակութային ժառանգության շատ հուշարձաններ ներկայումս նույնպես վերականգնման, վերանորոգման և պահպանման կարիք ունեն: Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի զբոսաշրջային հիմնական գրավչությունը բնությունն է և մշակույթը, պետք է ավելի սրտացավ և հոգատար լինել այս արժեքների նկատմամբ, պահպանել և զարգացնել մեզ բաժին հասած ժառանգությունը:

Շրջակա միջավայրի մարտահրավերներ: Ներկայումս ամբողջ աշխարհում զբոսաշրջության ոլորտի արդի հիմախնդիրներն են կլիմայական փոփոխությունները և դրանց ազդեցությունը զբոսաշրջության վրա: Չնայած Հայաստանի վրա որևէ ազդեցություն չի գործի ծովի մակարդակի բարձրացումը, այնուամենայնիվ, կլիմայական փոփոխությունները երկարաժամկետ հատվածում կարող են անուղղակիորեն բացասաբար ազդել Հայաստանի զբոսաշրջության ոլորտի վրա: Օրինակ, վերջին որոշ տարիների ընթացքում Հայաստանում ձմռան ամիսներին նկատվում է սովորականից բարձր ջերմաստիճան, որի հետևանքով ձմեռային զբոսաշրջության սեզոնայնությունը կրճատվում է, և քիչ ձյան պատճառով պահանջարկն ընկնում է: Շրջակա միջավայրի մարտահրավերների թվում են մաքուր էլեկտրաէներգիան, տրանսպորտի կայուն համակարգը, բնական ռեսուրսների պահպանումն ու կառավարումը, ջրահեռացման և ջրամատակարարման արդյունավետ կառավարումը: Ուշադրության արժանի է նաև շրջակա միջավայրի աղտոտվածության, աղտոտման աղբյուրների տեղակայման և դրանց հետ կապված աղտոտման և արտակարգ իրավիճակների վտանգի խնդիրը:

- *Քաղաքական և տնտեսական անկայունություն, տարածաշրջանային լարվածություն:*

Քաղաքական, տնտեսական անկայունությունը և տարածաշրջանային լարվածությունը անշուշտ զբոսաշրջության զարգացման հիմնական արգելքներից են և ուղղակորեն ազդում են զբոսաշրջային այցելությունների վրա: Զբոսաշրջության

տարածքային զարգացման միջոցառումների իրականացումը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ նախատեսված արդյունքին հասնելու համար: Այդ ռիսկերից առանձնացնենք ներքոհիշյալները (տե՛ս գծագիր 2.3.8):

Գծապատկեր 2.3.8.

Զբոսաշրջության տարածքային զարգացման ռիսկերը



են տնտեսության ներքին և արտաքին հնարավոր փոփոխությունների հետ մասնավորապես՝ ներդրումների ակտիվության նվազում, ինֆլյացիայի բարձր մակարդակ, տնտեսության աճի տեմպերի նվազում և այլն: Ֆինանսական ռիսկերը կապված են զբոսաշրջության ոլորտի բյուջետային ֆինանսավորման մակարդակի նվազման հետ: ՀՀ զբոսաշրջության համար երկրի ներսում տիրող և հարևան պետությունների հետ լարված իրավիճակը կարող է հանգեցնել զբոսաշրջիկների հոսքերի կրճատմանը Զբոսաշրջիկները խուսափում են իրենց հանգիստն անցկացնել նման երկրներում: Ցավոք, Հայաստանն այժմ ունի նման խնդիրներ: Ճիշտ վիճակը այնքան էլ բարդ և ծայրահեղ չէ, ուստի տնտեսական և քաղաքական կայունությունն հաստատելով՝ հնարավոր է խթանել զբոսաշրջային այցելությունների աճը և ավելի շատ եկամուտ ստանալ զբոսաշրջությունից: Անհրաժեշտ է նշել, որ Լեռնային Ղարաբաղը նույնպես հզոր ռեսուրս է Հայաստանի զբոսաշրջության զարգացման համար, սակայն զբոսաշրջային կազմակերպությունները իրենց զբոսաշրջային փաթեթներում շատ քիչ են ներառում շրջագայություններ դեպի Արցախ, քանի որ դրա նկատմամբ պահանջարկը քիչ է: Իսկ այդ հանգամանքը պայմանավորված է ինֆորմացիայի պակասով, քանի որ այլ երկրներում կարծում են, թե Արցախում պատերազմը դեռ շարունակվում է, և Արցախը կարող է վտանգավոր լինել զբոսաշրջության համար: Խնդիր կա նաև արտասահմանյան

ապահովագրական ընկերությունների հետկապված, որոնք Հայաստան մեկնող զբոսաշրջիկին ապահովագրում են միայն Հայաստանի տարածքում, իսկ Արցախում որպես ռիսկային գոտի չեն ապահովագրում: Ամբողջ աշխարհի մաշտաբով գործում է հայտնի Google Map ծրագիրը, որի կողմից տրված տեղեկատվության համաձայն ֆիզիկական քարտեզով Արցախը գտնվում է Ադրբեջանի կազմում, այսինքն այստեղ առաջանում է ինֆորմացիայի խեղաթյուրում: Եթե զբոսաշրջիկը լսել է Արցախի մասին և ցանկություն ունի մեկնել Հայաստան և այնտեղից էլ Արցախ, տեսնելով, որ Արցախը գտնվում է հարևան երկրի կազմում, պոտենցիալ զբոսաշրջիկի մոտ առաջանում է թերահավատություն:

Մատչելիությունը: Տարածաշրջանի այլ ուղղությունների համեմատությամբ օդային ուղևորափոխադրման ծախսերը բավականին բարձր են, ճանապարհային ցանցը սահմանափակ է, թռիչքի ժամանակացույցերը (մասնավորապես դեպի Արևելյան Եվրոպա) անհարմար են, օդային փոխադրման վճարները ակնհայտորեն շատ բարձր են և զբոսաշրջիկները ենթարկվում են կրկնակի հարկման (մուտքի արտոնագրի տուրք, թռիչքի տուրք): Նշանակալից բարեփոխումներ են անհրաժեշտ իրականացնել երկիր մուտքի արտոնագրի տրամադրման ընթացակարգում և զբոսաշրջության հարկման համակարգում՝ միաժամանակ խրախուսելով օդային փոխադրողների ավելի մեծ քանակությունը, ավելի լայն ցանցը և մեծ մրցակցությունը:

Ծառայությունների որակ: Հայաստանն իր հարուստ պատմամշակութային և բնական զբոսաշրջային ռեսուրսներով ունի զբոսաշրջության կայուն զարգացման ծանրակշիռ նախադրյալներ: Այնուամենայնիվ, ոլորտում անհրաժեշտ է զարգացնել մատուցվող ծառայությունների որակը (զբոսաշրջիկների անվտանգության ու առողջությանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը, սանիտարահիգիենիկ նորմերի պահպանմանը վերաբերող իրավական դաշտի բարելավում, ստանդարտների ու նորմերի համակարգի ներդնում):

Զբոսաշրջային ծախսերը: Հայաստանում զբոսաշրջիկների կողմից կատարվող բուն զբոսաշրջային ծախսերը բնութագրվում են

ցածր ցուցանիշներով: Սա առաջին հերթին պայմանավորված է որակական և քանակական առումով սահմանափակ զբոսաշրջային արդյունքով և ծառայություններով:

Հասարակական սննդի, մշակութային, ժամանցի, սպորտի, զվարճության համար նախատեսված կառույցներ: Սնունդը զբոսաշրջության մյուս կարևոր նախապայմաններից է: Հայաստանն ունի յուրօրինակ, համեղ ավանդական խոհանոց, սակայն շատ ռեստորաններում և սննդի ծառայություններ մատուցող այլ կառույցներում սանիտարահիգենիկ պայմանները և սպասարկման մակարդակը բավականին ցածր են՝ հատկապես Երևանից դուրս գտնվող կառույցներում: Չի գործում որակի վերահսկման համակարգը: Բացի այդ, չկան համաշխարհային համբավ ունեցող և օտարերկրացիների մոտ նախապատվություն վայելող այլընտրանքային խոհանոցների առկայություն և արագ սննդի սպասարկման հայտնի ապրանքանիշեր: Հայաստանը հնագույն մշակույթ և պատմություն, ինչպես նաև սպորտային լավ ավանդույթներ ունեցող երկրներից է, որը միշտ էլ աչքի է ընկել իր բարձրորակ և ինքնատիպ մշակութային ժառանգությամբ: Այժմ մշակութային շատ օբյեկտներ՝ թանգարաններ, պատկերասրահներ, թատրոններ, կինոթատրոններ, համերգասրահներ, մշակութային և պատմության հուշարձաններ, եկեղեցիներ գտնվում են ոչ այնքան բարվոք կամ միջազգային արդի չափանիշներին չհամապատասխանող վիճակում և կարիք ունեն ֆինանսական և մասնագիտական աջակցության:



Գծապատկեր 2.3.9. Մեկ գիշերակացի համար առաջարկվող զբոսաշրջային փաթեթի միջին արժեքը



Գծապատկեր 2.3.10. Ավիափոխադրում իրականացնող ընկերությունների կողմից առաջարկվող ավիատոմսերի արժեքը

Ֆինանսական և ապահովագրական ծառայությունների, կապի և հաղորդակցման, կոմունալ սպասարկման և առողջապահության ոլորտ: Ներկայումս յուրաքանչյուր զբոսաշրջիկ իր ճանապարհորդության ընթացքում ակտիվորեն օգտվում է կապի և հաղորդակցության արդի միջոցներից, ֆինանսական և ապահովագրական ծառայություններից և սպասարկման ոլորտի այլ ծառայություններից, որոնք մատուցվում են տվյալ երկրում, և ինչքան արդիական է այս ենթակառուցվածքը, այնքան ավելի հարմարավետ է զբոսաշրջիկն իրեն զգում իր ճանապարհորդության ընթացքում, իսկ, ինչպես հայտնի է, հարմարավետության ձգտում են բոլորը: Հայաստանը անհրաժեշտություն ունի բարելավելու և արդիականացնելու այս ենթակառուցվածքը: Մյուս կարևոր հիմնախնդիրը զբոսաշրջիկների առողջության և անվտանգության պահպանումն է, որի համար գոյություն ունեցող ենթակառուցվածքը չի համապատասխանում արդի պահանջներին և նույնպես կարիք ունի բարեփոխումների[96]:

Մարքեթինգային հիմախնդիրներ: Զբոսաշրջային արդյունքների բազմազանության բացակայություն: Այժմ Հայաստանը, բացի դասական էքսկուրսիոն տուրերից, միջազգային շուկայում հայտնի չէ հանգստի կազմակերպման այլ տեսակներով: Ներկայումս մեծ մասսայականություն են վայելում արկածային, էքստրեմալ զբոսաշրջության տեսակները, էկո և ագրոզբոսաշրջությունը: Որոշ տուրօպերատորներ սեփական ջանքերով փորձում են բավարարել զբոսաշրջային շուկայի արդի

[96] http://lraber.asj-oa.am/495/1/17_Barsexyan%2B8.pdf,Բարսեղյան.Ի.Վ. Զբոսաշրջության ոլորտի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում և օրենսդրական դաշտի ձևավորումը, 2014, էջ 10-15:

պահանջները, սակայն դրանք դեռևս չեն ձևավորում նոր զբոսաշրջային արդյունք, որովհետև չկա համակարգված պետական մոտեցում զբոսաշրջային նոր արդյունքների ձևավորման հարցերում:

Սեզոնայնություն: Հայաստանում զբոսաշրջության սեզոնայնությունը կարևոր հիմանախնդիր է համարվում: Զբոսաշրջիկների գերիշխող մեծամասնությունը, մասնավորապես հանգստի նպատակով այցելողները, հանրապետություն են ժամանում մայիսից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում, որը սակավ օդային փոխադրումների և հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեության աշխատանքում ստեղծում է ծանրաբեռնվածություն: Տարվա մնացած հատվածում զբոսաշրջության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություններում եկամուտը ցածր է, հյուրանոցների զբաղվածությունը նվազում է, և ոլորտում աշխատատեղերից շատերը կրում են սեզոնային բնույթ: Սեզոնայնությունը արտահայտվում է նաև նրանով, որ չկան լավ մշակված և միջազգային շուկայում ներկայացված այլընտրանքային զբոսաշրջային արդյունքներ: Հայաստանում ձմեռային կուրորտային զբոսաշրջության զարգացումը, այն մրցունակ դարձնելը և միջազգային շուկայում արդյունավետ խթանելը կարող է հիմնականում լուծել սեզոնայնության հիմնախնդիրը: Սեզոնայնությունը կանխելու առումով լավ կլինի նաև, եթե պետական մշակութային, սպորտային, գիտական և այլ տիպի միջազգային բնույթ կրող միջոցառումները պլանավորվեին զբոսաշրջային ցածր ակտիվության սեզոններին Ծաղկաձորում, Ջերմուկում, որոնք ձմեռային սպորտաձևերի առումով կարող են մրցակցային լինել :Առկա հիմնախնդիրները բնականաբար ազդում են միջազգային շուկայում Հայաստանի զբոսաշրջային մրցունակության վրա, որի հետևանքով Հայաստանը գրավում է ոչ այնքան հուսադրող դիրքեր միջազագին շուկայում: Մարզերում զբոսաշրջության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծումը կախված է մի շարք կազակերպատնտեսական միջոցառումների իրականացումից (տես՝ գծապատկեր 3):

Այսպիսով, խնդրին համակարգային լուծում տալու համար անհրաժեշտություն է առաջանում զբոսաշրջության տարածքային զարգացման միասնական պետական ռազմավարություն մշակել, որը հիմնված է պետական և մասնավոր հատվածների համագործակցության զարգացման վրա՝ ուղղված ռազմավարական ուղղություններից յուրաքանչյուրի համար նպատակային խնդիրների լուծմանը:



Մարզային զբոսաշրջության զարգաց
կառավարման մարմինների կազմակերպական
խնդիրների համակարգը

Զբոսաշրջության ոլորտի կառավարման ռազմավարությունը ներկայացված է ստորև բերված գծապատկերում (տես գծապատկեր 2.3.12):

Զբոսաշրջության տարածքային զարգացման բնորոշ առանձնահատկությունները և դրանց կառավարման ռազմավարությունը	
Գործառնությունների առանձնահատկությունները	Զարգացման ռազմավարական քայլերը

Զբոսաշրջային ծառայությունների սպառման տարածքային բաժանումը	Տեղերի ամրագրում, նախնական պատվեր, տուրի ժամանակի խելամիտ օգտագործում
Ճյուղի բազմատարությունը և զբոսաշրջային կառուցվածքի հստակ տարանջատումը	Ընդհանուր նպատակների հետապնդման, արդյունավետ մեթոդների կիրառման և նոր տեխնոլոգիաների ներդրման նպատակով ծառայություններ մատուցող մրցակցային կազմակերպությունների համագործակցությունը
Առաջարկի կայունությունը և պահանջարկի ճկունությունը	Լայն գովազդ, ժամանակակից զբոսաշրջային ենթակառուցվածք
Զբոսաշրջային ռեսուրսների սպառողական արժեքի զանազանությունը	Սպասարկման համապատասխան մակարդակ, մատուցվող ծառայությունների լայն ոլորտ
Զբոսաշրջային ծառայությունների պահանջարկի սեզոնային տատանումները	Գների սեզոնային տարբերակում, սեզոնային տարիֆների սահմանում
Զբոսաշրջային արտադրանք և ծառայություններ մատուցողների և սպառողների կողմից տարբեր պատկերացումները	Կլաստերային-ուղղորդված ռազմավարության ներդրումը զբոսաշրջության ոլորտի զարգացման համար
Զբոսաշրջային ծառայությունների պահանջարկի ճկունությունը	Ճկուն գնային քաղաքականություն, որը փոփոխվում է պահանջարկի հետ
Զբոսաշրջային ծառայությունների որակի ապահովում	Մասնագիտացում և բարեհամբույր սպասարկում
Տնտեսության այլ ճյուղերի զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսների օգտագործում,	Համակարգված պլանավորում, զբոսաշրջային քաղաքականության մշակում՝ հաշվի առնելով նպատակային սկզբունքները
Առքուվաճառքի և ապրանքի օգտագործմանան համապատասխանությունը	Երիշխաքիային սպասարկում, զբոսաշրջային մարզի դրական իմիջի պահպանումը
Արտահանում, որն իրականացնում է	Համաշխարհային զբոսաշրջային շուկայի կառուցվածքի

երկիրը	ուսումնասիրումը, երկիրը՝ որպես զբոսաշրջային մարզի դիրքավորումը
Զբոսաշրջիկների և տեղի բնակչության տնտեսական դիրքի էական տարբերությունը	Tax-free համակարգի ներդրումը, գնային քաղաքականության նկատմամբ վերահսկողությունը
Զբոսաշրջության ոլորտի աշխատատարությունը	Աշխատուժի օգտագործման օպտիմալացումը, կադրերի որակավորման բարձրացումը

Ծառայությունների ոլորտին բնորոշ առանձնահատկություններ. անշոշափելությունը, արտադրության և սպառման միջև անբաժանելիությունը, պահպանման անհնարինությունը	Ծառայությունների որակի և ապահովության երաշխիք, ծառայությունների մատուցումը պահանջվող մակարդակով, ծառայությունների փաթեթի իրացման ժամանակակից ռազմավարություն

Աղյուսակ 2.3.12.

Զբոսաշրջության տարածքային զարգացման բնորոշ առանձնահատկությունները և դրանց կառավարման ռազմավարությունը

Եթե դիտարկենք ՀՀ զբոսաշրջությունը կայուն զարգացման տեսակետով, ապա այն կարիք ունի ռազմավարական պլանավորման: Ոլորտի առկա հիմնախնդիրները արտացոլում են ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, իսկ դրանց լրիվ կամ մասնակի լուծումը հնարավորություն կտա բարձրացնել ՀՀ քաղաքացիների կյանքի որակը մարզերում: Հաշվի առնելով արտաքին և ներքին գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ զբոսաշրջության ոլորտի զարգացման վրա, միևնույն ժամանակ մատնանշելով արտաքին և ներքին այն հնարավորությունները, որոնք անհրաժեշտ է օգտագործել միջազգային շուկայում կայուն

դիրքեր գրավելու համար՝ կարելի է բացահայտել ՀՀ զբոսաշրջության զարգացման հիմնուղիները:

2.3. Զբոսաշրջությունը որպես ՀՀ տարածքային զարգացման էական գործոն

Հայաստանի՝ տարածքների բնակլիմայական առանձնահատկությունները, բնական ռեսուրսների անհամաչափ բաշխումը, պատմամշակութային արժեքների տարբերությունները պայմանավորում են տարածքային զարգացման մակարդակների անհամաչափություն: Զբոսաշրջությունից ստացվող արդյունքը կենտրոնացած լինելով Երևանում՝ առաջացնում է խիստ արտահայտված տարբերություն մարզերի և Երևանի միջև: Զբոսաշրջության տարածքային անհամաչափությունների զարգացումը կարելի է դիտարկել որպես տարածքային համակարգերի և դրանց տարրերի դինամիկ փոփոխության գործընթաց, որոնց փոխազդեցության արդյունքում ձևավորվում է այդ համակարգի առաջընթացի կամ զարգացման անկայուն արագությունը, իսկ բուն զարգացումը բնութագրվում է տարածքային ցուցանիշների ընդհատ դինամիկությամբ[97]: Տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման ամհամաչափությունը բարդ և բազմակողմանի երևույթ է, որն ինքնին մինչ օրս չունի միանշանակ և ամբողջական սահմանում, մինչդեռ վերջինիս հաղթահարմանն ուղղված միջոցառումները պետք է լինեն նպատակային և համակարգված: Դա, մասնավորապես, պայմանավորված է տարածքային մակարդակում հստակ վիճակագրական տվյալների բացակայության, զբոսաշրջության տարածքային զարգացման հասկացության բազմակողմանիության և բարդության հետ: Սույն ատենախոսության շրջանակում փորձենք պարզաբանել հետևյալ հարցադրումները

1. Ինչպիսի՞ն է զբոսաշրջության դերը տարածքային զարգացման ենթատեքստում,

2. ինչպիսի՞ միտում է դրսևորում զբոսաշրջության ոլորտը՝ տարածքային զարգացման անհամամասնությունը մեղմելու գործում. որը փաստելու համար անհրաժեշտ է զբոսաշրջության

[97] National and Regional Tourism Planning, 2010, p15:

ոլորտի վերլուծության հետևողական դինամիկ մոտեցում, որոշակի պարբերականությամբ, անհամամասնության գնահատականի վերհանում, զբոսաշրջության տարածքային անհամաչափության գնահատման հիմքում ընկած տվյալների ժամանակագրական շարքերի և առանձնացված վիճակագրական տվյալների վերլուծություն:

3. Ի՞նչ գործիքակազմ է մշակվում և կիրառվում զբոսաշրջության տարածքային զարգացման մրցունակության և գրավչության համար:

Զբոսաշրջության դերի բացահայտումը տարածքային զարգացման համատեքստում, կարծում ենք, տարածքային սոցիալ-տնտեսական անհամամասնության հաղթահարման քաղաքականության նախահիմքն է: Զբոսաշրջության տարածքային զարգացման անհամամասնությունների աճը, իր հերթին, ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ բազում դրդապատճառներ: Օբյեկտիվ դրդապատճառներից կարելի է առանձնացնել [98].

- բարենպաստ աշխարհագրական դիրքը,
- բարենպաստ բնակլիմայական պայմանները,
- եկամուտների անհավասարաչափ բաշխումը տարածքներում,
- բնական ռեսուրսների առկայությունը,
- զարգացած ենթակառուցվածքները,
- տնտեսական զարգացման տարբեր արագությունները և այլն:

Տարածքների կոնկրետ բնութագրիչներից կախված՝ սուբյեկտիվ դրդապատճառ կարելի է համարել զբոսաշրջության տնտեսական, սոցիալական, ֆինանսական շարժառիթները: Քաղաքաշինական և տնտեսական յուրացվածության աստիճանի տեսանկյունից ՀՀ զբոսաշրջային տարածքը կարելի է դասակարգել որպես՝ ինտենսիվ, թույլ յուրացված ռեկրեացիոն և բնապահպանական տարաբնակեցման համար անբարենպաստ ռեսուրսներով տարածքային միավորներ[99]:

---

[98] Էլիգբարյան Ն. Ա., §Զբոսաշրջության տարածքային զարգացման անհամամասնությունները Երևանում և ՀՀ մարզերում¦, Լրաբեր, Հայաստանի ճարտարագիտական ակադեմիա,, Հատոր 12, համար 1 ,2015թ. էջ 51-54:

[99] Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 1-6:

Տարածքների սոցիալ-տնտեսական անհամաչափության խնդիր ունեցող բոլոր երկրներում առաջնային է համարվում այդ անհամաչափությունների գնահատման մեխանիզմների և չափանիշների որոշումը: Հաճախ այս խնդրի լուծումը բախվում է որոշ դժվարությունների, մասնավորապես՝ տարածքային մակարդակով բավարար տեղեկատվական բազայի, վիճակագրության բացակայությանը, որը հատկապես բնորոշ է զարգացող տնտեսություն ունեցող փոքր երկրներին: Հայաստանը այս տեսանկյունից նույնպես բացառություն չէ: Տարածքային անհամամասնության գնահատման ամենատարածված չափանիշն է համարվում տարածքային ՀՆԱ-ն: Տարածքային ՀՆԱ-ն կարելի է բնորոշել, որպես տվյալ տարածքի սահմաններում տնտեսության բոլոր ճյուղերում թողարկված ապրանքների և մատուցված ծառայությունների արժեքը ժամանակի որոշակի կտրվածքում (կիսամյակային/ տարեկան)[100]: Տարածքային ՀՆԱ-ն կարող է հաշվարկվել ինչպես տարածքի, այնպես էլ դրա ենթատարածքաների մակարդակով: Տարածքային ՀՆԱ-ն հաշվարկելիս վերջինում ներառվում են ֆիզիկապես այդ տարածաշրջանում տեղակայված արտադրության գործոնների օգտագործումից ձևավորված եկամուտները և իրենից ներկայացնում է տվյալ տարածաշրջանում թողարկված ապրանքների և ծառայությունների զուտ արժեքը[101]: Տարածքային ՀՆԱ-ի հաշվարկման փորձն արված է 2011թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ Տարածքային զարգացման հայեցակարգում: Սակայն տարածքային ՀՆԱ-ի ցուցանիշն ունի մի շարք թերություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. ՀՆԱ-ի հաշվարկի մեջ ներառված չեն ստվերային տնտեսության ցուցանիշները, որը էականորեն նվազեցնում է ՀՆԱ-ի ցուցանիշը ամբողջ հանրապետության մասշտաբով և հետևաբար՝ մեծապես անդրադառնում տարածքային ՀՆԱ-ի ցուցանիշի ճշգրտության վրա:

[100] Նույն տեղում:
[101] Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր

2. Տարածքային ՀՆԱ-ի ցուցանիշը տնտեսական վիճակը բնութագրող խիստագրեգացված ցուցանիշ է: Դաբացատրավում է այն հանգամանքով, որ որևէ տարածքի ՀՆԱ-ն, անկախ հաշվարկի մեթոդից, չի կարող հստակ ներկայացնել տվյալ տարածքի տնտեսական վիճակը, քանի որ այն չի հաշվարկվում ցուցանիշների հիման վրա, այլ ամբողջականացվում է՝ տալով ընդհանուր պատկեր: Օրինակ, Սյունիքի մարզի ՀՆԱ-ի զգալի մասը հանքարդյունաբերության և էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որը բաժին է ընկնում հիմնականում Կապան, Քաջարան, Գորիս, Ագարակ քաղաքներին, սակայն վերագրվում է ամբողջ Սյունիքի մարզին, և եթե հաշվարկների հիմքում դրվում է Սյունիքի մարզի 1 բնակչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունը, ապա վերջինս փաստացի վիճակը չի ներկայացնում: Ավելի խորը համեմատական վերլուծության համար անհրաժեշտ է կիրառել զբոսաշրջության սատելիտային հաշիվների համակարգը: Սատելիտային հաշիվները հնարավորություն կտան առավել հստակ նկարագրել ներմարզային տնտեսական իրավիճակը, համադրել այդ տվյալները մարզային և հանրապետական ՀՆԱ-ի ցուցանիշների հետ: Զբոսաշրջային սատելիտային հաշիվները ենթադրում են տարածքային զբոսաշրջության՝ տնտեսական հիմնային ուսումնասիրում՝ դիտարկելով այն որպես այցելուների կողմից ապրանքների և ծառայությունների լրացուցիչ պահանջարկի աղբյուր: Հարկ է նշել, որ զբոսաշրջության սատելիտային հաշիվների ներդրումը դեռևս փոքրաթիվ երկրներում են ամբողջությամբ իրականացվել: Զբոսաշրջային սատելիտային հաշիվների առկայությամբ կարևորվում են զբոսաշրջության բոլոր ասպեկտները՝ զբոսաշրջային ծախսերի կառուցվածքը, այցելուների սպասարկմանն ուղղված տնտեսական գործունեության տեսակները և այլն: Սատելիտային հաշիվների մեթոդաբանությամբ նախատեսված է նաև տարածքային տնտեսության լրացուցիչ մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկում, այն է՝ բնակչության զբաղվածության մակարդակը, ներդրումները, ընդհանուր զբոսաշրջության պահանջարկը զբոսաշրջության ոլորտում: Տարածքային զբոսաշրջության տնտեսական արդյունավետության գնահատականը

հիմք է ռազմավարական հեռանկարային ծրագրերի մշակման, պետական բյուջեի միջոցների բաշխման, տարածքային համաչափ զարգացման ապահովման և կառավարման հիմնախնդիրների կանոնակարգման նպատակով արդյունավետ որոշումների կայացման համար: Զբոսաշրջության սատելիտային հաշիվների վերլուծության արդյունքում հստակ կպարզորոշվի զբոսաշրջության դերը տարածքային զարգացման ենթատեքստում, ինչը կարող է լինել զբոսաշրջության տարածքային զարգացման հիմնախնդիրների հաղթահարման նախադրյալ: Գործնականում աշխարհի բոլոր երկրներում գոյություն ունի տվյալ երկրի տնտեսության վրա զբոսաշրջության ազդեցությունը բնութագրող արժանահավատ վիճակագրական տվյալների անհրաժեշտություն, որը հնարավորություն կընձեռի մշակել երկարաժամկետ ռազմավարություն և իրականացնել տարածքային զարգացման հիմնախնդիրների լուծմանն ուղղված արդյունավետ քաղաքականություն:

Հաշվի առնելով այս խնդիրը՝ առաջարկվում է ներդնել սատելիտային կամ, այլ կերպ ասած,օժանդակ հաշիվների հասկացությունը: Նշենք, որ զարգացած երկրներում արդեն իսկ սատելիտային հաշիվները ներդրված են բազմաթիվ ազգային վիճակագրական ծառայությունների և զբոսաշրջության հետ կապ ունեցող պրոֆեսիոնալ ինստիտուների կողմից, ինչպես նաև Միացյալ Ազգերի Կազմակերպության (UN) և Զբոսաշրջության միջազգային կազմակերպության (UNWTO) կողմից, որոնք մշակել և հրատարակել են սատելիտային հաշիվների ուղեցույցը;[102] Վերջինս հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմել ոլորտի վերաբերյալ, քանի որ զբոսաշրջության սատելիտային հաշիվները ենթադրում են զբոսաշրջության ոլորտի՝ որպես տնտեսական ֆենոմենի հիմնարար ուսումնասիրում՝ դիտարկելով այն որպես այցելուների կողմից ապրանքների և ծառայությունների լրացուցիչ պահաջարկի աղբյուր: Սատելիտային հաշիվների ներդրումը կարևորվում է այն հանգամանքով, որ վերջինս հնարավորություն է տալիս պատկերացում կազմել երկրի

[102]Պապոյան Ս.Դ., §Զբոսաշրջության զարգացման ֆինանսական հիմնախնդիրները¦, Ատենախոսություն. Երևան 2012, էջ 104-109:

տնտեսությունում զբոսաշրջության ազդեցությունը բնութագրող քանակական ցուցանիշների վերաբերյալ: Զբոսաշրջության համար հատկացված ծախսեր ասելով հասկանում ենք այցելուների կողմից ապրանքների և մատուցված ծառայությունների դիմաց կատարված վերջնական սպառման ծախսերը, անկախայն հանգամանքից, թե երբ են դրանք կատարվել: Վերջնական սպառման ծախսերը ձևավորում են ճանապարհորդության ընթացքում զբոսաշրջիկների կողմից սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռքբերման աշխատավարձի բնամթերային տեսքով լրացուցիչ վարձրատրություն /նկատի ունենալով իրենց գործուղած վարձու աշխատողների կամ հյուրերի համար սննդի արտադրական միավորի համար կատարված վճարումը/: Զբոսաշրջության սատելիտային հաշիվների միջոցով նախատեսվում է հաշվարկել զբոսաշրջության ոլորտի հետևյալ մակրոտնտեսական ցուցանիշները. Զբոսաշրջության ոլորտում ստեղծվող ավելացված արժեք, զբոսաշրջության ոլորտի ավելացված արժեք, զբոսաշրջության մասնաբաժինը ՀՆԱ-ում: Սատելիտային հաշիվների մեթոդաբանությամբ նախատեսված է նաև հետևյալ լրացուցիչ մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկումը՝ Բնակչության զբաղվածության մակարդակը զբոսաշրջության ոլորտում,Հիմնական միջոցներում կատարվող ներդրումները /համախառն կուտակում/, Կոլեկտիվ զբոսաշրջության սպառում, ընդհանուր զբոսաշրջային պահանջարկ;

Հարկ է նշել, որ թե՛ տարածքային ՀՆԱ-ի հաշվարկումը, թե՛ սատելիտային հաշիվների ներդրման համար վիճակագրական տվյալների բացակայությունը հաշվի առնելով՝ անհարաժեշտություն է առաջանում, ի լրումն վերջինիս, տարածքային անհամամասնությունների գնահատման այլ ցուցանիշներ կիրառել: Ուստի մեր կողմից ատենախոսության հետազոտության շրջանակում զբոսաշրջության տարածքային զարգացման անհամամասնությունների գնահատման նպատակով օգտագործվել է տարածքների զարգացման առանձին ուղղությունները բնութագրող ցուցանիշների վարիացիայի

գործակցի շարժընթացը՝ ըստ դիտարկվող ժամանակահատվածի: Այսինքն, որպես հիմք ընդունվել է հետևյալ բանաձևը

$$v = \frac{\sigma}{\bar{x}} = \frac{\sqrt{\frac{1}{N}\sum_{j=1}^{N}\left(x_j - \bar{x}\right)^2}}{\bar{x}} \qquad (2.1)$$

որտեղ σ-ն զբոսաշրջության զարգացման ցուցանիշի միջին քառակուսային շեղումն է,

$\bar{x}$- ն զբոսաշրջության զարգացման ցուցանիշի միջին մեծությունն է ըստ բոլոր տարածաշրջանների (տվյալ դեպքում՝ վերլուծության մեջ ներառված մարզերի),

x_j- ն զբոսաշրջության զարգացման ցուցանիշի արժեքն է j-րդ մարզում,

VN-ը ·գնահատման մեջ ներառված տարածքների, տարածքային տնտեսությունների քանակն է:

Որքան մեծ է վարիացիայի գործակիցը, այնքան մեծ են զբոսաշրջության տարածքային զարգացման անհամամասնությունները:

Վերը նշված բանաձևի կիրառմամբ հաշվարկվել են զբոսաշրջության տարածքային զարգացման անհամամասնությունները ՀՀ մարզերում և Երևանում: Առաջին հերթին՝ հաշվարկներն իրականացվել են ըստ մեր կողմից հաշվարկված տնտեսական և սոցիալական զարգացման համաթվերի արժեքների: Միևնույն տարածքային տնտեսության սահմաններում տարբեր գործառույթներ կատարող ճյուղերի միջև կախվածությունը կարելի է բնութագրել ճյուղային մասնագիտացման աստիճանի գնահատման ցուցանիշների միջոցով, որոնցից առավել լայն կիրառություն ունի մասնագիտացման գործակիցը: Այն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$S_i^r = \frac{P_i^r}{P^r} : \frac{P_i}{P} \qquad (2.2)$$

որտեղ՝ S_i^r-ը i- րդ ճյուղի (ոլորտի, տնտեսության հատվածի) r-րդ տարածքում մասնագիտացման գործակիցն է, ըստ որում, եթե $S_i^r \geq 1$,

ապա i-րդ ճյուղը համարվում է տվյալ տարածքային տնտեսության համար շուկայական մասնագիտացման ճյուղ,

P-ն համախառն թողարկումն է երկրում,

P_i-ը i-րդ ճյուղի (ոլորտի, տնտեսության հատվածի) համախառն թողարկումն է երկրում,

P_i^r-ը i-րդ ճյուղի (ոլորտի, տնտեսության հատվածի) թողարկումն է r-րդ տարածքում,

P^r-ն համախառն թողարկումն է r-րդ տարածքում:

Այս բանաձևի հիման վրա մեր կողմից իրականացվել է ՀՀ մարզերի և Երևանի տնտեսական մասնագիտացման աստիճանի հաշվարկ՝ ըստ տնտեսության առանձին ճյուղերի և ենթաճյուղերի: Ընդհանուր առմամբ, դիտարկվել են ծառայությունների, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության ճյուղերը:

Հավելված 3-ում ներկայացված են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի արդյունաբերական մասնագիտացման աստիճանի հաշվարկման արդյունքները:

Ստացված արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում արդյունաբերական մասնագիտացման առավել բարձր աստիճան ունեն Սյունիքի և Կոտայքի մարզերը, ուշագրավ են նաև Արարատի և Լոռվա մարզերի ցուցանիշները: Երևանը այս գործակցով ՀՀ մարզերի շարքում զբաղեցնում է ընդամենը 7-րդ տեղը, ըստ որում, դիտարկվող ժամանակահատվածում մայրաքաղաքի արդյունաբերական մասնագիտացումը էականորեն նվազել է: ՀՀ մարզերի մեծ մասն ունի գյուղատնտեսական մասնագիտացման բարձր մակարդակ (աղյուսակ 2.18):

Դիտարկվող ցուցանիշն ամենաբարձրն է Գեղարքունիքի մարզում, որտեղ գյուղատնտեսական մասնագիտացման մակարդակը 2009-2014թթ. ժամանակահատվածում աճել է մոտ երկու անգամ: Գյուղատնտեսական մասնագիտացման բարձր մակարդակ ունեն նաև Արագածոտնի, Տավուշի, Արմավիրի մարզերը (տե՛ս հավելված 4):

Շինարարության ճյուղի մասնագիտացման ամենաբարձր մակարդակն ունի Երևանը դիտարկվող ժամանակահատվածում շինարարության մասնագիտացման գործակիցը այստեղ 1.18-ից աճել է

մինչև 1.27-ի (աղյուսակ 2.19): Հանրապետության մնացած մարզերում շինարարության մասնագիտացման գործակիցը 2009-2014թթ. նվազման միտումներ է արձանագրել, որի արդյունքում 2009-ին դրանցից որևէ մեկում չի գրանցվել շինարարության մասնագիտացման ցուցանիշի 1-ից բարձր արժեք, այն դեպքում, երբ 1998-ին կար այդպիսի 4 մարզ, այսինքն՝ դիտարկվող ցուցանիշի արժեքների վերլուծությամբ ևս մեկ անգամ երևում է ՀՀ մայրաքաղաքում շինարարության կենտրոնացման միտումը:

Ի հավելումն վերը նշվածի, Երևանում մասնագիտացման ամենաբարձր մակարդակն է արձանագրվել նաև մանրածախ առևտրի և ծառայությունների ոլորտում (աղյուսակներ 2.20 և 2.21): Ընտրում, չնայած մանրածախ առևտրի և ծառայությունների մասնագիտացման գործակիցների՝ Երևանի համար հաշվարկված արժեքները 2009-2014 թթ. ընթացքում որոշակիորեն նվազել են, սակայն ՀՀ մարզերի համեմատությամբ դրանք դեռևս էականորեն բարձր են:

Աղյուսակ 2.3.

ՀՀ մարզերի և Երևանի մասնագիտացումը ըստ ծառայությունների ոլորտի

(2009-2014թթ.)

	2009	2010	2011	2012	2013	2014
Երևան	1,90	1,48	1,46	1,46	1,41	1,36
Արագածոտն	0,26	0,41	0,39	0,25	0,31	0,21
Արարատ	0,33	0,45	0,40	0,31	0,23	0,17
Արմավիր	0,19	0,30	0,30	0,30	0,30	0,21
Գեղարքունիք	0,37	0,50	0,34	0,38	0,29	0,21
Լոռի	0,49	0,60	0,51	0,35	0,38	0,37
Կոտայք	0,31	0,40	0,44	0,38	0,39	0,32
Շիրակ	0,66	0,68	0,79	0,79	0,66	0,54
Սյունիք	0,31	0,33	0,31	0,13	0,13	0,14
Վայոց ձոր	0,32	0,52	0,35	0,20	0,29	0,23
Տավուշ	0,35	0,56	0,45	0,41	0,39	0,30

Այսպիսով, Երևանի և ՀՀ մարզային տնտեսությունների մասնագիտացման մակարդակի հաշվարկման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ մարզերի մեծ մասում մասնագիտացման առաջնային ճյուղը շարունակում է մնալ գյուղատնտեսությունը, ինչպես նաև առանձին մարզերում նկատելի է մշակող արդյունաբերության 1-2 ենթաճյուղերով

մասնագիտացման խորացումը: Երևանը որոշակիորեն զիջել է իր դիրքերը, ինչը զուգակցվել է մի կողմից՝ ՀՀ մարզերի մեծ մասում շինարարության, ինչպես նաև մանրածախ առևտրի և ծառայությունների ոլորտներում Երևանի մասնագիտացման առաջանցիկ աճով:

1980-ականների վերջում և 90-ականների սկզբում ՀՀ-ում տեղի ունեցած տեղաշարժերի արդյունքում երկրի տարածքների միջև առկա բնական և սուբյեկտիվ բազում պատճառներով առաջացած տարբերությունները խիստ խորացան, որը պայմանավորված էր տարածաշրջանների շուկայի ազդակներին ոչ միանաշանակ հարմարվելու դժվարությամբ, ինչպես նաև պետական ֆինանսական աջակցության կտրուկ կրճատմամբ և պետության կարգավորիչ դերի խիստնվազմամաբ:

Ամփոփելով փաստենք, որ ՀՀ զբոսաշրջության ներուժը և ռեսուրսները սփռված են հանրապետության ողջ տարածքով. չնայած դրան, զբոսաշրջային գործունեությամբ զբաղվում են հիմնականում մայրաքաղաք Երևանում, և հենց մայրաքաղաքի զբոսաշրջային օպերատորներն են ձևավորում համայնքներում առկա ռեսուրսների զբոսաշրջային արդյունքը, և իրենք էլ այն իրացնելով ստանում են եկամուտներ, իսկ համայնքի բնակչությունը և համայնքային բյուջեն անմասն են մնում եկամուտներից, ինչն էլ հանգեցնում է համայնքների անհամաչափ զարգացմանը:

Ըստ որում, քանի որ, ինչպես արդեն համոզվեցինք, Երևանի և հանրապետության մարզերի միջև հատկապես տնտեսական զարգացումը պայմանավորող ցուցանիշների մասով կան էական տարբերություններ, ուստի զբոսաշրջության տարածքային տնտեսությունների զարգացման անհամամասնությունների գնահատումներում օգտագործվել են վարիացիայի ցուցանիշները՝ v_{11} և v_{10}: Առաջինը բնութագրում է հետազոտվող ցուցանիշի վարիացիան ըստ ՀՀ մարզերի և Երևանի: Երկրորդում հաշվարկներն արված են առանց Երևանի տվյալների, այսինքն՝ այն բնութագրում է հետազոտվող ցուցանիշի վարիացիան ՀՀ 10 մարզերի համար:

Աղյուսակ 2.2-ում ներկայացված են տնտեսական և սոցիալական զարգացման համաթվերի համար հաշվարկված գործակիցների արժեքները 2004-2014թթ. ժամանակահատվածի համար:

Աղյուսակ 2.2

ՀՀ մարզերի ու Երևան քաղաքի զարգացման անհամամասնությունների շարժընթացն ըստ տնտեսական և սոցիալական զարգացման համաթվերի

		2009	2010	2011	2012	2013	2014
Տնտեսական զարգացման համաթիվ	v_{11}	0,34	0,37	0,39	0,39	0,41	0.34
	v_{10}	0,28	0,28	0,29	0,27	0,23	0.19
Սոցիալական զարգացման համաթիվ	v_{11}	0,13	0,11	0,12	0,13	0,12	0.14
	v_{10}	0,13	0,11	0,11	0,12	0,11	0.11

Ըստ կատարված հաշվարկների արդյունքների, դիտարկվող ժամանակահատվածում տնտեսական զարգացման անհամամասնությունները հանրապետությունում խորացման կայուն միտումներ են դրսևորել: Ըստ որում, 10 մարզերի կտրվածքով հաշվարկված անհամամասնությունների մեծությունները դիտարկվող ժամանակահատվածում աճել են շատ ավելի փոքր չափով: Հատկանշական է, որ v_{10} գործակիցը տնտեսական զարգացման համաթվի պարագայում վերջին մի քանի տարիներին նույնիսկ նվազել է: Այսինքն, հանրապետության 10 մարզերում տնտեսական զարգացման մակարդակների որոշակի համահարթեցում է նկատվում: Ինչ վերաբերում է սոցիալական զարգացման համաթվի հիման վրա հաշվարկված անհամամասնությունների գործակիցներին, ապա ինչպես v_{11}-ի, այնպես էլ v_{10}-ի պարագայում նկատելի է զարգացման միջմարզային անհամամասնությունների նվազման միտում, որն, ի դեպ, ավելի ակնհայտ կերպով դրսևորվել է 2008թ-ից սկսած:

Մարզային տնտեսությունների և սոցիալական ոլորտի զարգացման անհամամասնությունների՝ ավելի հանգամանալից հետազոտություն իրականացնելու համար նպատակահարմար է վարիացիայի դիտարկվող գործակիցները հաշվարկել նաև ըստ տնտեսական և սոցիալական զարգացման համաթվի առանձին

բաղադրիչների: Այդ հաշվարկների արդյունքներն ամփոփված են աղյուսակներ 2.13 և 2.14-ում:

Աղյուսակ 2.3

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի զարգացման անհամամասնությունների շարժընթացն ըստ տնտեսական զարգացման համաթվի առանձին բաղադրիչների

Ցուցանիշը		2009	2010	2011	2012	2013	2014
Արդյունաբեր. արտադրանքի ծավալը, 1 բնակչի հաշվով	v_{11}	0,99	1,13	1,13	1,09	0,90	0.87
	v_{10}	1,07	1,24	1,22	1,20	0,98	0.91
Գյուղատնտ. համախառն արտ., 1 բնակչի հաշվով	v_{11}	0,44	0,42	0,42	0,41	0,41	0.39
	v_{10}	0,30	0,28	0,27	0,26	0,26	0.25
Շինարար. ծավալը, 1 բն. հաշվով	v_{11}	1,13	1,24	1,27	1,52	1,54	1.53
	v_{10}	0,69	0,82	0,64	0,84	0,86	0.84
Մարզի համախառն թողարկումը մեկ զբաղվածի հաշվով	v_{11}	0,71	0,80	0,79	0,81	0,83	0.82
	v_{10}	0,49	0,58	0,55	0,52	0,43	0.41
Ծառայութ. ծավալը, 1 բն. հաշվով	v_{11}	1,60	1,63	1,72	1,93	1,98	1.95
	v_{10}	0,26	0,24	0,22	0,26	0,30	0.26

Տնտեսական զարգացումը պայմանավորող ցուցանիշներից դիտարկվող ժամանակահատվածում վարիացիայի գործակիցների ամենափոքր արժեքներ և ամենաթույլ տատանումներ են արձանագրվել գյուղատնտեսության ցուցանիշի դեպքում: Սա նշանակում է, որ գյուղատնտեսությունը տնտեսության այն ճյուղն է, որտեղ միջմարզային անհամամասնություններն առավելթույլ կերպով են արտահայտված: Համեմատաբար փոքր տիրույթում են տեղի ունեցել նաև արդյունաբերության հարաբերական ցուցանիշների միջմարզային անհամամասնությունները բնութագրող գործակիցների տատանումները: Ըստ որում, արդյունաբերությունը թերևս այն եզակի ճյուղն է, որտեղ

գործակցի արժեքն ավելի փոքր է, քան գործակցինը: Սանշանակում է, որ Երևանում արդյունաբերական հզորությունների առկայությունը նպաստում է այս ճյուղում միջմարզային զարգացման անհամամասնությունների նվազեցմանը:

2014թ.-ի տվյալներով գործակցի ամենամեծ արժեքներն արձանագրվել են ծառայությունների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության ոլորտներում: Ըստ որում, ծառայությունների ոլորտում զարգացման անհամամասնությունների բարձր մակարդակ արձանագրվել է նաև մեկնարկային 2004թ-ին, այն դեպքում, երբ շինարարության ոլորտում նույն թվականին անհամամասնության մակարդակը շատ ավելի ցածր էր: Մեկ այլ դիտարկում՝ 2009-2014թթ. շինարարության ոլորտում անհամամասնությունների խորացումն ունեցել է կայուն միտում (չնայած 2009-ին 2014-ի համեմատ անհամամասնությունների կրճատում է արձանագրվել, սակայն դա էական բնույթ չի կրել և ընդհանուր միտումների վրա նշանակալի ազդեցություն չի թողել), իսկ ծառայությունների ոլորտում նման միտում սկսել է դրսևորվել 2007թ-ից սկսած: Հատկանշական է, որ գործակցի արժեքը ծառայությունների ոլորտում դիտարկվող ժամանակահատվածում էականորեն չի փոփոխվել: Սանշանակում է, որ այս ոլորտում անհամամասնությունների խորացման հիմնական <<դերակատարը>> Երևանն է, իսկ 10 մարզերում ծառայությունների ոլորտի զարգացման անհամամասնությունների էական աճ չի նկատվել: Նույնը, սակայն, չի կարելի ասել շինարարության համար: Այստեղ նշանակալի տատանումներ են գրանցվել: Բացի այդ, գործակցի արժեքները բավականաչափ բարձր են: Սանշանակում է, որ շինարարության ոլորտում առկա են զարգացման անհամամասնություններ ինչպես Երևանի և 10 մարզերի միջև, այնպես էլ այդ 10 մարզերի ներսում: Դիտարկվող ժամանակահատվածում գործակցի աճ է արձանագրվել նաև մանրածախ առևտրի ոլորտում, այն դեպքում, երբ գործակիցը, որոշակի տատանումներից հետո, վերադարձել է իր մեկնարկային կետը: Արդյունքում էականորեն աճել է և գործակիցների հարաբերակցությունը, ինչը նշանակում է, որ մանրածախառևտրում

Երևանի և մյուս մարզերի միջև առկա զարգացման անհամամասնությունները տարիների ընթացքում միայն խորացել են:

Զբոսաշրջությունը՝ որպես տարածքային անհամաչափ զարգացման գործոն, նպաստում է այն տարածական միավորների զարգացմանը, որոնք չունեն զարգացած արդյունաբերություն, բայց հարուստ են ռեկրեացիոն ռեսուրսներով: Տարածքային զբոսաշրջության ռեկրեացիոն ներուժի գնահատականը համարվում է կարևոր հիմք՝ տվյալ տարածքներում զբոսաշրջության ճիշտ կառավարման համար, որը միտված է առանձին ռեսուրսների և դրանց արժեքի համադրության և կարևորության որոշմանը, ինչպես նաև, ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ուղիների մշակմանը և տարածքների հավասարաչափ զարգացմանը: Ընդհանուր առմամբ տարածքային զբոսաշրջային ներուժի գնահատումը բաղկացած է մի քանի փոխկապակցված փուլերից: Դրանք են՝

Գնահատվող օբյեկտի որոշում, որը ենթադրում է, տարածքների մակարդակով մարզերի ուսումնասիրություններ, որտեղ գնահատման օբյեկտի դերում հանդես են գալիս գեոհամակարգերը: Այս փուլի հիմնական խնդիրներից մեկը տվյալ տարածքի հիմնավորված տարանջատումն է առանձին տարածքային միավորների, որոնք առանձնացվում են՝ կախված ուսումնասիրության նպատակից և տվյալ գեոհամակարգի առանձնահատկություններից: Գնահատվող օբյեկտի գնահատման չափանիշների մշակումները կարևոր են դրա արժեքի որոշման համար՝ ելնելով գնահատման նպատակի ձևակերպումից: Ըստ Էության, հիմնականում չափանիշները մշակվում են՝ հիմնվելով տվյալ ուսումնասիրության և առաջադրված խնդրի վերլուծության վրա:

Գնահատվող սուբյեկտի որոշում, որի տեսանկյունից էլ իրականացվում է օբյեկտի գնահատումը: Գնահատվող սուբյեկտի դերում հիմնականում հանդես են գալիս զբոսաշրջիկները, զբոսաշրջային-ռեկրեացիոն գործունեությամբ զբաղվողները՝ զբոսաշրջային գործակալությունները:

Օբյեկտի գնահատման չափանիշների մշակում, որոնք կարևոր են դրա արժեքի որոշման համար՝ ելնելով գնահատման նպատակի

ձևավորումից: Ըստ էության հիմնականում չափանիշները մշակվում են հիմնվելով տեղեկատվության հավաքագրման, անհրաժեշտության դեպքում գնահատման արդյունքների ստուգման ինչպես նաև զբոսաշրջության տարածքային զարգացման մրցունակության և գրավչության գնահատման արդյունքների հավաստի մեկնաբանման և ներկայացման համար: Վերոնշյալի համար հիմնականում օգտագործվում են գնահատման սանդղակային բալային կամ տոկոսային համակարգեր:

Առանձնացնենք տարածքային զբոսաշրջության վարկանիշային գնահատման հետևյալ ձևերը.[103]

- գործառական-տեխնոլոգիական,
- բժշկակենսաբանական,
- հոգեբանական-գեղագիտական,
- տնտեսական:

Գործառական-տեխնոլոգիական գնահատումը ցույց է տալիս զբոսաշրջային գործունեության /տեխնոլոգիաների/ արդյունքում առաջացած մարդու և բնության, շրջակա միջավայրի փոխազդեցությունը: Այստեղ մի կողմից՝ որոշվում է ռեսուրսների պիտանիությունը տարբեր բնույթի զբոսաշրջություն կազմակերպելու համար, մյուս կողմից՝ տարածքներում այս կամ այն տեսակի կառուցողաշինարարական գործունեություն ծավալելու հնարավորությունները: Տվյալ պարագայում գնահատման ընդհանրացված սուբյեկտի դերում հանդես է գալիս զբոսաշրջային արդյունաբերությունը: Զբոսաշրջության ոլորտի տեսանկյունից, զբոսաշրջային ռեսուրսը պետք է ունենա բարձր որակային հատկանիշներ՝ հարմարավետություն, առողջարարական հատկություններ, վերականգնվելու ունակություն և այլն, որոնք անհրաժեշտ և բավարար են բնակչության որոշակի զանգվածի հանգիստը կազմակերպելու համար:

Բժշկահոգեբանական գնահատումը ցույց է տալիս շրջակա միջավայրի գործոնների ազդեցությունը մարդու հոգեկան պահանջմունքի և ֆիզիոլոգիայի վրա: Հիմնականում այստեղ

[103] Indicators for measuring competitiveness in tourism: a guidance document, Alain Dupeyras, Neil MacCallum,2013/2

առավել տարածում ունեն կլիմայական գործոնների գնահատումը (քամիներ, խոնավություն, տեղումներ, ճնշման դաշտ, լուսավորություն և այլն): Նման գնահատման ուշադրության կենտրոնում գտնվում է մարդու օրգանիզմի ֆիզիոլոգիական և հոգեկան վիճակները՝ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ զգացողությունների վրա հիմնված: Տվյալ գնահատականի հիմնական նպատակը զբոսաշրջային տարածաշրջանի կլիմայական գործոնների՝ մարդու վրա ունեցած ազդեցությունների, աշխարհագրական օրինաչափությունների և զբոսաշրջիկների համար առավել բարենպաստպայմանների բացահայտումն է [104]:

Հոգեբանական-էսթետիկ գնահատումը բացահայտում է լանդշաֆտների Զգայական- Էմոցիոնալ ազդեցությունը մարդու վրա: Գնահատման տվյալ տեսակի կարևորությունը բացատրվում է նրանով, որ լանդշաֆտների և դրանց առանձին բաղադրիչների գեղագիտական գրավչությունը համարվում է շատ կարևոր ռեսուրս և նախապայման՝ տարածաշրջանում զբոսաշրջություն կազմակերպելու և զարգացնելու համար: Լանդշաֆտների ընկալումը սովորաբար գնահատվում է երկու ձևով՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ: Սուբյեկտիվ գնահատումը ենթադրում է լանդշաֆտների էսթետիկ գրավչության մակարդակի որոշումը՝ հիմնված փորձագետների տարբեր տեսակի հարցումների, գնահահատվող տարածքների բնակչության և այլ սուբյեկտների կարծիքների վրա: Հարցումների մաթեմատիկական և վիճակագրական մշակումից հետո ստացվում է լանդշաֆտի իրական տեսողական-գեղագիտական արժեքը: Իսկ որպես օբյեկտիվ գնահատման հիմք վերցնում են լանդշաֆտի տարբեր ֆիզիկական երևույթները՝ ռելիեֆի գրավչություն, ֆլորա և ֆաունա, գետեր, լճեր, լեռներ, դաշտեր, դիտակետերի առկայություն, որի շնորհիվ կարելի է հիանալ ողջ բնապատկերով:

Տնտեսական գնահատումը ենթադրում է օբյեկտի գնահատում կապիտալ ներդնելու արդյունավետության առումով: Բացի վերոնշյալ գնահատման ձևերից, հաճախ կիրառվում են նաև քանակական և որակական գնահատման տարբերակները: Զբոսաշրջային տարածաշրջանների որակական գնահատումը հիմնվում է գնահատվող

[104] Regional Growth, Competitiveness and Development, University of Szeged Faculty of Economics and Business Administration Doctoral School in Economics Szeged, 2013, pp 5-10:

օբյեկտների դասակարգման վրա՝ կախված դրանց ներուժից և զարգացման մակարդակից: Այս դեպքում կիրառվում են փորձագիտական մեթոդներ, դիսկրիմինանտային վերլուծություններ և այլն: Քանակական գնահատումը տեխնոլոգիական առումով ունի տարբեր տեսակներ, որոնք ընտրվում են ըստ տվյալ խնդրի լուծման մեթոդի:

Գնահատվող օբյեկտի որոշման փուլում հիմնական խնդիրը ուսումնասիրվող տարածքի հիմնավորված տարանջատումն է մնացածից, ինչը կախված է ինչպես ուսումնասիրության նպատակից, այնպես էլ գնահատվող տարածքի առանձնահատկություններից: Հաջորդ կարևոր գործոնը տարածքային զբոսաշրջության գնահատման գործում համարվում է գնահատման համակարգի մշակումն ու կիրառումը: Գնահատման սանդղակները սովորաբար կազմվում են՝ հիմնվելով փորձագիտական մեթոդների վրա՝ օգտագործելով մաթեմատիկական և վիճակագրական գործողություններ: Բացի ընտրված գնահատման չափանիշներ մշակելու հարցից, միավորային համակարգ մշակելը անհրաժեշտ է, որ այդ չափանիշները դասակարգվեն ըստ կարևորության՝ աճման կարգով: Սա օգնում է ճիշտ գնահատել տարածքը, և որքան կարևոր է այս կամ այն չափանիշը, այնքան մեծ է դրա դերը տվյալ զբոսաշրջային տարածքի համար: Չափանիշների կարևորությունը պարզելու համար հաճախ օգտագործվում են փորձագիտական մեթոդներ, ինչպես նաև կոռելյացիոն վերլուծություններ բոլոր գնահատվող հարաբերակցական չափանիշների միջև: Վերջինս ենթադրում է հարցազրույցների մեթոդները, հարցաթերթիկների մշակումն ու հարցումների անցկացումը: Նպատակահարմար չի կարելի համարվել աշխատանքում կիրառել արդեն իսկ պատրաստի չափանիշներ, որոնք մեկ այլ անձ իր աշխատանքի համար արդեն մշակել է: Պատճառն ավելի քան պարզ է. յուրաքանչյուր տարածքի համար չափանիշները տարբեր են՝ կախված տվյալ վայրի առանձնահատկությունից: Հարկ է նշել, որ զբոսաշրջային տարածաշրջանների դասական միավորային համակարգը ընդհանրացված տեսքով գնահատվող չափանիշների որոշակի ամբողջությունից վերածվում է ինտեգրալ ցուցանիշների:

Տարածքային զբոսաշրջության համակարգային վերլուծության տեսակետից պետք է նշել, որ այդ տարածաշրջաններն էլ իրենց հերթին մեկ ընդհանուր համակարգ են ներկայացնում, ինչն էլ հիմնականում արտահայտվում է տարածաշրջանների զբոսաշրջային-ռեկրեացիոն ռեսուրսների օգտագործումից առաջացած լրացուցիչ ազդեցությունների տեսքով: Այդ իսկ պատճառով զբոսաշրջային տարածքի գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել նաև այդ փաստը: Այսպիսով, զբոսաշրջային տարածաշրջանների գնահատումը ներկայումս համարվում է անհրաժեշտություն, և դրանում առկաեն բազմաթիվ տեսականորեն և մեթոդապես թերի մշակված հարցեր, որն էլ արդիական է դարձնում առկա չափանիշների և տարածքները գնահատելու նոր մոտեցումների ստեղծումն ու զարգացումը: Չափանիշներն ըստ իրենց տեսակների ներկայացված են չորս հիմնական խմբի տեսքով[105].

Աշխարհագրական և բնակլիմայական՝ ջրային ռեսուրսները /գետեր, լճեր և այլն/, ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը, կլիմայի բարենպաստությունը, դեստինացիայի հասանելիությունը:

Սոցիալ-տնտեսական համայնքի զբաղվածության և սոցիալ-տնտեսական մակարդակը, համայնքի բնակիչների հյուրընկալությունը, զբոսաշրջային դեստինացիայում որակավորված մասնագետների առկայությունը (բացակայությունը), մատուցվող ծառայությունների որակը՝ B&B-ների, ինֆորմացիոն և այլ կենտրոնների՝ զբոսաշրջությունից ստացվող եկամուտների ծավալը, զբոսաշրջիկների հոսքի մակարդակը:

Էկոլոգիական՝ օդի, խմելու ջրի և առողջարարական աղբյուրների մաքրությունը շրջակամիջավայրի աղտոտվածության աստիճանը, բնական ռեսուրսների գերսպառումը, էկոհամակարգի դեգրադացիան և այլն:

Մշակութային՝ պատմամշակութային հուշարձանների առկայությունը, նշանակությունը և պահպանությունը, թանգարանների առկայությունը, նշանակությունը և

[105] https://www.oecd.org/cfe/tourism/1902552.pdf, Roundtable: “regional policy and tourism” Key policy issues for discussion,p 5:

գրավչությունը, տոների, միջոցառումների անցկացումը, դրանց նշանակությունը և գրավչությունը:

Չափանիշների գնահատման համար ընտրվել է միավորային համակարգ՝ նվազագույնը 1, առավելագույնը 10 միավոր: Փորձագետների հետ համատեղ վերոնշյալ չափանիշները դասակարգվել են նաև ըստ դրանց կարևորության՝ օգտագործելով 1-5 միավորային սանդղակ: Աղյուսակ 2.4-ում բերված չափանիշների կարևորության գնահատականները 12 փորձագետների կողմից տրված գնահատականների միջինացված արժեքներն են:

Աղյուսակ 2.4. Զբոսաշրջային տարածաշրջանի գրավչության ու մրցունակության չափանիշները և դրանց կարևորության գնահատականը: /պատմամշակութային զբոսաշրջության տեսակի համար/[106]

	Չափանիշ	Կարևորու-թյուն
1	Պատմամշակութային հուշարձանների առկայությունը, նշանակությունը և պահպանությունը	5
2	Շրջակամիջավայրի աղտոտվածության աստիճանը	5
3	Մատուցվող ծառայությունների որակը	5
4	Զբոսաշրջային դեստինացիայում որակավորված մասնագետների առկայություն/բացակայությունը	5
5	Համայնքի բնակիչների հյուրընկալությունը	5
6	Այլ ծառայություններ /հյուրանոցներ, ինֆորմացիոն կենտրոններ, ինտերնետ, բանկային ծառայություններ/	4
7	Թանգարանների առկայությունը, նշանակությունը և գրավչությունը	4
8	Տոների, միջոցառումների անցկացումը, դրանց նշանակությունն ու գրավչությունը	4
9	Համայնքի զբաղվածությունը և սոցիալ – տնտեսական մակարդակը	4
10	Կլիմայի բարենպաստությունը	4

[106] Աղյուսակը կազմվել է մեր կողմից ինտերակտիվ հարցումների արդյունքում:

11	Դեստինացիայի հասանելիությունը	4
12	Օդի քիմիական բիոլոգիական մաքրությունը	4
13	Խմելու ջրի և առողջարարական աղբյուրների մաքրությունը	4
14	Բնական ռեսուրսների գերսպառման ռիսկը	4
15	Զբոսաշրջիկների հոսքի մակարդակը (օրինակ 1 տարվա կտրվածքով)	4
16	Զբոսաշրջությունից եկած եկամուտների ծավալը	3
17	Ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը	3
18	Ջրային ռեսուրսներ /գետեր, լճեր և այլն/	3

Օգտագործելով աղյուսակ 2.4-ում բերված չափանիշները և հաշվի առնելով փորձագետների կողմից տրված դրանց կարևորության գնահատականը, կարելի է ստանալ կոնկրետ դեստինացիայի գրավչության ու մրցունակության թե՛ դիֆերենցված գնահատականները, և թե՛ ընդհանրացված վարկանիշը: Չափանիշների կարևորության գնահատականները հաշվի առնելու նկատառումով վերջինս կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով[107].՝

Վ= (Չ1*Կ1+Չ2*Կ2+…….+Չ18*Կ18)/Գ,

որտեղ Վ-ն ընդհանրացված վարկանիշն է՝ 1-10,

Չ-ն չափանիշի փորձագիտական գնահատականը՝ 1-10,

Կ-ն չափանիշի կարևորության գնահատականը 1-5,

Գ-ն չափանիշի փորձագիտական գնահատականների գումարը:

Նշենք, որ ընդհանրացված վարկանիշը թեև կրում է պայմանական բնույթ, բայց կարող է օգտագործվել տարբեր զբոսաշրջային տարածքների վարկանիշների համեմատության համար: Ավելին՝ վերջիններս կարևոր են դիֆերենցված գնահատականների համար, որոնցով հնարավոր կլինի հայտնաբերել դեստինացիայի թույլ և ուժեղ կողմերը: Առաջինը պետք է կարգավորող միջոցներ ձեռնարկելու, իսկ երկրորդը՝ զբոսաշրջային ապրանք ստեղծելու և գովազդային ռազմավարություն մշակելու համար: Բացի չափանիշների

[107] file:///C:/Documents%20and%20Settings/Hha-Dek/Desktop/Indicators%20for%20Measuring%20Competitiveness%20in%20Tourism.pdf

փորձագիտական գնահատումից, ուսումնասիրության ընդհանուր և ամբողջական պատկեր ստանալու համար կիրառվում է նաև հարցումների անցկացումը, ընդ որում, հարցաթերթիկները կազմվում են՝ կախված ուսումնասիրվող զբոսաշրջային տարածաշրջանից, նրա առանձնահատկություններից և ուսումնասիրության նպատակներից:

Ամփոփելով փաստենք, որ ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը չի կարելի համարել բավարար, ինչը անկասկած կարող է բացասաբար անդրադառնալ զբոսաշրության տարածքային արգացման վարկանիշի վրա, ուստի մեր կողմից մշակվել է հարցաթերթիկ, որը նպատակաուղղված է այդ խմբի չափանիշների պատճառահետևանքային կապերի վերլուծության համար (տե՛ս հավելված 5), ներկայացված են թե համայքի բնակիչների, և թե զբոսաշրջիկներիի համար կազմված հարցաթերթիկներ: Զբոսաշրջության տարածքային գրավչության և մրցունակության գնահատում իրականացնելու համար ընտրանքային կարգով որպես զբոսաշրջային դեստինացիա դիտարկվում է Տաթևեր համայնքը: Ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության որոշմամբ վերջինս զբոսաշրջային կենտրոն է համարվում: Պարզելու համար վերջինիս համապատասխան լինելը իր կոչմանը փորձենք մեր կողմից արդեն մշակված չափանիշներով ինչպես նաև հատուկ կազմված հարցաթերթիկների միջոցով գնահատենք տարածքային զարգացման մրցունակությունը և գրավչությունը: Օգտագործելով հավելված 5-ի տվյալները կարելի է պարզել Տաթևերի ընդհանրացված վարկանիշը որպես զբոսաշրջային դեստինացիա: Դրա համար կիրառում ենք վերոնշյալ բանաձևը՝

$$Ч = \frac{/40+303+20+5+30+24+4+12+24+20+28+36+36+28+32+32+9+24+18/}{74} = 6.1$$

Ինչպես նշեցինք չափանիշների համար գնահատման համար սահմանվել էր 1-10 բալային սանդղակ, բանաձևի արդյունքից ակնհայտ է, որ Տաթևերի գրավչության և մրցունակության կամարդակը ընդհանրացված վարկանիշը միջինից բարձր է և կիրառելով տարածքային զարգացման գրավչության և

մրցունակության բարձրացմանն ուղղված առաջարկների փաթեթը հնարավոր կլինի ավելի բարձր ցուցանիշների հասնել:

ԳԼՈՒԽ3. ԶԲՈՍՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

3.1. Տարածքային զարգացման ապահովումը զբոսաշրջային կլաստերների կիրառմամբ

ՀՀ-ում կլաստերացման ներուժ ունեցող ոլորտներից է զբոսաշրջությունը, որտեղ վերջին տարիներին էական հաջողություններ կան,այնուամենայնիվ, զբոսաշրջության տարածքային զարգացման և մրցունակության բարձրացման տեսանկյունից կարևորվում է պետության ակտիվ մասնակցությունը միջազգային լավագույն փորձից բխող մեխանիզմներով և եղանակներով: Համաշխարհային փորձը վկայում է, որ կլաստերային մոտեցումն ամբողջ աշխարհում ընդունված է որպես տարածքային զարգացման, տնտեսությունների մրցունակության բարձրացման արդյունավետ քաղաքականության հիմք: Գոյություն ունեն տարածքային զարգացումն ապահովող տարբեր հայեցակարգեր, որոնցից տեսական և գործնական հիմնավորվածության ու կիրառելիության տեսանկյունից առանձնանում են հետևյալները[108՝]

- կլաստերային մոտեցման կիրառում,
- տարածքային տնտեսության ինովացիոն համակարգի զարգացում,
- տարածքային տնտեսության մրցունակության ձևավորման ներուժային գործոնների օգտագործում[109]:

Ընդհանուր առմամբ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ներկայումս զարգացած, ինչպես նաև զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների մեծ մասում կլաստերային մոտեցման կիրառումը տարածքային տնտեսության զարգացման քաղաքականության կարևոր ուղղություններից մեկն է:

Վերջինս, որպես տարածքային անհամաչափությունը մեղմացնող գործոն՝ նպաստում է այն տարածքների զարգացմանը, որոնք չունեն զարգացած գյուղատնտեսություն, արդյունաբերություն, բայց հարուստ լինելով ռեկրեացիոն

[108] Էլիզբարյան Ն.Ա.,«Զբոսաշրջային կլաստերների ազդեցությունը տարածքային տնտեսության մրցունակության վրա¦,«ՀՊՏՅ», Եղեգնաձորի մասնաճյուղ, 2015 թ էջ 125:

ռեսուրսներով՝ թեթևացնում են թույլ զարգացած տարածքային միավորներում բնակչության արտահոսքի և գյուղական կյանքի բացասական հետևանքները: Զբոսաշրջային կլաստերի ձևավորումը ազդեցություն է ունենում տարածքի ձևավորման վրա օբյեկտիվ և սուբյեկտիվ գործընթացների արդյունքում: Մի շարք երկրների փորձը ցույց է տալիս, որ ժամանցային ոլորտը հետամուտ է տնտեսության այն տարածքներին, որոնք տնտեսության ենթակառուցվածքների զարգացման համար ստեղծել են նվազագույն զարգացման մակարդակ[110]: Անդրադառնալով բազմարկչային արդյունքի ազդեցությանը՝ փաստենք, որ սպասարկման ոլորտի և նյութական արտադրության նպատակային համագործակցության դեպքում տնտեսության մի ոլորտի զարգացումը նպաստում է մյուսի զարգացմանը, որի սիներգետիկ արդյունքը սոցիալ-տնտեսական խնդիրների արդյունավետ լուծումն է: Զարգացած տնտեսությամբ երկրներում կլաստերային մոտեցման կիրառմամբ զբոսաշրջության տարածքային զարգացման քաղաքականության գործիքակազմի բաղադրիչներն են [111].

- Զբոսաշրջային կլաստերներին պետական աջակցության հիմնական մեխանիզմի ընտրությունը (կլաստերի գործարկման պայմանների ստեղծում կամ անմիջական աջակցության ցուցաբերում),
- պետական միջոցների տրամադրմանը հավակնող կլաստերների շրջանակի ընտրությունը (հնարավոր է ինչպես տարածքային կլաստերների լայն շրջանակի, այնպես էլ սահմանափակ թվով առաջատար կլաստերների ընտրություն),
- զբոսաշրջային կլաստերների աջակցության հիմնական նպատակի հստակեցումը, այն է՝ աշխատատեղերի ստեղծումը զբոսաշրջության ոլորտում, նոր ծառայությունների մշակումը և այլն:
- Հաշվի առնելով զբոսաշրջության ոլորտում կլաստերների ձևավորման և զարգացման փորձը՝ կարելի է եզրակացություն անել այն մասին, որ արդյունավետ կերպով զարգանում են հենց այն

[110] Абрамов М.А. География сервиса.М: Мысль, 1985 с 32.
[111] www.oecd.org/publications/Policybriefs, OECD, ‘’Competitive Regional Clusters:National Policy Approaches, ISBN 978-92-64-02708-4, 2010:

երկրները և տարածաշրջանները, որոնք իրագործում են կլաստերային ռազմավարություն, որն, իր հերթին, լրացուցիչ ներդրումների ներգրավմամբ ապահովում է տնտեսական համակարգերի մրցունակությունը զբոսաշրջության ոլորտում: Զբոսաշրջության տարածքային կլաստերների ձևավորման և զարգացման գործում մեծ դերակատարություն ունի պետությունը: Վերջինս պետք է շահագրգիռ ներդրողներին առաջարկի ազատ զբոսաշրջային գոտիներ՝ հյուրանոցների, հյուրատների կառուցման համար՝ տրամադրելով այսպես կոչված Ազատ հող կամ անվճար հողատարածք §Free land¦, որը կտրամադրվի ներդրողին խորհրդանշական գնային առաջարկով՝ ազատելով շահութահարկից եւ գույքահարկից մինչեւ 2026 թվականը:

Այս համատեքստում ՀՀ-ում զբոսաշրջության տարածքային զարագացման հիմնախնդիրների լուծումը, զբոսաշրջության մրցունակության բարձրացումը և ինովացիոն բաղկացուցչի ակտիվ կիրառումը, արդյունավետ պետական քաղաքականության մշակման և կենսագործման համար կարևոր նշանակություն ունեն: Մարզերում զբոսաշրջային կլաստերի ձևավորման և զարգացման քաղաքականության բնագավառում ՀՀ կառավարության հիմնական խնդիրը կլաստերային նախաձեռնությունների ստեղծման և իրագործման խթանումն ու աջակցությունն է: Նշված խնդիրը կենսագործելու համար հանրապետության կառավարությունը, իր իրավասության շրջանակներում, պետք է իրականացնի հետևյալ գործառույթները.



Գծապատկեր 3.1.2. Մարզերում զբոսաշրջային կլաստերի ձևավորման և զարգացման քաղաքականության ուղղությունները[112]

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերը նշված գործառույթներն ընդհանուր բնույթ են կրում, և դրանց կենսագործման արդյունավետության առումով առանցքային նշանակություն ունի նշված գործառույթների մշակման և իրագործման բովանդակային մասի հստակեցումը, ստորև առավել հանգամանորեն անդրադարձ է արվում նշված գործառույթներին, դիտարկվում է դրանց բովանդակային կողմը, նշվում են դրանց իրագործումն ապահովող միջոցառումները:

Զբոսաշրջային կլաստերների զարգացման քաղաքականության ընդհանուր ռազմավարության մշակումը ենթադրում է, որ պետք է ամրագրվեն զբոսաշրջային կլաստերների ձևավորման և զարգացման քաղաքականության շարժառիթները, նպատակները, խնդիրները և ուղղությունները: Ընդհանուր առմամբ, կլաստերային քաղաքականության նպատակը տարածաշրջանում սոցիալ-տնտեսական աճի որակի բարձրացումն է՝ տարածքային կլաստերները կազմող տնտեսվարող սուբյեկտների մրցունակության բարձրացման համար պայմանների ստեղծման հիմքի վրա: Տարածքային կլաստերային քաղաքականության նպատակներն ուղղված են երկրի առանձին տարածքներում մրցունակ կլաստերների ձևավորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Այդ խնդիրները ներառում են՝

- կլաստերների բնորոշումը,
- կլաստերային նախաձեռնությունների աջակցությունն և դրանց վերաբերյալ հանրային կառավարման տարբեր մակարդակների մարմիններին իրազեկումը,
- կլաստերների զարգացման խթանումը,
- կլաստերների գործունեության մոնիտորինգը և կլաստերային քաղաքականության արդյունավետության գնահատումը:

[112] Էլիգբարյան Ն. Ա. §Զբոսաշրջային կլաստերի ազդեցությունը տարածքային տնտեսության մրցունակության վրա¦, Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան, Եղեգնաձորի մասնաճյուղ Եղեգնաձոր 2015թ.

Նշված խնդիրներից յուրաքանչյուրը, իր հերթին, կարող է հստակեցվել՝ դրանց իրագործման ընթացքում կիրառվելիք մեթոդների և ձևերի հիման վրա:

Կլաստերային քաղաքականության իրագործման ավելի մանրամասնեցված ձևերը կարող են հանդիսանալ դրա մեթոդական ապահովումը, կազմակերպական միջոցառումները (հանդիպումների, գիտաժողովների, կլոր սեղանների կազմակերպում), կլաստերային նախաձեռնության իրագործմանը և կլաստերների զարգացմանը վերաբերող նորմատիվ-իրավական ակտերի ընդունումը, կլաստերների ենթակառուցվածքների զարգացման համար ֆինանսական միջոցների հատկացումը, ուսումնական կենտրոնների ստեղծումը և այլն:



Գծապատկեր 3.1.3. ՀՀ տարածքային կառավարման մարմինների կլաստերային քաղաքականության հիմնական տարրերը

Առանձին զբոսաշրջային կլաստերային նախաձեռնությունների աջակցության նպատակով զբոսաշրջային կլաստերային քաղաքականության հայեցակարգում պետք է նախատեսված լինի կառավարության կողմից տնտեսական քաղաքականության գործիքների և միջոցառումների օգտագործումը: Այս առումով, կարելի է առանձնացնել պետական քաղաքականության գործիքների և միջոցառումների կիրառման հետևյալ 4 առանցքային ուղղությունը.

- Մարդկային կապիտալի զարգացում, որը նախատեսում է զբոսաշրջային կրթության որակի բարձրացման միջոցառումների, որակավորման բարձրացման ծրագրերի իրականացում, մասնագետների ներհոսքի խթանում,

- գործարար նախաձեռնությունների աջակցություն, որը ենթադրում է բիզնես-ինկուբատորների ստեղծում, վարկային ռեսուրսների մատչելիության ապահովում, արտոնյալ լիզինգային պայմաններով սարքավորումների տրամադրում, հարկային արտոնությունների սահմանում, կազմակերպությունների գրանցման ընթացակարգերի պարզեցում, վարչական արգելքների նվազեցում:

- ներքին և միջազգային շուկաներում զբոսաշրջային կլաստերի ծառայությունների առաջխաղացմանը աջակցություն, որը ներառում է արտահանման, միջազգային չափորոշիչներով ծառայությունների սերտիֆիկացման, մարքետինգային հետազոտությունների իրականացման, ցուցահանդեսներին և տոնավաճառներին մասնակցության աջակցություն,

- զբոսաշրջային կլաստերի ենթակառուցվածքների զարգացում, որը ենթադրում է տրանսպորտային և ինժեներային ենթակառուցվածքների, կապի և հեռահաղորդակցության միջոցների զարգացման նախագծերի ֆինանսավորում:

Ինչ վերաբերում է մարզային իշխանություններին, ապա կարելի է առանձնացնել զբոսաշրջային կլաստերների ձևավորման և զարգացման քաղաքականության ոլորտում նրանց կողմից լուծվելիք խնդիրների հետևյալ չորս խմբերը. կոորդինացիոն, ինստիտուցիոնալ, ենթակառուցվածքային, կադրային:

Մարզային իշխանությունների համար կարևոր նշանակություն ունի մարզում առաջարկվող զբոսաշրջային ծառայությունների մրցունակության վերլուծությունը և այդ հիմքի վրա զբոսաշրջային ծառայությունների աճի առանցքների որոշումը, որոնք կարող են կլաստերների ստեղծման նախապայման հանդիսանալ: Նպատակահարմար է նաև մարզային իշխանությունների կողմից կլաստերային նախաձեռնությունների մասնակիցների համախմբմանը նպաստելը, կլաստերի մասնակից զբոսաշրջային ընկերությունների, զբոսաշրջային ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների՝ հանրապետական, տարածաշրջանային և միջազգային շուկաներ դուրս գալու գործընթացին աջակցելը, համատեղ մարքեթինգային հետազոտությունների և գովազդային միջոցառումների անցկացումը, զբոսաշրջային ընկերությունների, կազմակերպությունների և տարածաշրջանային գիտական ու կրթական հաստատությունների կոոպերացիայի խթանումը: Ի հավելումն նշվածի, անհրաժեշտ է նաև, որ մարզային իշխանությունների կողմից միջոցներ ձեռնարկվեն՝ ուղղված զբոսաշրջային կլաստերների զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի և տեղեկատվական-հաղորդակցային ենթակառուցվածքի ձևավորմանը, դրանց ստեղծման և գործունեության փորձի փոխանակմանը: Կարևոր նշանակություն ունի նաև կլաստերային կազմավորումների ձևավորման և գործարկման աջակցության մարզային ծրագրերի ընդունումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով պետության, տեղական ինքնակառավարման և գործարար հանրույթի ջանքերը զբոսաշրջային կլաստերների տեղակայման վայրերում սոցիալական և ինժեներային զարգացած ենթակառույցների ստեղծման, բնակչության սոցիալական հիմնահարցերի լուծման, ինչպես նաև կոոպերացիայի

գործընթացում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների բավարար ներգրավվածության ապահովմանն ուղղելուն:

Սանշանակում է, որ մարզային կառավարման մարմինները պետք է իրականացնեն զբոսաշրջային կլաստերային ցանցի առաջնորդի, արդյունավետ կապակցողի գործառույթներ: Այս կապակցությամբ մարզային իշխանությունների գործունեությունը հանգում է տարածքային զբոսաշրջային կլաստերի բոլոր մասնակիցների շահերի արդյունավետ համաձայնեցմանը, հիմնական մրցակցային գործունեության շուրջը տարածքային տնտեսության հատվածների միավորման համար պայմանների ստեղծմանը:

Մարզային իշխանությունների կարևոր խնդիրներից մեկը զբոսաշրջային կլաստերների մասնակից ձեռնարկություններին տեղեկատվական և
խորհրդատվական ծառայությունների մատուցումն է:

Տարածքային զբոսաշրջային կլաստերների նախաձեռնությունների կոորդինացման և տեղեկատվական-վերլուծական աջակցության ապահովման խնդրի լուծման շրջանակում նպատակահարմար է հետևյալ միջոցառումների իրականացումը.

- տարածքային զարգացման գործակալության ստեղծում,
- կլաստերի մասնակից ձեռնարկությունների համար խորհրդատվության և այլ ծառայությունների համակարգի ստեղծում,
- կլաստերային նախաձեռնությունների իրագործման մոնիտորինգի և գնահատման համակարգի ստեղծում: Դիտարկենք այս միջոցառումների հիմնական բովանդակությունն ու բնութագրիչները:

✓ ***Զբոսաշրջության տարածքային զարգացման գործակալության ստեղծում***

Այս գործակալությունը պետք է կոորդինացնի տարածքային զարգացման ռազմավարությունների և ծրագրերի կենսագործումը, ինչպես նաև իրականացնի առանցքային նախագծերի օպերատիվ կառավարումը: Սույն կառույցի համար անհրաժեշտ է մշակել դրա կարգավիճակը և իրավասությունները, ինչպես նաև տարածքային

տնտեսության հիմնական սուբյեկտների հետ փոխգործակցության համակարգը սահմանող իրավանորմատիվային փաստաթղթեր:

Մեր մոտեցմամբ, զբոսաշրջության տարածքային զարգացման գործակալության գործունեության հիմնական ոլորտներ պետք է հանդիսանան.

- տարածքային կլաստերային նախաձեռնությունների մասնակիցների համախմբումը և փոխգործակցության կոորդինացումը,
- տարածքային կլաստերային նախաձեռնությունների նոր մասնակիցների, ինչպես նաև արտաքին ներդրումների ներգրավման աջակցությունը,
- նախագծերի և ներդրողների օպերատիվ խորհրդատվական աջակցությունը,
- պետական իշխանության մարմինների, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտի կազմակերպությունների հետ կլաստերային նախագծերի իրագործման ընթացքի կոորդինացումը,
- կլաստերային նախաձեռնությունների իրագործման լավագույն փորձի տարածումը,
- տարածքային զբոսաշրջային կլաստերների՝ աշխատանքային ռեսուրսների նկատմամբ ներկայացվող պահանջարկի բավարարումը,
- տարածքային զբոսաշրջային կլաստերային նախաձեռնությունների մասնակիցների իրազեկվածության և բանիմացության մակարդակի բարձրացումը:

✓ ***Կլաստերի մասնակից-ձեռնարկությունների համար խորհրդատվությունների և այլ ծառայությունների համակարգի ստեղծում***

Տարածքային զբոսաշրջային կլաստերային նախաձեռնությունների իրագործման նպատակով անհրաժեշտ է կլաստերի մասնակից-ձեռնարկությունների համար ստեղծել խորհրդատվությունների և ծառայությունների համակարգ: Այն պետք է, առաջին հերթին, կողմնորոշված լինի դեպի կլաստերի մասնակից-ձեռնարկությունների մարքեթինգային աջակցության տրամադրմանը, գործող օրենսդրության մասով տեղեկատվական

ծառայությունների մատուցմանը, ինչպես նաև զարգացող և նոր ստեղծվող կազմակերպություններին փորձագիտական աջակցության տրամադրմանը:

Այս համակարգի ձևավորման համար պահանջվում է պետական կառավարման մարմինների՝ ներկայումս գործող կազմակերպական կառուցվածքների վերագնահատում, կողմնակի խորհրդատվական ընկերությունների ներգրավում, ինչպես նաև մարզային իշխանությունների համար նոր իրավաությունների ամրագրում և ընդլայնում, այդ թվում ներառելով.

- ընկերություններին մարկետինգային աջակցության տրամադրումը,
- գործարար և տնտեսական տեղեկատվության հավաքման և ժամանակին ներկայացման նպատակով ցանցային կառուցվածքների և գործարար կապերի զարգացումը և ամրապնդումը,
- գործարար շրջանակների ներկայացուցիչների միջև անհրաժեշտ տեղեկատվության տարածման նպատակով ինտերնետային էջերի մշակումը և աջակցությունը,
- գործարար լայն շրջանակներին վիճակագրական տվյալների և տեղեկատվության ներկայացումը,
- ՓՄՁ սուբյեկտների զարգացման և ընդլայնման աջակցության տրամադրման նպատակով տեղեկատվության տրամադրումը և ծառայությունների մատուցումը,
- գործարար տեղեկատվության տրամադրման §մեկ պատուհանի¦ սկզբունքի ներդրումը,
- ՓՄՁ և խոշոր ձեռնարկատիրության սուբյեկտներին գործարար պլանավորման աջակցության համար տարածքային տնտեսության արդյունավետության և հեռանկարների մասին հաշվետվության տրամադրումը:

✓ ***Զբոսաշրջային կլաստերային նախաձեռնությունների իրականացման մոնիտորինգի և գնահատման համակարգի ստեղծում***

Զբոսաշրջային կլաստերի ստեղծման և զարգացման քաղաքականության արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ է ստեղծել կլաստերային նախաձեռնությունների իրականացման

մոնիտորինգի և գնահատման համարժեք համակարգ: Մոնիտորինգի համակարգի ձևավորման կարևոր պայմանը դրա անընդհատությունն է, այսինքն՝ զբոսաշրջային կլաստերի աճին, ինչպես նաև կլաստերի զարգացումը խոչընդոտող արգելքներին իրական ժամանակում հետևելու հնարավորությունը:

Հարկ է նկատել, որ միջազգային գործնականում չկան կլաստերների արդյունավետ զարգացումը գնահատող և համընդհանուր ճանաչում ունեցող չափանիշներ: Գոյություն ունեն գնահատման համապատասխան մեթոդներ, որոնք հիմնվում են Մ.Պորտերի մոտեցման վրա (կլաստերային նախաձեռնությունների արտադրողականության մոդելը, կլաստերի մրցունակության մասին հաշվետվությունը): Սակայն նշված մեթոդները չեն կարող պատասխան տալ այն հարցին, թե որքանով է այս կամ այն կլաստերային նախաձեռնությունն արդյունավետ՝ իր բոլոր շահառուների տեսանկյունից:

Այդուհանդերձ, կարելի է առաջարկել անուղղակի ցուցանիշների մի հավաքածու, որոնք, իրենց համախմբության մեջ, կարող են պատկերացում տալ զբոսաշրջային կլաստերի արդյունավետության, իրականացման հաջողության, ինչպես նաև բացասական արգելքների չեզոքացմանն ուղղված պետական և տեղական իշխանության մարմինների ջանքերի արդյունավետության մասին:

Զբոսաշրջային կլաստերի ազդեցությունը տարածքային տնտեսության վրա բնութագրվում է ընկերության, կլաստերի և հատվածի մակարդակներում ավելացված արժեքի աճի ցուցանիշներով, մարզային ՀՆԱ կամ մարզային համախառն թողարկման կառուցվածքում կլաստերի մասնակից ձեռնարկությունների տեսակարար կշռով, կլաստերի մասնակիցների հարկային վճարումների ծավալով, կլաստերում զբաղվածների տեսակարար կշիռով ընդհանուր զբաղվածների կազմում: Մարդկային կապիտալի զարգացման մակարդակը խմբում ներառվում են աշխատանքի արտադրողականության մակարդակի ցուցանիշը, մասնագիտական վերապատրաստման ծրագրերի միջոցով կլաստերում ներգրավված մարդկանց և դիպլոմավորված

մասնագետների թվաքանակը, կլաստերի կարիքների համար մասնագետների վերապատրաստման ոլորտում գործարարության և կրթական հաստատությունների համագործակցության ծրագրերի քանակը, կլաստերում ներգրավված ուսանողների քանակը: Կապիտալի մատչելիությունը ներառում է ներգրավված ներդրումների ծավալի ցուցանիշները, կլաստերի գործունեությանը բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների մասնակցության գնահատականները, ենթակառույցների զարգացման մեջ պետական և մասնավոր ներդրումների ծավալները, տրամադրված դրամաշնորհների քանակը, ծառայությունների ոլորտի աճը: Այս խումբը կարող է բնութագրվել աութսորսինգի կարգով տրված աշխատանքների ծավալի, ներգրավված խորհրդատուների, կլաստերի կարիքների համար ապրանքներ և ծառայություններ տրամադրած ընկերությունների քանակի ցուցանիշներով:

Արտաքին կապերի զարգացման մակարդակը կարող է ներկայացվել համատեղ ձեռնարկությունների, արդյունաբերական միությունների, մարկետինգային կոնսորցիումների, արտաքին փոխանակումների քանակով:

Սոցիալական ակտիվության մակարդակը կարող է բնութագրվել մասնագիտական, գործարար և առևտրային ասոցիացիաների քանակով, դրանց մասնակիցների թվով, ակտիվության մակարդակով, փոխգործակցության արդյունավետության գնահատականներով:

Գործարար միջավայր խմբում կարելի է ներառել կլաստերում նոր բացված ընկերությունների քանակը, կլաստերում ներգրավված ընկերությունների քանակը, գնահատվող ժամանակահատվածում կլաստերի մասնակից-ձեռնարկությունների գործունեության և սպասելիքների վերաբերյալ նրանց շրջանում անցկացված անհատական հարցումների ընդհանրական գնահատականը: Նորամուծությունների զարգացումը կլաստերում կարելի է բնութագրել կլաստերի մասնակից-ընկերությունների կողմից նոր տեխնոլոգիաներում արվող ներդրումների ծավալով, ինչպես նաև թողարկված նոր ծառայությունների քանակով: Կլաստերի մասնակիցների մրցունակության մակարդակը կարելի է գնահատել

կլաստերի մասնակիցների կողմից կնքված գործարքների քանակով, կլաստերի ծառայությունների արտահանման ծավալով:

Այս ուղղությունը պետք է նախատեսի կլաստերային նախաձեռնությունների մասնակիցների համար արդյունավետ միջավայրի ձևավորում: Նպատակահարմար է մշակել կլաստերի մասնակիցների միջև մրցակցության և գործընկերության յուրահատուկ մթնոլորտի ձևավորման և երկարատև պահպանման գործիքներ: Կորպորատիվ կառուցվածքների գործունեության կանոնակարգման հարցերում խոսքն, առաջին հերթին, ոչ թե պարզապես պայմանագրերի համակարգի, այլ տարածքային զբոսաշրջային կլաստերի կորպորատիվ կառույցների ներսում ինովացիոն զարգացման և արդիականացման ակտիվ խրախուսման, կազմակերպություններում ստեղծագործական մոտեցումների կիրառման խրախուսման մասին է: Մարզային իշխանության մարմինների խնդիրը այնպիսի պայմանների ստեղծումն է, որոնց առկայությունը նպաստում է կլաստերի մասնակիցների միջև կադրերի, արտոնագրերի, քվոտաների համար մրցակցության զարգացմանը՝ համապատասխան գործիքների ամենալայն հավաքածուի կիրառմամբ:

Տարածքային զբոսաշրջային կլաստերի որակավորված կադրերի ներգրավման, պատրաստման և վերապատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը. Այս ուղղության շրջանակներում մարզային իշխանության մարմինների առանցքային խնդիրը տեղի բնակչության ռեսուրսների որակի բարելավումն է, այլ մարզերից կամ էլ նույնիսկ՝ այլ երկրներից որակավորված մասնագետների ներգրավումը՝ կլաստերի մրցակցային ներուժի ամրապնդման համար: Կլաստերի մրցունակության ապահովումը երկարատև ժամանակահատվածի ընթացքում հնարավոր է միայն որակյալ կադրերի վրա հիմնվող անընդհատ ինովացիոն գործընթացի միջոցով: Այս առումով անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել տեղի մասնագիտական կադրերին, որոնք ուսանել են կլաստերային բնական ռեսուրսների հատկությունների վերաբերյալ գիտելիքները: Այս հարթությունում մեծ դերակատարում կարող է

ունենալ նաև «Դիլիջան» միջազգային դպրոցը՝ նախաձեռնության բարեհաջող իրագործման դեպքում:

Կադրային խնդիրը լուծվում է տարածքային զբաղվածության, կրթական, փոքր ձեռնարկատիրության ոլորտում քաղաքականություններում նախատեսված գործիքների կիրառմամբ: Առանձնակի կարևորություն ունեն տարածքային ինովացիոն համակարգի ստեղծման միջոցառումները, որոնք նպաստում են կլաստերի ինտելեկտուալ զարգացման մակարդակի բարձրացմանը և ուղղակիորեն կապված են որակյալ կադրերով կլաստերային հանրության ամրապնդման հետ:

Տարածքային զբոսաշրջային կլաստերի զարգացման համար կիրառելի, մարդկային ռեսուրսների կառավարման գործիքների շարքում հատուկ ուշադրության պետք է արժանանան բուհերում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կլաստերի համար կրթական ծրագրերի համարժեքության և որակի բարձրացումը, որակավորման բարձրացման մասնագիտացված ծրագրերի ստեղծումը, կլաստերի կազմակերպություններում ուսանողների պրակտիկայի կազմակերպումը, աշխատանքային ռեսուրսների ներգրավման (այդ թվում՝ արտասահմանից) ծրագրերի ձևավորումը և իրագործումը: Մարզում զբոսաշրջային կլաստերի ձևավորման և զարգացման հայեցակարգի և համապատասխան ծրագրի արդյունավետ իրագործումը որոշակիորեն պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե ինչ չափով մարզի համայնքները մասնակից կլինեն կլաստերային քաղաքականության իրականացմանը:

Այս առումով, կարևորվում է համայնքների մակարդակով կլաստերային քաղաքականության գերակայությունների, ուղղությունների, միջոցառումների հստակեցումը:

- Համայնքների մակարդակում կլաստերային քաղաքականության իրագործման առանձնահատկությունները:
- Համայնքների մակարդակով կլաստերային քաղաքականության հիմնական գերակայությունները ներառում են՝ զբոսաշրջային ծառայությունների թողարկման և մատուցման շղթայում ներգրավված կլաստերի մասնակիցների ջանքերի կոորդինացումը, զբոսաշրջային ծառայությունների

տեսականու, իրացման շուկաների ընդլայնումը, կլաստերի մեջ մտնող ընկերությունների անձնակազմի մասնագիտական ունակությունների ընդհանուր մակարդակի բարձրացումը, կլաստերի մասնակիցների տնտեսական, իրավական և գույքային շահերի ներկայացումն ու պաշտպանությունը:

Այս հարթությունում համայնքային իշխանությունների հիմնական նպատակը պետք է լինի տեղի զբոսաշրջային ընկերությունների և այլ կազմակերպությունների մրցունակության բարձրացումը: Այդ նպատակի իրագործման համար տեղական իշխանության մարմինների ջանքերը, իրենց իրավասության սահմաններում, պետք է ուղղվեն /տես գծապատկեր 3.1.5/:



Գծանկար 3.1.5. Համայնքների մակարդակում կլաստերային քաղաքականության իրագործման առանձնահատկությունները



Գծանկար 3.1.6 Համայնքների մակարդակում կլաստերային քաղաքականության հիմնական ուղղությունները

Համայնքներում կլաստերային քաղաքականության մշակման և իրագործման համար անհրաժեշտ են կլաստերային զարգացման գծով մասնագետներ, իսկ գործարար հանրույթի և համայնքային իշխանությունների միջև փոխգործակցությունը կարելի է կազմակերպել զարգացման տեղական գործակալությունների միջոցով:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ համայնքների մակարդակում կլաստերային քաղաքականության մշակումը և իրագործումը բախվելու է մի շարք յուրօրինակ խնդիրների, որոնցից են ֆինանսական ռեսուրսների, որակյալ կադրերի անբավարարությունը, մարզային և կենտրոնական իշխանության մարմիններից, ինչպես նաև խոշոր բիզնեսը ներկայացնող կառույցներից վարչական և ֆինանսական կախվածությունը, համայնքի բնակչության և փոքր ձեռնարկատիրության առջև անբավարար պատասխանատվությունը և այլն: Այս խնդիրների լուծումը, համոզված ենք, կնպաստի համայնքային իշխանությունների կլաստերային քաղաքականության ակտիվացմանը: Այդ նպատակով, ինչպես վկայում է ոլորտում առկա միջազգային փորձը, անհրաժեշտ է մշակել համապատասխան ուղենիշային նախաձեռնություններ, որոնք ուղղված են համայնքային կլաստերների համար ընդհանուր, առավել սուր

խնդիրների լուծմանը և առկա հնարավորությունների արդյունավետ օգտագործմանը:

Այսպիսով, ամփոփելով մարզերում զբոսաշրջային կլաստերի ձևավորման և զարգացման հայեցակարգային և ծրագրային հիմնադրույթները և հիմնվելով դրանց վրա վրա՝ կարելի է ձևակերպել մարզում կլաստերային քաղաքականության իրագործման հետևյալ առաջարկությունները: ՀՀ մարզում զբոսաշրջային կլաստերի ձևավորման և զարգացման համար նպատակահարմար է ՀՀ հանրային կառավարման առանձին մակարդակներում հետևյալ միջոցառումների իրականացումը. մշակել և հաստատել զբոսաշրջային կլաստերային քաղաքականության հայեցակարգը և դրա իրագործման գործողությունների պլանը,
մշակել և հաստատել զբոսաշրջության զարգացման կլաստերային ծրագիր, մշակել պիլոտային կլաստերային ծրագրերի ընտրության և կենսագործման մրցութային մեխանիզմ, ներառելով հետևյալ մրցունակության գնահատում, կլաստերային կազմավորումների բացահայտում, կլաստերի ակտիվացման հայեցակարգի ստեղծում, կլաստերացման մեթոդների մշակում, կառավարող ընկերության կառուցվածքի մշակում, կլաստերացման գործընթացի ինտեգրումը տարածաշրջանի կամ մարզի զարգացման համալիր կամ ճյուղային ծրագրերում, կլաստերի զարգացման խթանման միջոցառումների մշակում, կլաստերի զարգացման համար ենթակառուցվածքի ստեղծում, մշակել մարզում զբոսաշրջային կլաստերային նախաձեռնությունների ֆինանսավորման դրամաշնորհային համակարգ,

- ձևավորել կլաստերային քաղաքականության հարցերով միջգերատեսչական կոորդինացիոն մարմին, որի կազմում պետք է ներառել պետական և տարածքային իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկատիրական կառույցների, գիտական և կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների ներակայացուցիչներին,
- ձևավորել կլաստերային նախաձեռնությունների տեղեկատվական բազա,

- մշակել կլաստերային նախաձեռնությունների իրագործման լավագույն պրակտիկայի վերաբերյալ իրազեկման և այդ փորձի տարածմանն ուղղված միջոցառումների համակարգ,
- մշակել կլաստերային նախաձեռնությունների միջազգային կապերի ընդլայնման աջակցությանն ուղղված միջոցառումների համակարգ,
- մշակել կլաստերային քաղաքականության տեղեկատվական և մեթոդական ապահովման, այդ թվում՝ կլաստերացման ոլորտում միջազգային տեսական և գործնական փորձի հետազոտման, ընդհանրացման և տարածման միջոցառումներ,
- մարզային և համայնքային իշխանությունների հետ համատեղ անցկացնել կլաստերային քաղաքականության սկզբունքների և մեխանիզմների վերաբերյալ մարզային և համայնքային գործարար և հասարակական շրջանակների տեղեկացմանն ուղղված գիտաժողովների, սեմինարների շարք, մշակել տարածքային մակարդակում կլաստերների զարգացման արդյունավետության մոնիտորինգի և գնահատման համակարգ:

Մարզերում մարզային իշխանությունների կողմից նպատակահարմար է՝

- մշակել պետական-մասնավոր գործընկերության կենսագործման գործողությունների պլաններ, ներառյալ գործարարության, գիտակրթական կառուցվածքների և իշխանությունների կանոնավոր փոխգործակցության համար հարթակների (տեխնոպարկեր, գործարար-պարկեր և այլն) ցանցի ստեղծում,
- իրականացնել մարզի զբոսաշրջային ընկերությունների և այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների մրցունակության վերլուծություն և այդ հիմքի վրա որոշել աճի այն կետերը, որոնք կարող են հիմք հանդիսանալ կլաստերների ստեղծման համար,
- մարզում կլաստերային նախաձեռնությունների իրագործման համար դիտարկել մարզային զարգացման գործակալության ստեղծման հնարավորությունը,

- ապահովել կլաստերային մոտեցման ներառումը մարզային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում և ռազմավարություններում,
- ապահովել մարզային գիտակրթական կառույցների և գործարար շրջանակների փոխգործակցությունը՝ ինովացիոն բնույթի նախագծերի իրագործման գործընթացում,
- նախապատրաստել արտաքին շուկաներում մարզի վարկանիշի և ծառայությունների առաջխաղացման մարքեթինգային ծրագրեր,
- գործարար և փորձագիտական շրջանակների հետ համատեղ մշակել մարզի զբոսաշրջության ոլորտի կարիքների համար մասնագետների ներգրավման, ուսուցման, վերապատրաստման, որակավորման բարձրացման ծրագրեր:

3.2. Զբոսաշրջության տարածքային զարգացման արդի գերակայությունները ՀՀ-ում

ՀՀ-ն ունենալով զգալի ներուժ՝ միջազգային զբոսաշրջության շուկայում աննշան տեղ է զբաղեցնում, ուստի զբոսաշրջային կլաստերների հեռանկարային ուղղությունների զարգացումը ոչ միայն խթան կհանդիսանա ՀՀ-ում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանման համար, այլև հնարավորություն կընձեռի զբոսաշրջային արդյունքի առաջարկի բազմատեսականացման շնորհիվ նպաստելու տարածքային զարգացմանը: Զբոսաշրջային կլաստերները զբոսաշրջության տարածքային զարգացման կարևոր գործիք են մարզերի համար, որտեղ տնտեսության այլ ոլորտները օրինակ՝ գյուղատնտեսություն, արտադրություն, շինարարություն, տրանսպորտ և ծառայություններ, կապվում են զբոսաշրջության հետ:

Տարածքային զարգացման հիմնախնդիրների լուծման համար ՀՀ ազգային մրցունակության հիմնադրամի կողմից առանձնացված միջանցքները կարող են միջոց լինել տարածքային զարգացման խնդիրներին կապակցված լուծում տալու համար: Դիտարկենք այդ միջանցքները.





Գծանկար 3.2.1. ՀՀ ազգային մրցունակության հիմնադրամի կողմից առանձնացված միջանցքները[113]

Մեր հետազոտության շրջանակներում առավել հանգամանորեն անդրադառնանք Հարավային միջանցքին և տվյալ հատվածում զբոսաշրջության տարածքային զարգացման հնարավորություններին: Հարավային միջանցքի զբոսաշրջության համալիր զարգացման համար առանձնահատուկ կարևորություն ունեցող հինգ կլաստերներ են՝

Գծապատկեր 3.2.1. Հարավային միջանցքի զբոսաշրջության համալիր զարգացման կլաստերները

Յուրաքանչյուր կլաստեր օժտված է տարբեր առանձնահատկություններով և գրավչություններով, որոնց հիման վրա կարելի է ստեղծել Հարավային միջանցքի առանձին շրջանների տարբերակիչ բնութագիրը, որը կամրապնդի զբոսաշրջային արդյունքի բազմազանությունը և կստեղծի զբոսաշրջիկի փորձառության համար ավելի պարզ մտապատկեր: Կլաստերների ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ Եղեգնաձորի, Ջերմուկի և Սիսիանի կլաստերները ի տարբերություն Գորիսի և Տաթևի կլսատերների, ինքնուրույն են: Գորիսը կատարում է Ստեփանակերտ տանող ուղու դեր, որն իր

[113] Գծանկարը կազմված է մեր կողմից ՀՀ ազգային մրցունակության հիմնադրամի կողմիցն առանձնացված միջանցքների:

հերթին ավելի է խորացնում կլաստերների փոխհամագործակցումը, իսկ Տաթևի կլաստերը ծառայում է, որպես հարավային շրջաններ տանող դարպաս դեպի Մեղրի և Իրան: **Եղեգնաձորի կլաստերն** ունի զբոսաշրջային գրավչությունների կենտրոնացման ամենաբարձր խտությունը՝ Հարավային միջանցքի այլ կլաստերների համեմատությամբ (Հավելված 3.2.2): Եղեգնաձորն ինքնին առանձնահատուկ գրավիչ զբոսաշրջային ուղղություն չէ, այն հիմնականում այցելում են գնումների, տարադրամի փոխանակության և հյուրատներից մեկում մնալու համար: Այստեղ համեմատաբար քիչ են սննդի կետերը, իսկ գիշերակացի առաջարկը քաղաքում ներկայումս սահմանափակ է. հիմնականում գերակայում են հյուրատները, հյուրանոցների քանակը բավականին քիչ է /Լուսիտուր հյուրանոց, Արփա հյուրանոց, Գոհար հյուրատուն/ մոտավորապես թվով 3 հյուրանոց[114]: Զբոսաշրջային տեղեկատվական ենթակառուցվածքը զարգացած չէ: Կլաստերի ինքնությունը պետք է կենտրոնանա պատմական ակտիվների և գործունեության վրա իսկ Եղեգնաձոր քաղաքը կարող է հանդես գալ որպես այդ պատմական շրջանի սպասարկման կենտրոն[115]: Այդ կլաստերում կենտրոնացած ռեսուրսների մեծ ծավալի շնորհիվ ակնկալվում է, որ ենթակառուցվածքային բարելավումը (մասնավորապես՝ ճանապարհների բարեկարգումը, տեղեկատվության տարածում, կարող են նպաստել զբոսաշրջության ոլորտի զարգացմանը:

Ջերմուկը կարելի է համարել առավել առողջարանային բուժման մեծ ժողովրդականություն վայելող հայտնի զբոսաշրջային ուղղություն: Ջերմուկի մերձակայքը հարուստ չէ պատմական և կրոնական հուշարձաններով, սակայն այն հարուստ է բնության գրավչություններով: Հարկ է նշել, որ զբոսաշրջիկների թիվը շատ ավելի փոքր է հսկայական ներուժի նկատմամբ: 2016 թվականի առաջին 10 ամիսների ընթացքում զբոսաշրջիկների թիվը հասել է 28000-ի[116]: Զբոսաշրջիկների համար Ջերմուկ քաղաքը զբոսաշրջային գրավչությունների տեսանկյունից գրավիչ է

[114] http://www.visitarm.com/hy/yeghegnadzor-hotels
[115] նույն տեղում:
[116] http://vdzor.mtad.am/files/docs/17978.pdf,Հաշվետվություն ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի 2015 թվականի երկրորդ կիսամյակի արդյունքների վերաբերյալ

ձմեռային սպորտաձևերի և առողջարանային բուժման հասանելիությամբ: Ջերմուկի կլաստերն առավել նշանակալից են դարձնում Ջերմուկի կիրճը և Հերհերի արգելավայրը: Մարզում գործում են բազմաթիվ ժամանցի վայրեր, հիսունից ավելի առողջարաններ և հյուրանոցներ, 32 մշտական և 47 սեզոնային սննդի օբյեկտ, 81 տնային հյուրանոց, 6 գինու համտեսի սրահներ[117]: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը: Դրանով է պայմանավորված ՌԴ-ում զբոսաշրջությամբ զբաղվող հայ գործարարների խոշոր ներդրումները Ջերմուկ քաղաքում, մասնավորապես "Ջերսան" հյուրանոց ջրաբուժարանի կառուցումը և Ջերմուկ քաղաքի "Ռեզորդ" առողջարանի կառուցումը: Ընդհանուր անմամբ Ջերմուկ քաղաքում գործում է 8 առողջարան, 12 հյուրանոց և շուրջ 25 հյուրատուն: Ամբողջը միասին կազմում է 1420 մահճակալ/օր:

Սիսիան քաղաքն աչքի է ընկնում հարուստ բնաշխարհով, որն առավել ընդգծվում է լեռների առկայությամբ, ու այս ամենի համադրումը քաղաքին տալիս է յուրահատուկ գեղեցկություն: Ճարտարապետական շինությունների բացակայությունը քաղաքին չեն զրկում զբոսաշրջային դեստինացիա լինելու հնարավորությունից: Սիսիանի կլաստերի տարածքում են գտնվում մի քանի արժեքավոր պատմական հուշարձաններ՝ Զորաց քարերը, Ուխտասարի ժայռապատկերները և Որոտնավանքը[118]: Բնության գրավչությունները ներառում են՝ Ծաքի գետը և ջրվեժը, ինչպես նաև գեղատեսիլ Տոլորս լիճը[119]: Այլ կլաստերների համեմատությամբ՝ Սիսիանի կլաստերում Տոլորս լճի ափը կարող է հարմար վայր լինել համալիր հանգստի կազմակերպման համար, որը ընտանեկան հանգստի համար զբոսաշրջային այցելությունների ծավալների աճը խթանելու առումով մեծ թվով զբոսաշրջիկներ կարող է ընդունել:

---

[117] http://vdzor.mtad.am/files/docs/17978.pdf,Հաշվետվություն ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի 2015 թվականի երկրորդ կիսամյակի արդյունքների վերաբերյալ

[118] êáõí³ñÛ³Ý Ú.Ø., ¦Զբոսաշրջության մրցունակությունը և զարգացման ուղղությունները ՀՀ-ում§ º ñ¨³Ý 2014, ¿Ã 56-70

[119] նույն տեղում

Գորիսը հայտնի զբոսաշրջային ուղղություն է, որի գրավչությանը, ի տարբերություն Սիսիան քաղաքի, նպաստում են քաղաքային ճարտարապետությունը և տպավորիչ բնության գրավչությունները: Գորիսը Հայաստանի հարավի ամենագրավիչ քաղաքներից կարելի է համարել, որն առանձնանում է մոխրագույն քարից կառուցված բազմաթիվ երկհարկանի շենքերով և բարձրահարկերի իսպառ բացակայությամբ: Քաղաքը շրջապատող լեռնային մասում կարելի է տեսնել աչքեցուցիչ գեղեցկության սուր գագաթներով ժայռաբեկորներ, որոնք ընդգծում են բնության հրաշալիքները իրենց ամբողջ հմայքով: Գորիսում հյուրանոցների և կացարանների ծառայությունների որակը համապատասխանում է զբոսաշրջիկներին որակյալ ծառայություն մատուցելու հնարավորությունը: Հյուրանոցներից /Եղևնուտ՝ 3 աստղ, Դիանա՝ 3 աստղ/:Լինելով երկրի այդ հատվածի ամենամեծ քաղաքային բնակավայրը՝ Գորիսը նաև ուղի է դեպի: Առավել նշանակալից զբոսաշրջային ուղղություններ են Գորիսի մերձակայքում գտնվող քարանձավային բնակավայրերը, ինչպես նաև Խնձորեսկը իր տպավորիչ բնության գրավչություններով[120]: Գորիսում զբոսաշրջության զարգացման, տեղական զբոսաշրջային ռեսուրսների մասին տեղեկատվության տարածման գործում էական նշանակություն ունեն զբոսաշրջային գործակալությունները, որոնք կներկայացնեն մարզի սովորույթները, ավանդույթները [121]: Զբոսաշրջության զարգացման համար (որն ուղղակիորեն կարող է նպաստել նաեւ զբաղվածության խնդրի լուծմանը) կարեւոր է նաև սպասարկման որակի բարելավումը, այդ գործում տեղական կադրերի ներգրավումը[122]: Այս առումով շահեկան կլիներ, եթե քաղաքում գտնվող բարձրագույն, միջնակարգ-մասնագիտական կրթօջախները նոր մասնագիտություններ ընդգրկեն, քանի որ ճարտարագետներ, մանկավաժներ պատրաստող Գորիսի պետական համալսարանի շրջանավարտների զգալի մասը շարունակում է համալրել գործազուրկների բանակը կամ աշխատանք գտնելու համար

[120] www.minecinimy.am,Զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունները, Երևան 2015, էջ 5-7:
[121] Նուն տեղում:
[122] նույն տեղում:

վերապատրաստվում են, օրինակ՝ «Տաթեւեր» ճոպանուղում աշխատանքի անցնելու համար:

Տաթևի կլաստերը բնութագրվում է գյուղերի շարքով՝ գեղեցիկ բնաշխարհով, որտեղ սփռված են տարբեր պատմական տեսարժան վայրեր: Հայտնի է, որ Տաթևում գործում է տարածաշրջանում ամենաերկար երկխցիկ, հետադարձ ճոպանուղին, կարելի է պնդել, որ վերջինս առագաստ է տարածքային զբոսաշրջության զարգացման համար: Ուսումնասիրելով և համադրելով Տաթևի կլաստերի հնարավորությունները՝ մեր կողմից առաջարկվում է կիրառել տարածքային զարգացման մոդել, որը հնարավոր է կրկնօրինակել և կիրառել գյուղական բոլոր համայնքներում: Այդ մոդելը ենթադրում է /հաց և կաց/ հյուրատների և գյուղական տների ստեղծմանն աջակցելու նպատակով ընտանեկան, ռեստորանատիպ հաստատությունների ստեղծում, որոնք տեղակայում են բնակիչների տներում: Թե՛ հյուրատները և թե՛ գյուղական տները այցելուներին կպարգևեն գյուղական կյանքի իսկական համն ու զգացողությունը: Արդյունքում երկուսն էլ անմիջականորեն կնպաստեն տեղական տնտեսության զարգացմանը և հավելյալ արդյունքի ստացմանը գյուղական վայրերի զբոսաշրջության ենթակառուցվածքներում: Օրինակով ներկայացվում է վերը նշված մոտեցումը. օրինակ, Տաթևը՝ որպես Հայաստանի զբոսաշրջության հարավային միջանցքի հիմնական գրավական, ընտրվել է որպես առաջին վայրը, որտեղ կմշակվի ու կիրականացվի տարածքային զարգացման մոդել համայնքային զբոսաշրջային նախաձեռնությունների գործարար մոդելը: Ապագայում նման մոդել կարելի է կիրառել գյուղական այլ վայրերում՝ հարմարացնելով յուրաքանչյուր գյուղի առանձնահատկություններին և կարիքներին: Տվյալ մոդելի գլխավոր նպատակը Հայաստանի մարզերում համայնքային զբոսաշրջության ամուր գործարար մոդելի ստեղծումն է: Ակնկալվող արդյունքը Տաթևում հինգ հյուրատուն և երկու գյուղական տուն բացելն է: Այս մոդելի առանցքային սկզբունքներն են կայունությունն ու ռիսկերի հավասարակշռված

դիմակայումը մոդելի բոլոր մասնակիցների կողմից[123]: Համայնքային զարգացման ծրագրերի ու նախաձեռնությունների իրագործման միջազգային փորձը հարում է համագործակցային մոդելներին՝ դրանց կենսունակության համար, որտեղ համայնքի բնակիչները միավորվում են մեկ ընդհանուր կազմակերպության ներքո, ինչպիսիք են, օրինակ, ասոցիացիաները և կոոպերատիվները: Այս ծրագրի իրականացման ամենահարմար մոդելը համագործակցայինն է, որի դեպքում հյուրատների ու գյուղական տների սեփականատերերը ստեղծում են կազմակերպություն, որի իրավական ձևը կարող է լինել կոոպերատիվ, ասոցիացիա, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, որն էլ դառնում է ծրագրի հիմնական գործառնական մարմինը: Տաթև գյուղի համար այս ծրագրի արժեքը կազմում է 85,000 ԱՄՆ դոլար (որից 64,500-ը վարկավորմամբ, իսկ 21,000-ը՝ որպես դրամաշնորհ)[124]: Հաշվի առնելով /Հաց և կաց/ հյուրատների զարգացման ծրագրի աշխարհագրությունը՝ զբոսաշրջիկների համար կարող է լինել գիշերելու համար հրաշալի այլընտրանք ճանապարհային վրանների փոխարեն, որն էլ իր հերթին կլինի շահութաբեր այդ արահետներին մոտգտնվող համայնքների համար:

Ընդհանուր առմամբ զբոսաշրջության տարածքային զարգացումն առավել արդյունավետեղանակով իրականացվում է այն դեպքում, երբ մշակվում են մի շարք տարածքային պլաններ, որոնք հիմնվում են տվյալ մարզի առանձնահատկությունների, ուժեղ և թույլ կողմերի և որոշ բաղադրիչային ոլորտների առաջնահերթությունների վրա:

Աղյուսակ 3.2.2. Հարավային միջանցքի զբոսաշրջային արդյունքի առաջարկի ՈՒԹՀՎ (SWOT) վերլուծություն

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
Հարավային միջանցքի պատմամշակութային դեստինացիաների հասանելիություն	Միջանցքով ձգվող ճանապարհային ենթակառուցվածքի/ճանապարհների ծածկույթների մեծ մասի վատորակը:

[123] Ú.Ø. êáõí³ñÛ³Ý, ¦Զբոսաշրջության մրցունակությունը և զարգացման ուղղությունները ՀՀ-ում , ºñ¨³Ý 2014, ¿Ã 56-70:

[124] Ն.Ա.Էլիզբարյան, ¦Ներդրումների խթանման հիմնախնդիրները զբոսաշրջության ոլորտում, Երևան, 2014, էջ 35:

Բնության գրավչությունների բազմազանություն	Գործող կացարանների մեծ մասի համեմատական բազային որակը:
Մշակութային առաջարկի խորությունն ու հարստությունը՝ ներառյալ, օրինակ, Միջանցքի կապը Մետաքսի ճանապարհի հետ:	Ամբողջ շրջանում կոյուղաջրերի հեռացման առկա համակարգի վատ վիճակը:
Տեղի բնակչության հյուրընկալությունը:	Մտահոգություն, որ զբոսաշրջության զարգացման և կառավարման բյուրոկրատական գործընթացները:
Զբոսաշրջային օպերատորների/ զբոսաշրջային ծառայություն-ներ մատուցող այլ անձանց առկայությունը:	Զբոսաշրջությանն առնչվող տեղեկատվական և բացատրական նյութերի սահմանափակ մատչելիությունը: Ներկայումս առաջարկվող մշակութային և սպորտային միջոցառումների, տոների սահմանափակ տեսականին:

Հնարավորություններ	**Վտանգներ**
Վերջին մի քանի տասնամյակներում համաշխարհային ժամանցային զբոսաշրջության ծավալների աճի միտումը:	ՀՀ հարավում հանքարդյունահանման գործունեության հետ կապված պոտենցիալ բացասական ազդեցություններ
Կառավարության պրոակտիվ մոտեցումը զբոսաշրջության զարգացմանը:	Ապագայում միջանցքի չհամակարգված զարգացման հետ կապված ռիսկերը: Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հակամարտության առկայությունը
Ներգնա զբոսաշրջության ծագման շուկաների հետաքրքրության մակարդակի աճն արկածային զբոսաշրջության հանդեպ:	Լարվածություն միջանցքը շրջապատող որոշ սահմանամերձ շրջաններում:
-	Միջազգային զբոսաշրջության շուկայում մրցակցության աճ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հետզհետե ավելի շատ երկրներ են կարևորում զբոսաշրջությունը՝որպես տնտեսական զարգացման և զբաղվածության ապահովման աղբյուր:
Ներքին շուկայի բարեկեցության մակարդակի աճը, որը կխթանի ներքին զբոսաշրջության զարգացումն	

առաջիկա տարիներին:	
Ազդեցիկ Սփյուռք ունենալու հետ կապված օգուտները (այն է՝ ներդրում, զբոսաշրջություն, իմտություններ, կրթություն):	

Հիմնվելով հարավային միջանցքի ուժեղ և թույլ կողմերի հետազոտության արդյունքների վրա՝ զբոսաշրջության տարածքային զարգացման հիմնախնդիրների հաղթահարման համար անհրաժեշտ է.

- **Պատմական վայրերի վերականգնում և նորովի մեկնաբանում:** Հարավային միջանցքում առկա են պատմամշակութային արժեքներ, որոնք զբոսաշրջիկի վրա դրական ազդելու մեծ հնարավորություն ունեն: Այդ արժեքների նորովի մեկնաբանությունը կարող է կյանքի կոչել այդ գրավչությունների հիմքում ընկած պատմությունների վերաիմաստավորումը և զբոսաշրջիկներին նորովի մատուցելու ունակությունը[125]:
- **Համալիր զբոսաշրջային ուղղություն:** Ժամանակի ընթացքում՝ զբոսաշրջության շուկայի զարգացմանը համընթաց, համալիր հանգստի ուղղություններ ներկայացնելու

[125] Էլիզբարյան Ն.Ա. «Զբոսաշրջության ազդեցությունը տնտեսության, մշակույթի և բնապահպանության վրա», հատոր 8, համար 4, 2011 էջ 643-646

հնարավորություններ՝ բնության միջավայրերում, որտեղ կառաջարկվի նաև ժամանցային գործունեության համար բազմազանեցված տեսականի: Վերջինս ներառում է հյուրընկալության/ հյուրանոցային ծառայությունների բաղադրիչ և ամառանոցային տիպի խառը ենթակառուցվածքներ՝ համայնքային միջավայրը ներգրավելու պայմանով: Նմանատիպ զարգացումները և դրանց գրագետ իրականացման դեպքում, վերջիններս կարող են վերածվել իրացվելիության բարձր մակարդակ ունեցող ակտիվների:

- **Փառատոների և միջոցառումների անցկացում:** Հարավային միջանցքում կազմակերպվում են փոքրաթիվ միջոցառումներ, որոնք կարող են գրավել զգալի թվով զբոսաշրջիկների: Օրինակ՝ խոհանոցային փառատոներ, բերքահավաք, երաժշտական կամ կրոնական միջոցառումներ, գինու փառատոն) նմանատ միջոցառումները կարող են օգտագործվել նոր զբոսաշրջային այցելությունները խրախուսելու և տարածքներում այցելությունների թիվը կրկնապատկելու նպատակով: Հաշվի առնելով հայկական հյուրասրության առանձնահատկությունները՝ զբոսաշրջիկների հայկական խոհանոցի բարիքների օգտագործումը նույնպես կարող է մեծ թվով զբոսաշրջիկներ ներգրավել:

- **Վերականգնված առևտրային կենտրոններ:** Առևտրային տարածքների վերականգնմանն ուղղված ներդրումը կնպաստի ներգրավված համայնքների եկամուտների մակարդակի աճին և կներկայացնի նրանց, որպես առանձին գրավչություն հարավային միջանցքի քաղաքների համար: Քաղաքի դինամիկ կենտրոնները կարող են կարևոր դեր կատարել զբոսաշրջիկներին բազմազան փաթեթ առաջարկելու համար, որտեղ բնության և հարուստ ժառանգության վրա հիմնվող զբոսաշրջային վայրերը գերակշռելու միտում կունենան, քանի որ զբոսաշրջիկները կարող են օգտվել բնության և քաղաքային կյանքի բարիքներից:

- **Բնության գրավչությունների ճանապարհային հասանելիության բարելավում** :Բնապահպանության տեսանկյունից նպատակահարմար վայրում անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր Հարավային միջանցքի որոշ հատվածներում (օրինակ՝ գեղատեսիլ

կիրճեր կամ լեռնային շրջաններ) հասանելիությունը բարելավելու ուղղությամբ

- **Ջրային գրավչությունների ստեղծում**: Հաշվի առնելով հայկական բնաշխարհում ծովերի բարիքների բացակայությունը, այնուամենայնիվ, ջրային ատրակցիոնների ստեղծումը կարող է նույնպես էական հետաքրքրություն առաջացնել զբոսաշրջիկների շրջանում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ջրային սպորտաձևերի/ զբաղմունքների վրա հիմնված գրավչությունները մեծ հետաքրքրություն են առաջացնում զբոսաշրջիկների շրջանում: Դրանց տեսականին բազմազան է՝ առևտրային նպատակներով կառուցված գրավչություններից (օրինակ՝ ջրաշխարհ՝ ջրային ատրակցիոններով և ջրավազաններով) մինչև բնական տեղանքով պայմանավորված գեղատեսիլ վայրերը: Հարավային միջանցքի պարագայում երկրորդ տարբերակն ավելի նպատակահարմար է և, անշուշտ, կբարձրացնի գրավչության մակարդակը ընտանեկան հանգստի շուկայում: Միջանցքի տարածքում կան մի քանի բնական ջրային ծածկույթներ, որոնք հարմար են նշված նպատակի համար: /Օրինակ Տոլորսի լիճ, Ծաքիի ջրվեժ/: Հարավային միջանցքով անցնում են մի քանի գետեր/վտակներ և կան լճեր, որոնք մի շարք ջրային մարզաձևեր նախատեսող զբոսաշրջային գործունեություն ծավալելու հնարավորություն են ստեղծում ներառյալ առագաստանավային սպորտը, կանոեներով թիավարությունը, վինդ-սերֆինգը, ձկնորսությունը և այլն: Գործունեության նշված տեսակների կազմակերպման համար կպահանջվի կառուցել սահմանափակ թվով համապատասխան ցամաքային բազային կետեր (կայաններ), որոնք կբարձրացնեն այդ զբոսաշրջային արդյունքի գրավչությունը և իրացվելիության մակարդակը: Օրինակ՝ ուսումնասիրության ընթացում որոշ մասնագետներ մեր ուշադրությունը հրավիրեցին Ծաքի գետի ափին ցանցերով ձկնորսության համար կայան ստեղծելու հնարավորության վրա:

- **Արկածային մրցարշավների կազմակերպում**: Հարավային միջանցքի որոշ շրջանների անհարթ տեղանքը հարմար է «արկածային մրցարշավների» տարբեր միջոցառումներ կազմակերպելու համար,

որոնց ժողովրդականությունն ու տարածվածությունը հետզհետե աճում է միջազգային շուկայում: Արկածային մրցարշավները սովորաբար նախատեսում են մասնակցություն արկածային գործունեության մի շարք տեսակներում, որոնց մաս է կազմում տվյալ շրջանի մի կետից մյուսը սահմանված ժամկետում հասնելու առաջադրանքը: Այդ միջոցառումների իրականացման համար գրավում են միջազգային ֆինանսավորում, որոնք լայնորեն լուսաբանվում են ԶԼՄ-ներում: Այս տեսանկյունից՝ նման միջոցառումները կարող են ծառայել նաև որպես Հարավային միջանցքի անվճար գովազդի միջոց: Սովորաբար արկածային մրցարշավները կապված չեն մեկ վայրի կամ ուղղության հետ. դրանք կազմակերպիչն անցկացնում են տարբեր վայրերում՝ ժամանակավոր հիմունքներով: Սրա պատճառը տեղանքի և մրցարշավի ձևաչափերի բազմազանությունն ապահովելու ձգտումն է: Եթե այդ տեսակի միջոցառումները կազմակերպվեն բացառապես Հարավային միջանցքում, ապա զբոսաշրջային այդ արդյունքը կծառայի որպես միջոց՝ Հարավային միջանցքը Հայաստանի զբոսաշրջային այլ միջանցքներից/ուղղություններից տարբերակելու համար:

- **Սպասարկման և տրանսպորտային ծառայություններ:** Զբոսաշրջության հատվածի արդյունավետ գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ են մի շարք ծառայություններ և ենթակառուցվածքներ, որոնք հաճախ մնում են աննկատ: Դրանք այդուամենայնիվ կենսական դեր են կատարում զբոսաշրջային ուղղության հաջող գործունեության ապահովման գործում:

Մակրոմակարդակում անհրաժեշտ է խթանել Հայաստան ուղևորափոխադրումների ծավալների աճը՝ ներառյալ բյուջետային ավիաընկերությունների կողմից սպասարկվող օդային ուղիները: Իսկ ինչ վերաբերում է Հարավային միջանցքին, ապա սպասարկման և տրանսպորտային ծառայությունների վերաբերյալ կոնկրետ առաջարկությունները ներկայացվում են ստորև:

1. Ճանապարհային ենթակառուցվածքների բարելավում

Հյուրընկալության ոլորտում աշխատող մասնագետների հետ զրույցների ընթացքում հնչեցին դիտողություններ Հարավային միջանցքի առկա ճանապահների ընդհանուր վիճակի առնչությամբ:

Չնայած կատարվել են որոշակի ներդրումներ ճանապահների որակի բարելավման համար, այդուհանդերձ, առկա է այդ աշխատանքները շարունակական հիմքերով իրականացնելու անհրաժեշտություն: Ճանապարհային ցանցն այն զարկերակն է, որի միջոցով ապահովվում է զբոսաշրջիկների հոսքը երկիր: Վատ որակի ճանապահային ենթակառուցվածքները սահմանափակում են զբոսաշրջության բիզնեսի և՛ ծավալը, և՛ աճի տեմպը: Ճանապարհային ցուցանշանների ցանցի բարելավում, ի լրումն ճանապարհների ծածկույթի բարելավմանն ուղղված ներդրումների անհրաժեշտության՝ ուսումնասիրության մեջ կարևորվում է նաև Հարավային միջանցքում ճանապահային ցուցանշանների համակարգերի բարելավման անհրաժեշտությունը: Առկա ցուցանշանների որակն անբավարար է և դժվարացնում է ինքնուրույն (առանց զբոսավարի կամ ուղեկցորդի) շրջագայող զբոսաշրջիկների ջանքերը գտնելու հիմնական տեսարժան վայրերը կամ անգամ գիշերակացի տեղ: Ճանապարհամերձ ենթակառուցվածքների (օրինակ՝ ռեստորաններ, լցակայաններ, զուգարաններ) որակը և հասանելիությունը ներկայումս խայտաբղետ է: Այսօր Հարավային միջանցք ուղևորվող զբոսաշրջիկների՝ այնտեղ հասնելու միակ տարբերակը ավտոմեքենան է. հետևաբար ճանապարհամերձ ենթակառուցվածքները ևս ազդում են այցելուների տպավորության վրա: Այդ ծառայությունները պետք է առաջարկվեն կանոնավոր միջակայքերով, լինեն հստակ ցուցանշված և համապատասխանեն սահմանված բավարար չափանիշներին՝ նպաստելով Հարավային միջանցք զբոսաշրջիկների այցելությունների ծավալի աճին: Գորիսի օդանավակայանի վերականգնում Հարավային միջանցքում կան մի քանի վայրէջքուղիներ, սակայն Գորիսի կիսալքված օդանավակայանը կարծես թե ունի շրջանը սպասարկելու ավելի մեծ հնարավորություն: Ներկայումս զբոսաշրջիկներին Հարավային միջանցք հասցնելու միակ իրատեսական տարբերակը Երևանից հարավ ձգվող ավտոմայրուղին է: Սակայն երբ շուկան և զբոսաշրջային արդյունքը զարգանան, մայրաքաղաքի և Գորիսի միջև օդային կապի վերականգնումը մեծ առավելություն կտա՝ զգալիորեն կրճատելով Հարավային միջանցքի «սիրտ» հասնելու ժամանակը:

Տրանսպորտային ենթակառուցվածքների առումով միջանցքը ներկայումս սպասարկում է միայն Երևանից դեպի հարավային շրջաններ տանող ճանապարհը, որն արևելքով տանում է դեպի Գորիս, հարավով՝ դեպի Կապան, ի վերջո դեպի Իրանի հետ սահմանամերձ Ագարակ գյուղը: Միջանցքով անցնող այս հիմնական ճանապարհի որակը առանձին հատվածներում տարբեր է: Որոշ հատվածներում իրականացվել են բարեկարգման աշխատանքներ, իսկ մյուս հատվածներում դեռևս դրանց կարիքը կա: Ընդհանուր առմամբ երկրորդային և այլ փոքր ճանապարհների ծածկույթի վիճակը անաբավարար է որը դժվարացնում և շատ ժամանակ է խլում գրավչության որոշ վայրերին հասնելու համար: Հարավային միջանցքի ճանապարհային ցանցի անգամ ամենաբանուկ հատվածներում տեղադրված ցուցանշանները սահմանափակ են և դժվարացնում են ինքնուրույն շրջագայող զբոսաշրջիկների՝ իրենց նշանակության վայր հասնելը:

Չնայած դեռևս պահպանվել են Երևանից հարավային շրջաններ տանող երկաթգծի հետքերը, սակայն գիծը չի շահագործվում և ավարտվում է Հարավային միջանցքի տարածք հանելուց առաջ: Ինչ վերաբերում է օդային ճանապարհով մարզ հասնելու հնարավորությանը, ապատարածքում առկա վայրէջքուղիներից և ոչ մեկը ներկայումս չի շահագործվում նույնիսկ կոմերցիոն թռիչքներ սպասարկելու նպատակով: Արդյունքում զբոսաշրջիկները կարող են հարավային միջանցք հասնել միայն ավտոմայրուղով: Հարկ է նշել սակայն, որ Գորիսի ներկայումս կիսալքված օդանավակայանը նախկինում օգտագործվում էր կոմերցիոն թռիչքներ իրականացնելու նպատակով: Դրա տեղակայվածությունն ու չափերը թույլ են տալիս ենթադրել, որ ներդրումների դեպքում օդանավակայանի կոմերցիոն գործունեությունը կարող է վերականգնվել:

Թեմատիկ երթուղիների ստեղծում. կան այցելուների տպավորությունը խորացնելու և այցելության միջին տևողությունը երկարացնելու տարբեր հնարավորություններ՝ Հարավային միջանցքում տարբեր գեղատեսիլ բնատեսարանների կամ թեմատիկ ավտոճանապարհային երթուղիների ստեղծման միջոցով:

Տարբերակները կարող են ներառել՝ հնագույն Մետաքսի ճանապարհի հետքով տանող ավտոճանապարհային երթուղին, ինչպես նաև պատմական վայրերին կամ խոհանոցին առնչվող երթուղիները (օրինակ՝ գինու արտադրության, օրգանական գյուղմթերքների արտադրությանը ծանոթանալու/համտեսելու երթուղիներ): Բուժկետերի ցանցի ընդլայնում. անշուշտ, զբոսաշրջային գործունեության որոշ տեսակներ ավելի վտանգավոր են, քան մյուսները և, մեծ մասամբ, այդպիսի «բարձր ռիսկային» գործունեությամբ զբաղվող զբոսաշրջիկները գնահատում են իրենց կարողություններն ու սահմանափակումները: Սակայն պատահարներն անխուսափելի են: Ուստի անհրաժեշտ է, որ Հարավային միջանցքի ռազմավարական ուղղություններում ստեղծվեն համապատասխան հագեցվածություն և անձնակազմ ունեցող մի քանի բուժկետեր՝ վնասվածք ստացած կամ հիվանդ զբոսաշրջիկին առաջնային բուժօգնություն ցուցաբերելու համար: Նեղ մասնագիտական բժշկական ծառայությունների տրամադրումը կարող է կազմակերպվել որոշակի վայրերում (օրինակ՝ Ջերմուկում), որոնք պետք է պատրաստ լինեն ընդունելու ձմեռային մարզաձևերին բնորոշ վնասվածքներով զբոսաշրջիկների համապատասխան քանակ՝ հաշվի առնելով քաղաքին մոտգտնվող առկա առաջարկվող դահուկային բազաների ենթակառուցվածքների ծավալը: Զբոսաշրջիկների տեղեկատվություն, քարտեզներ և ուղեցույցներ: Տվյալ ուղղությունից ստացած այցելուի տպավորությունը սովորաբար մեծանում է՝ նրա ավելի լավ տեղեկացված լինելու շնորհիվ: Այս առումով ներդրումներ են կատարվել տարբեր տեսակի քարտեզների, ուղեցույցների, տեղեկատվական վահանակների և տեղեկատվության այն միջոցների տեսականու ընդլայնման ուղղությամբ, որոնց այցելուները կարող են ծանոթանալ իրենց ուղևորությունից առաջ կամ դրա ընթացքում: Զբոսաշրջության հատվածում առաջիկա երկու տասնամյակի կտրվածքով սահմանվել են հարաբերականորեն հավակնոտ աճի թիրախներ և, այդ ցուցանիշներին հասնելու համար անհրաժեշտ է խրախուսել շբոսաշրջության ոլորտին առնչվող բարձրագույն և միջին մասնագիտական կրթությունը: Այդ կադրերի

որակավորումներին ներկայացվող պահանջները և համապատասխան քանակի ապահովման պատասխանատվությունը պետք է ստանձնեն ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածները: Այստեղ իրենց դերը պետք է ունենան դպրոցները, քոլեջները, վերապատրաստման կենտրոնները և բուհերը, սակայն մասնավոր հատվածը նույնպես պետք է գիտակցի աշխատավայրերում կազմակերպվող գործնական ուսուցման և փորձառնության ձեռքբերման անհրաժեշտությունը և դրանից ակնկալվող օգուտները:

Հարավային միջանցքը՝ որպես թեմատիկ երթուղի Հինգ կլաստերները Երևան-Գորիս գործող մայրուղու հետ կապելով՝ առաջարկում ենք այդ մայրուղին վերածել թեմատիկ երթուղու: Հայաստանի հարավային միջանցքը կարող է դառնալ մի ուղղություն, որտեղ կկազմակերպվեն երթուղիներ ինչպես բնության գեղատեսիլ տեսարժան վայրերով, այնպես էլ ճանապարհին տեղակայված գրավչություններով՝ ներկայացնելով դրանք որպես զբոսաշրջիկի փորձառնության անբաժանելի մաս: Հարավային միջանցքի լեռնային բնաշխարհին ամրապնդում է նրա՝ որպես թեմատիկ երթուղու նշանակությունը, քանի որ մայրուղու ողջ երկայնքով բացվում են գեղատեսիլ բնաշխարհի դիտարժան պատկերներ օրինակ, միջանցքի երկայնքով բավականաչափ ընդարձակ տարածքի հատկացումը որպես կանաչ գոտի, ապահովում է մայրուղու թեմատիկ բնույթի պահպանումը: Այդպիսով, հիմնական շեշտը դրվում է շրջանային մակարդակով զբոսաշրջության խթանման և զարգացման ծրագրի իրականացման համար ռազմավարությունների մշակման վրա՝ շուկայավարման, ներդրումների, հմտությունների և ենթակառուցվածքների զարգացման միջոցով: Զբոսաշրջության տարածքային զարգացումը խթանող գործընթացը դառնում է ավելի նպաստավոր տվյալ կլաստերի զբոսաշրջության բնագավառում գործող բոլոր շահագրգիռ կողմերի համագործակցության համար՝ ամրապնդելով կլաստերի մրցակցային առավելությունը և խթանելով տնտեսական զարգացումը: Այս մոտեցման արժեքն այն է, որ բավարարում է զբոսաշրջության ավելի մեծ թվով կարիքները և դրական ազդեցություն է թողնում շրջանի՝ որպես ամբողջության վրա: Քաջալերելով պետական և մասնավոր հատվածների շահագրգիռ

բոլոր կողմերի ակտիվ ներգրավվածությունը՝ միջանցքի կայուն զարգացման ընդհանուր նպատակը դառնում է իրագործելի: Կարևոր ֆիզիկական և տարածական տարրերը ներառում են.

- Զբոսաշրջային արդյունքների տեսականի՝ գիշերակացով և առանց գիշերակացի շրջանն այցելող զբոսաշրջիկների համար.
- Կացարանների և սպասարկման ծառայությունների տեսականի.
- Ծառայությունների հասանելիություն՝ ներառյալ հիվանդանոցներ, զբոսաշրջային օպերատորներ, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններ և բանկեր.
- Համալիր տրանսպորտային ցանց՝ ներառյալ ճանապարհների աստիճանակարգություն (հիերարխիա), միջազգային օդանավակայանի հարմարավետ հասանելիություն, հնարավոր երկաթուղային, ինչպես նաև հանրային տրանսպորտ.
- Բավարար ենթակառուցվածքային ծառայություններ, օրինակ՝ մաքուր ջուր, էլեկտրականություն, հեռահաղորդակցություն/կապ, կոմունալ ծառայություններ՝ ներառյալ մաքրություն և կեղտաջրերի հեռացում: Հարավային միջանցքը հպարտանում է բնության անաղարտ ընդարձակ տարածքներով, որոնք կարող են հանդես գալ որպես հինգ կլաստերները կապող օղակներ. ուստի առաջարկվում է պահպանել այդ գեղեցկությունը՝ որպես բնության պահպանական տարածքներ: Այդ պարագայում Հարավային միջանցքն առաջարկվում է դարձնել թեմատիկ երթուղի (որը միջազգայնորեն ճանաչված զբոսաշրջային գործիք է), որտեղ կբարելավվի ճանապահային ցուցանշանների համակարգը և կապահովվի միջազգային չափանիշներին համապատասխանող բարձրորակ ճանապարհամերձ ծառայությունների տրամադրումը:

Զբոսաշրջության տարածքային զարգացման խթանման ուղղություններից են.

- ներդրումների խթանումը մարզերում, որը սովորաբար, պայմանավորվում է զբոսաշրջության ռազմավարությամբ և տեսլականով: Զբոսաշրջության նպատակների արդյունավետ իրագործման համար, առաջին հերթին, անհրաժեշտ է իրականացնել

ֆիզիկական և ինստիտուցիոնալ առումով ռազմավարություն: Ֆիզիկական տեսանկյունից հրամայական անհրաժեշտություն է ապահովել հասանելիություն՝(ավտոճանապարհային, երկաթուղային կամ օդային ուղիներով), կացարաններ (օր.՝ հյուրանոցներ, հյուրատներ, վրանային ճամբարներ, B&B և այլն), ժամանցի վայրեր (օր.՝ բարեր, ռեստորաններ, գիշերային ակումբներ և այլն), ինչպես նաև սպասարկող ծառայություններ (օր.՝ ավտոմեքենայի վարձույթի գործակալություններ, լցակայաններ, տուր-օպերատորներ/ուղեկցորդներ և այլն): Ինստիտուցիոնալ մակարդակում կարևոր է ապահովել համապատասխանաբար հանրապետական, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների/կառույցների արդյունավետ գործունեությունը, որն անհրաժեշտ է ներդրումների հոսքերը խթանելու համար՝ նախատեսված զբոսաշրջային արդյունքը սպառողին արդյունավետ ձևով առաքելու, շարունակաբար փոփոխվող փորձություններին ու սպառողների նախընտրություններին արձագանքելու նպատակով: Վերջինիս բացահայտումը կօգնի հասկանալ, թե որտե՞ղ են ճեղքվածքները, ի՞նչ պետք է կազմավորել, ինչը զարգացնել կամ բարելավել, և ինչպես պետք է ապահովել ու հեշտացնել անհրաժեշտ ներդրումների կատարումը, որոնք կապահովեն այդ պահանջների իրագործումը և ամենակարևորը՝ կլուծեն տարածքային զարգացման անհամասնությունների խնդիրները:

Հաշվի առնելով բնակլիմայական պայմանները և պատմամշակութային արժեքների առկայությունը՝ կարելի է առանձնացնել նաև կենտրոնական միջանցքը որպես զբոսաշրջային արդյունքների առավել լայն տեսականի առաջարկելու ներուժ ունեցող կլաստերային ուղղություն: Վերջինս ներառում է պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող Գառնի-Գեղարդ համալիրը, Խորվիրապը, Էջմիածինը, բնակլիմայական հետաքրքիր պայաններ ունեցող Ծաղկաձորը և Արագած լեռան տարածքը: Այս զբոսաշրջային վայրերը բավականին մոտեն գտնվում մայրաքաղաք Երևանին, որն ավելի հայտնի է միջազգային զբոսաշրջային

շուկայում[126]: Ակնհայտ է, որ մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել Կենտրոնական միջանցքում գտնվող արդեն գործուն զբոսաշրջային կենտրոն հանդիսացող Ծաղկաձորը, որը հայտնի է ձմեռային սպորտաձևերով և առողջարանային զբոսաշրջությամբ տարվա գրեթե 4 եղանակին: Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում Արագածի լանջերին պահպանված հին մշակույթը, միջնադարյան ճարտարապետության ուշագրավ կառույցները՝ Ամբերդը, Բյուրականը և այլն: Ավելին, Արագածի կլիման փոխվում է ըստ բարձրության. լանջերին ամռանը չափավոր տաք է, ձմռանը՝ ցուրտ: Լեռան լանջերից բխում են հարյուրավոր սառնորակ աղբյուրներ: Զբոսաշրջիկների շրջանում հատկապես մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել Քարի, Ամբերդ, Լեսինգ և այլ լճերը: Այստեղ է գտնվում նաև Բյուրականի աստղադիտարանը, որը կարող է ճանաչողական, ուսումնական և կրթական զբոսաշրջության համար ռեսուրս հանդիսանալ: Էջմիածինը, Խոր վիրապվանքը, Գեղարդավանքը ինչպես նաև Գառնու հեթանոսական տաճարը կենտրոնական միջանցքում ընդգրկված են Երևան համայնքը, Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերը կարելի է այստեղ ձևավորել զբոսաշրջային կլաստեր, որը կնպաստի ռեսուրսների ադյունավետ օգտագործմանն ու պահպանմանը և հնարավորություն կստեղծի զբոսաշրջային արդյունքի առաջարկի բազմազանեցման շնորհիվ ներգրավելու տարբեր պահանջմունքներ ունեցող զբոսաշրջիկներ և նպաստելու տվյալ տարածքների զարգացմանը՝ Երևանի և նշված մարզերի միջև ապահովելով կայուն համագործակցություն: Հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան միջանցքներում են գտնվում պատմամշակութային և հզոր զբոսաշրջային ներուժ ունեցող ակտիվները:

[126] Հայաստանի զաբոսաշրջության հարավային միջանցք ռազմավարական նախագիծ, AECOM Լոնդոն, 28.02.2011, `էջ 15-35:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության շրջանակներում արված հետազոտությունների, վերլուծությունների և գնահատումների հիման վրա ձևակերպվել են հետևյալ եզրակացությունները.

1. Նկատի ունենալով զարգացած տնտեսությամբ երկրներում ազգային և տարածքային տնտեսության կառավարման միտումները, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ-ում տնտեսական հարաբերությունների համակարգում քաղաքական, սոցիալական, մշակութային գործոնների դերակատարության առանձնահատկությունները, կարելի է ձևակերպել հանրապետության տնտեսության և դրա մաս կազմող տարածքային տնտեսությունների կառավարման ժամանակակից հայեցակարգի հետևյալ հիմնադրույթները. տնտեսության հումանիզացիա և բնապահպանական ուղղվածություն; տնտեսության նորարարականություն, տնտեսության շուկայական և պետական կարգավորման մեխանիզմների համակցում, տնտեսական արդյունավետության և սոցիալական արդարության սկզբունքների համադրում, տնտեսության ռեգիոնալացում և կառավարման ժողովրդավարացում:

2. Զբոսաշրջությունը՝ որպես տնտեսական գործունեության տեսակ և որոշակի տարածքների յուրացման միջոց, վիթխարի նշանակություն է ձեռք բերել առանձին տարածաշրջանների և երկրների զարգացման հարցում: Այսօր միջազգային զբոսաշրջության տարածման աշխարագրությամբ ապացուցվում է, որ երկրագնդի ցանկացած անկյունում (ընդհուպ մինչև Հյուսիսային և Հարավային բևեռներ) հնարավոր է հայտնաբերել կամ ստեղծել յուրահատուկ զբոսաշրջային ռեսուրս՝ ծառայեցնելով այն զբոսաշրջային հոսքերի ներգրավման նպատակին:

3. Տնտեսական զարգացումը բնութագրող մասնակի ցուցանիշների վերլուծությունն ու համադրումը բավարար չի կարող համարվել տնտեսական զարգացման ընդհանուր մակարդակի գնահատման, միջմարզային համադրությունների, դասակարգումների իրականացման համար: Այդ նպատակով, առաջին

հերթին՝ անհրաժեշտ է ստանալ տարածքային տնտեսության զարգացման ընդհանրական գնահատական, համաթիվ, որը կընդգրկի տնտեսական զարգացումը պայմանավորող առավել էական ցուցանիշները և հաշվի կառնի նաև դրանց հարաբերական կարևորությունները: Այդ նպատակով մեր կողմից կառուցվել է ՀՀ մարզերում և Երևան քաղաքում տնտեսական զարգացման առանձին ուղղությունները բնութագրող 18 մասնակի ցուցանիշներից բաղկացած տնտեսական զարգացման համաթիվ:

4. Հարկ է նշել, որ եթե առկա է հանրապետական մակարդակով Հայաստանի ներգնա զբոսաշրջության պատկերին առնչվող վիճակագրական տվյալների բավականին համեստ քանակություն, ապա մարզային կամ շրջանային, տարածքային մակարդակով զբոսաշրջությանն առնչվող գործունեության տեսակների պահանջարկի կամ առաջարկի մասին տվյալներ գործնականում գոյություն չունեն:

5. Գործնականում աշխարհի բոլոր երկրներում գոյություն ունի տվյալ երկրի տնտեսության վրա զբոսաշրջության ազդեցությունը բնութագրող արժանահավատ վիճակագրական տվյալների անհրաժեշտություն, որը հնարավորություն կընձեռի մշակել երկարաժամկետ ռազմավարություն և իրականացնել տարածքային զարգացման հիմնախնդիրների լուծմանն ուղղված արդյունավետքաղաքականություն:

Հաշվի առնելով այս խնդիրը՝ առաջարկվում է ներդնել սատելիտային կամ, այլ կերպ ասած, օժանդակ հաշիվների հասկացությունը: Նշենք, որ զարգացած երկրներում արդեն իսկ սատելիտային հաշիվները ներդրված են բազմաթիվ ազգային վիճակագրական ծառայությունների և զբոսաշրջության հետ կապ ունեցող պրոֆեսիոնալ ինստիտուների կողմից, ինչպես նաև Միացյալ Ազգերի Կազմակերպության (UN) և Զբոսաշրջության միջազգային կազմակերպության (UNWTO) կողմից, որոնք մշակել և հրատարակել են սատելիտային հաշիվների ուղեցույցը;[127] Վերջինս հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմել ոլորտի

[127]Պապոյան Ս. Դ., «Զբոսաշրջության զարգացման ֆինանսական հիմնախնդիրները», ատենախոսություն Երևան 2012 էջ 104-109:

վերաբերյալ, քանի որ զբոսաշրջության սատելիտային հաշիվները ենթադրում են զբոսաշրջության ոլորտի՝ որպես տնտեսական ֆենոմենի հիմնարար ուսումնասիրում՝ դիտարկելով այն որպես այցելուների կողմից ապրանքների և ծառայությունների լրացուցիչ պահաջարկի աղբյուր:

6. Երևանի և ՀՀ մարզային տնտեսությունների մասնագիտացման մակարդակի հաշվարկման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ մարզերի մեծ մասում մասնագիտացման առաջնային ճյուղը շարունակում է մնալ գյուղատնտեսությունը, սակայն ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային ուղղություններից մեկը զբոսաշրջությունն է: ՀՀ մարզերն ունեն հանրապետության զբոսաշրջության կարևորագույն կենտրոններից մեկը դառնալու նախադրյալները, որոնք, սակայն, պատշաճ կերպով չեն օգտագործվում:

7. Մարզերում զբոսաշրջային նկարագրի ամբողջացման և ընդհանրացման նպատակով մեր կողմից իրականացվել է փորձագիտական հետազոտություն: Հետազոտությունը կատարվել է հարցաթերթիկային եղանակով՝ հարավային միջանցքի զբոսաշրջային ոլորտի հետ առնչություն ունեցող անձանց, մասնավորապես՝ հյուրանոցների և հյուրատների, ռեստորանների, զբոսաշրջային և սպասարկման օբյեկտների, հանրային կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ոլորտի խնդիրների վերաբերյալ գիտական հետազոտություններ իրականացրած անձանց շրջանում: Գնահատումը կատարվել է ըստ հետևյալ 6 գործոնային խմբի. շուկայական կոնյունկտուրա, ինստիտուցիոնալ շուկաներ, տրանսպորտային-աշխարհագրական գործոններ, աշխատանքային ռեսուրսներ, ներդրումներ, կազմակերպական գործոններ:

8. Զբոսաշրջության զարգացման ներուժի համալիր օգտագործման, ոլորտի կայուն զարգացման համար որպես քաղաքականության հենք պետք է դիտարկել մարզում զբոսաշրջության կլաստերների համակարգի ձևավորման և զարգացման ուղենիշային գաղափարը: Այս համատեքստում, մարզում զբոսաշրջության ոլորտի որակական զարգացման և ՀՀ, ինչպես նաև

տարածաշրջանային և միջազգային շուկաներում մարզի զբոսաշրջային ծառայությունների մրցունակության ապահովման համար առաջնահերթ նշանակություն է ստանում մարզում զբոսաշրջային կլաստերների համակարգի ձևավորումը և զարգացումը: Մարզում զբոսաշրջային կլաստերի ձևավորումը և զարգացումը ՀՀ տարածքային զարգացման քաղաքականության գերակայություններից մեկը պետք է համարել: Անհրաժեշտ է մշակել համապատասխան հայեցակարգ, ծրագիր, միջոցառումների համակարգ: Մարզում կարևոր նշանակություն ունի զբոսաշրջային կլաստերի ձևավորման և զարգացման գործընթացն ապահովող հանրային կառավարման մարմիններին վերապահվելիք գործառույթների շրջանակի հստակեցումը, կառավարման տարբեր մակարդակների իրավասություններից բխող պարտականությունների տարանջատումը և որոշակիացումը:

Այսպիսով մարզում զբոսաշրջային կլաստերի ձևավորման և զարգացման համար նպատակահարմար է ՀՀ հանրային կառավարման առանձին մակարդակներում իրականացնել համալիր միջոցառումներ, որոնց նկարագրությունն ու քննարկումն արվել է ատենախոսությունում: Ինչ վերաբերում է մարզային իշխանություններն, ապանպատակահարմար է.

- մշակել պետական-մասնավոր գործընկերության կենսագործման գործողությունների պլաններ՝ ներառյալ գործարարության, գիտակրթական կառուցվածքների ցանցի ստեղծում,
- իրականացնել մարզի զբոսաշրջային ընկերությունների և այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների մրցունակության վերլուծություն և այդ հիմքի վրա որոշել աճի այն կետերը, որոնք կարող են հիմք հանդիսանալ կլաստերների ստեղծման համար,
- մարզում կլաստերային նախաձեռնությունների իրագործման համար դիտարկել մարզային զարգացման գործակալության ստեղծման հնարավորությունը,

- ապահովել կլաստերային մոտեցման ներառումը մարզային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում և ռազմավարություններում,

- ապահովել մարզային գիտակրթական կառույցների և գործարար շրջանակների փոխգործակցությունը՝ ինովացիոն բնույթի նախագծերի իրագործման գործընթացում,

- նախապատրաստել արտաքին շուկաներում մարզի վարկանիշի և ծառայությունների առաջխաղացման մարքեթինգային ծրագրեր,

- գործարար և փորձագիտական շրջանակների հետ համատեղ մշակել մարզի զբոսաշրջության ոլորտի կարիքների համար մասնագետների ներգրավման, ուսուցման, վերապատրաստման, որակավորման բարձրացման ծրագրեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Իրավանորմատիվային ակտեր

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունվել է 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով:

ÐÐ ûñ»ÝùÁ §ÐÐ í³ñã³ï³ñ³Íù³ÛÇÝ µ³Å³ÝÙ³Ý Ù³ëÇÝ¦, Ðú-18, ÁÝ¹áõÝí»É ¿ 1995Ã. ÝáÛ»ÙµñÇ 7-ÇÝ:

1. ՀՀ նախագահի հրամանագիրը՝ՀՀ մարզերում պետական կառավարման մասին՝, ՆՀ-728, ընդունվել է 1997թ. մայիսի 6-ին:

2. ՀՀ նախագահի հրամանագիրը՝Երևան քաղաքում պետական կառավարման մասին՝, ՆՀ-727, ընդունվել է 1997թ. մայիսի 6-ին:

3. ՀՀ օրենքը՝Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին՝, ՀՕ-5-Ն, ընդունվել է 2008թ. դեկտեմբերի 26-ին:

4. ՀՀ կառավարության՝Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմ՝ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին՝ 19 մայիսի 2005թ-ի թիվ 633-Ն որոշում:

5. ՀՀ կառավարության 1992թ. սեպտեմբերի 4-ի N 462 որոշումը ՝Պետական ձեռնարկությունների ու կազմակերպություններին, ինչպես նաև հասարակական, կրոնական, կոոպերատիվ և ոչ պետական այլ ձեռնարկություններին ու կազմակերպություններին կից (առընթեր) կոոպերատիվների վերակազմավորման կարգը հաստատելու մասին՞:

6. ՀՀ կառավարության ՝Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին՞ 2008թ. հոկտեմբերի 30-ի 1207-Ն որոշում:

7. ՀՀ օրենքը ՝Սահմանամերձ տարածաշրջանների մասին՞, ՀՕ-170, ընդունվել է 2001թ. ապրիլի 3-ին:

8. ՀՀ օրենքը ՝ՀՀ սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիրը հաստատելու մասին՞, ՀՕ-356-Ն, ընդունվել է 2002թ. մայիսի 20-ին:

9. կառավարության որոշումը ՝ՀՀ սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի առաջնահերթ հիմնախնդիրների հայեցակարգային ծրագրի մասին՞, որոշում թիվ 246, ընդունվել է 1999թ. ապրիլի 21-ին:

10. ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն:

11. ՀՀ Տավուշի մարզի 2009-2011թթ. զարգացման ծրագիր, 224էջ:

12. ՀՀ արդարադատության նախարարի 2010թ. ապրիլի 30-ի N 66-Ն հրամանը ՝Առևտրային կազմակերպությունների գրանցման (ստեղծման) համար անհրաժեշտ փաստաթղթերի նմուշային ձևերը հաստատելու մասին՞:

Վիճակագրական տեղեկագրեր, հրապարակումներ

13. ՝Անասնագլխաքանակի համատարած հաշվառման հանրագումարները՞ ՀՀ ԱՎԾ 2003-2010թթ. հրապարակումները:

14. Գյուղատնտեսական մթերքի իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից, ՀՀ ԱՎԾ 2002, 2003, 2007, 2009, 2010թթ. հրապարակումները:

15. Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին, 2010թ. հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2010թ.- 10 էջ:

16. ՀՀ մարզերը թվերով, ՀՀ ԱՎԾ 2000-2009թթ. հրապարակումները:

17. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2004-2009թթ. հունվար-դեկտեմբերին, ԱՎԾ համապատասխան հրապարակումները:
Մենագրություններ, հոդվածներ
18. Ալեքսանյան Մ. Տարածքային կառավարումը Հայաստանի Հանրապետությունում. իրավաբան. գիտ. թեկն. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 1999, 21էջ:
19. Արզումանյան Ա. «Դիլիջանի տարածաշրջանի խնդիրները ներգնա զբոսաշրջային օպերատորի աչքերովե, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա, # 10-11 սեպտեմբեր-հոկտեմբեր 2009, էջ 87-88:Գևորգյան Ս. Գյուղատնտեսական կոոպերացիա, անցյալը և ներկան, Երևան, 2002:
20. Երանոսյան Տ. Կոոպերացիան որպես ագրոպարենային համակարգի և տնտեսաձևերի զարգացման հիմնական ուղղություններից մեկը, ՝Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա՝, #11 (88) հոկտեմբեր 2007, էջ84-86:
21. Թարվերդյան Ա. Գյուղատնտեսական արտադրության տարածքային կառավարման արդյունավետության բարելավման ուղղությունները (ՀՀ Վայոց Ձորի մարզի օրինակով), տ.գ.թ. գիտ. աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006, 136էջ:
22. Թումանյան Դ. «ՀՀ վարչատարածքային բաժանման օպտիմալացումը և տեղական ինքնակառավարման զարգացումը, Երեւան, 2003թ.:
23. Կիրակոսյան Ն., Օրդյան Հ. Տարածքային զարգացում և կառավարում, Երևան: ՝Պետական ծառայություն՝, 2005.- 171էջ:
24. Հանրային քաղաքականության վերլուծություն: Ուսումնական ձեռնարկ / Խմբ.՝ Յու.Մ.Սուվարյան, Ա.Շ.Հարությունյան, Երևան: Պետական ծառայություն, 2005, 319էջ:
25. Հարությունյան Ռ. Լոռու մարզի արդյունաբերության հեռանկարային զարգացման և տարածքային կազմակերպման տնտեսաաշխարհագրական հիմնահարցերը. աշխարհագր. գիտ. թեկն. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2005, 31էջ:
26. Հարությունյան Ա. Հայաստանի Հանրապետության մունիցիպալ (տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման) իրավունք, Երևան: ՝Հրազդան-1՝ ՍՊԸ, 1999, 203էջ:

27. ՀՀ-ում կոոպերացիայի զարգացմանը նվիրված գիտաժողովի արդյունքները, http://www.publiccouncil.am/news.php?id=29&l=2.

28. Ղազարյան, Է. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման կատարելագործման հայեցակարգային ուղղությունները, Երևան, Դար, 2004թ.:

29. Ղուլարյան Ա. Տարածքային զարգացման անհամամասնությունները ՀՀ մարզերում, ՝Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա՝, 2010,

30. Ղուլարյան Ա. Տարածքային տնտեսության մրցունակության և զարգացման ապահովումը կլաստերային մոտեցման կիրառմամբ, ՝Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա՝, 2012,

31. Ղուլարյան Ա. Տարածքային տնտեսությունների մասնագիտացումը ՀՀ-ում, Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, 2012

32. Ղուլարյան Ա. ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացումը պայմանավորող ցուցանիշների փոխկապվածության գնահատումը,

33. Մանուկյան Ս. Հայաստանում գյուղատնտեսության զարգացման առանձնահատկությունների շուրջ. ՝Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա՝, #7-8 (84-85) հուլիս - օգոստոս 2007. - էջ 113-116:Ա.Ա. Կարապետյան §Զբոսաշրջության տարածաշրջանների գրավչության և մրցունակության գնահատումը կայուն զարգացման սկզբունքների կիրառմամբ¦ ԵԿՏԱ, Երևան, էջ 9-13

34. Մելքոնյան Ա. Սպառողական կոոպերատիվների զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում (Ագրոգիտություն), թիվ 9-10, սեպտեմբեր-հոկտեմբեր, 2005թ., էջ 409:

35. Ոսկանյան Ա., Սարուխանյան Ռ., Կոոպերացիան որպես արտադրա-տնտեսական հարաբերությունների կատարելագործման միջոց // ՝Ագրոգիտություն՝, էիվ 5-6, մայիս-հունիս, 2007, էջ 228:

36. Պարոնյան Գ. ՀՀ արդյունաբերության տարածքային զարգացումը տնտեսական անվտանգության համակարգում (տ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր), Երևան 2009, 23էջ:

37. 38. Պետրոսյան Շ. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման աշխարհագրական գործոնների մասին, Երևան: Զանգակ 97, 2007, 24էջ:

38. 39. Պետրոսյան Շ. Հայաստանի հանրապետության տարածքային կառավարման աշխարհագրական հիմնախնդիրները. աշխ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան 2007, 34էջ:

39. Սիմոնյան Հ. Տարածքային կառավարման մարմինների իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում (իրավաբան. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր), Երևան, 2009, 30էջ:

40. Սուվարյան Յու.Մ., Չոբանյան Մ.Խ. Տնտեսության տարածքային կառավարում. մեթոդաբանությունը և հիմնախնդիրները. - Եր.: ԱՌՏ, 2007, 312էջ:

41. Սուվարյան Յու.Մ., Կոպյան Վ.Մ. Տնտեսության հանրային կառավարում. մեթոդաբանությունը և արդի հիմնախնդիրները, Եր., ԱՌՏ, 2003, 88էջ:

42. Սուվարյան Յու.Մ. Հանրային կառավարման տեսության ու պատմության ուրվագծեր, Երևան: ԱՌՏ, 2004, 64էջ:

43. Սուվարյան Յու.Մ., Չոբանյան Մ.Խ. ՀՀ տարածքային կառավարման համակարգի վերակառուցումը և դրա արդյունավետության բարձրացումը: ՝Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա՝, #2-3, 2005:Елизбарян Н. А.” Role of tourism in the economic development of RA”,Современная наука: Тенденции развития, Краснодар, 201 , стр 122-127

44. Էլիզբարյան Ն. Ա. «Զբոսաշրջային կլաստերի ազդեցությունը տարածքային տնտեսության մրցունակության վրա» Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան, Եղեգնաձորի մասնաճյուղ Եղեգնաձոր 2015թ.

45. Էլիզբարյան Ն. Ա «Զբոսաշրջային տարածքային զարգացման կառավարման համաշխարհային փորձը» Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում Երևան 2015թ.

46. Էլիզբարյան Ն. Ա «Զբոսաշրջության տնտեսական բովանդակությունը և կապը ներդրումների հետ» ԲԱՆԲԵՐ Երևան 2011թ էջ 112-119

47. Էլիզբարյան Ն. Ա «Զբոսաշրջային կլաստերների ազդեցությունը տարածքային տնտեսության մրցունակության վրա», Լրաբեր, ՀՊՃՀ, Հատոր 12, համար 3 ,2015թ. էջ 451-454

48. Էլիզբարյան Ն. Ա «Զբոսաշրջության ազդեցությունը տնտեսության, մշակույթի և բնապահպանության վրա» հատոր 8, համար 4,2011 էջ 643-646

49. Էլիզբարյան Ն. Ա «Հիմնական զբոսաշրջային կենտրոնների զրագացման հեռանկարները ՀՀ-ում», Լրաբեր, Հայաստանի ճարտարագիտական ակադեմիա,, Հատոր 11, համար 2,2014թ. էջ 231-234

50. Էլիզբարյան Ն.Ա. «Զբոսաշրջության տարածքային զարգացման անհամամասնությունները Երևանում և ՀՀ մարզերում», Լրաբեր, Հայաստանի ճարտարագիտական ակադեմիա, Հատոր 12, համար 1 ,2015թ. էջ 51-54

51. *Анимица Е.Г., Власова Н.Ю., Силин Я.П.* Городская политика: Теория, методология, практика / Науч. ред. А.И. Татаркин. Екатеринбург: ИЭ УрО РАН, 2004. 306 с.
52. Андреев А.В. Основы региональной экономики: учебное пособие / А.В. Андреев, Л.М. Борисова, Э.В. Плучевская. — М.: КНОРУС, 2007. — 336 с.
53. *Айвазян С.А.* Сравнительный анализ интегральных характеристик качества жизни населения субъектов РФ. - Препринт #WP/01/125. М.: ЦЭМИ РАН, 2001.
54. *Айвазян С.А.* Россия в межстраново анализе синтетических категорий качества жизни населения, http://www.hse.ru/journals/wrldross/vol01_4/Ivazian1.htm
55. *Айвазян С.А.* Интегральные индикаторы качества жизни населения: их построение и использование в социально-экономическом управлении и межрегиональных сопоставлениях. - Москва, ЦЭМИ РАН, 2000. - 117с.
56. Баранский Н.Н. Избранные труды. Научные принципы географии. М., 1980.
57. Баранов С.В., Скуфьина Т.П. Новые методики и результаты исследования межрегиональной дифференциации на основе метода главных компонент// Вестник МГТУ, том 11, N2, 2008. – С. 201-210.
58. Бутов В.И., Игнатьев В.Г. Основы региональной экономики.- М. Экономика, 2000.
59. Герасимов Б.И., Гурова Л.Г., Дробышева В.В., Золотухина В.М. Макроэкономическая региональная статистика: Учеб. пособие / Под ред. Б.И. Герасимова. Тамбов: Изд-во Тамб. гос. техн. ун-та, 2004.- 112 с.
60. Гончаров П.К. Социальное государство: сущность и принципы // Вестник Российского университета дружбы народов. - Сер.: Политология. - 2000. - № 2 - С. 46-59.
61. Горетов И. Н. Перспективы реализации кластерных инициатив в регионах // Региональная экономика: теория и практика. - 2009 .- № 12 .- С. 54-57.
62. Гутман Г., Мироедов А., Федин С. Экономика региона и управление/ Учебное пособие. Владимир, 2000. - 268 с.
63. *Делокаров К.Х.* Философия, экология и глобальные трансформации // Устойчивое развитие: актуальные проблемы и перспективы научных исследований: Сб. ст. М.: Экономика и информатика, 2000- С. 4–5.
64. Демченко С.К. Эволюция теорий экономического роста: монография /С.К. Демченко. Красн.гос.ун-т. - Красноярск, 2006. - 149с.
65. *Дергачев В.А.* Глобальная геоэкономика (трансформация мирового экономического пространства). Научная монография. - Одесса: ИПРЭЭИ НАНУ, 2003. - 238 с.
66. Дергачев В.А., Вардомский Л.Б. Регионовидение: учеб.. пособие для студентов вузов. – М.: ЮНИТИ-ДАНА, 2004. –463с.
67. Дорогов Н.И. Стратегические направления региональной политики. – Иваново: ИГТА, 2000. – 168с.

68. Жданова О. И. Кластер как инструмент промышленной политики региона // Региональная экономика: теория и практика. - 2008 .- № 9 .- С. 60-67.
69. Игнатов, В. Г. Регионоведение : учеб. пособие / В. Г. Игнатов, В. И. Бутов. Ростов-на-Дону: Издат.центр "МарТ", 1998. - 320 с.
70. Игнатов В.Г. Асимметрия социально-экономического развития Российской Федерации и основные направления ее ослабления // Вестник РГУ, 2009, том N2. – С. 132- 137.
71. Изард У. Методы регионального анализа: введение в науку в регионах. – М., 1966.
72. История экономических учений (современный этап): Учебник/Под общ. ред. А.Г. Худокормова. - М.: ИНФРА-М, 2002. - 733 с.
73. Капустина Л. М. К вопросу о понятии типологии региональных кластеров / Л. М. Капустина, И. Г. Меньшенина // Голиковские чтения : сб. науч. тр. 2008. № 3. С. 44.
74. Клисторин В.И. Качество экономического роста и региональное развитие // Регион: экономика и социология. – 2006. – N 3. – С. 30-41.
75. Колосовский Н.Н. Основы экономического районирования. М. 1958.
76. Лаврикова Ю. Г. Кластеры как рыночный институт пространственного развития экономики региона : автореф... д-ра экон. наук. Урал. гос. экон. ун-т. Екатеринбург, 2009. - 46 с.
77. Ланцов В.А., Бабкина Л.Н., Песецкая Е.В. Потенциал территории: экономические, социальные и экологические аспекты. – СПб.: УРСС, 2004. – 258с.
78. *Леонов И. В.* Современное социальное государство: сущность, признаки, проблемы формирования. - М.: Издательство: МГИМО, 2006 г. - 96с.
79. Малин А.С. Региональное управление: учеб. пособие. – М.: Изд. дом ГУ ВШЭ, 2006. – 267с.
80. Мишуров С.С., Щуков В.Н. Основы регионалистики.-Иваново, 2003.- 75с.
81. Мосейко В. О. Выявление региональных кластеров: методологические подходы // Региональная экономика: теория и практика. - 2008 .- № 7 .- С. 58-64.
82. Наролина, Т. С. Формирование и развитие 8. кластеров как механизм обеспечения конкурентоспособности экономики региона: автореф. дис. … канд. экон. наук. / Т. С. Наролина. Воронеж, 2007. С. 4.
83. Никитаева А.Ю. Система взаимодействия государства и бизнеса в региональной экономике: концептуальный подход и инструментарные состовляющие // Вестник РГУ, 2006, том 4, N3.- С. 140-145.
84. Новоселов А.Ц. Регион ка исходное понятие теории регионального воспроизводства // Регион: экономика и социология, 2006, N3. – С. 15-26.
85. Нуреев Р. Теория развития: кейнсианские модели становления рыночной экономики // Вопросы экономики. - 2000. – №- 4. - С.137-156.
86. Портер М. Конкуренция.: Пер. с англ..: – М.: Издательский дом «Вильямс», 2005. – 608 с.
87. Постникова Е.А, Шильцин Е.А. Новейшие тенденции регионального развития России: некоторые фрагменты // Регион: экономика и социология, 2009, N3. – С. 67-86.
88. Региональная экономика: организацонно-экономический механизм управления ресурсами развития региона / Под науч. ред. д-ра эконом. наук, проф. Б. И. Герасимова. Тамбов: Изд-во Тамб. гос. техн. ун-та, 2002. - 112 с.
89. Региональная экономика: Учебник / Под ред. В.И.Видяпина, М.В.Степанова. – М.; ИНФРА-М, 2002. – 686с.
90. Россейкина Е.Л. Региональная экономика и управление: Учебное пособие. Часть II, Воронеж, ВГУ, 2003. - С. 12.

91. Селиверстов В.Е. Мифы и рифы территориального развития и региональной политики России / Регион: экономика и социология, 2008, N2. – С. 194-224.
92. *Семёнов Ю.* Концепции зависимости, или зависимого развития. (Глава из книги «Философия истории. (Общая теория, основные проблемы, идеи и концепции от древности до наших дней)». — М.: «Современные тетради». 2003. — 776 с.).
93. Социальное государство: концепция и сущность. Антология. - М.: Изд-во “Огни”, 2004.- 128с.
94. Суспицын С.А. Концепт-модели стратегического прогнозирования и индикативного планирования регионального развития// Регион: экономика и социология, 2009, N1. – С. 40-63.
95. Ткач А.В. - Сельскохозяйственная кооперация: учебное пособие. 2-е изд.- М., Издательская торговая компания 'Дашков и К', 2003.- 304с.
96. Фетисов Г.Г., Орешин В.П. Региональная экономика и управление: Учебник. — М.:ИНФРА-М, 2006. — 416 с.
97. Швец И.Ю. Интеграция субьектов регионального рынка, как фактор роста эффектиовности туризма. Ученые записки Таврического национального университета им. В.И.Вернадского. Серия “Экономика”. Том 20(59). 2007г. N1. - С. 239-246.
98. Эволюция теории и практики «государства благосостояния» в 80-е гг.: Сб. обзоров. М.: ИНИОН АН СССР, 2000.- 247с.
99. Якимец В. Н. Механизмы взаимодействия некоммерческих организаций, государства и бизнес-сектора в регионах России: состояние, проблемы и перспективы. М.: Институт системного анализа РАН, 2000.
100. Ayres R.U., Button K., Nijkamp P. Global Aspects of the Environment, Edward Elgar, Cheltenham, 1999, UK. Vol. 1, 2.
101. Capello R., Nijkamp P. The theoretical and methodological toolbox of urban economics: from and towards where? // 43 th ERSA Congress Peripheries, Centres and Spatial Development in the New Europe University of Jyvaskyla (Finland). 2003. 27–30 August.
102. Chenery, H. B., Ed, Structural Change and Development Policy. Oxford University Press, New York and Oxford, 1979.
103. Costanza R., Perring C., Cleveland C.G. The Development of Ecological Economics. Edward Elgar, Cheltenham, 1997, UK.
104. Lewis W. A. The Theory of Economic Development. L., 1956.
105. Lucas R. On the Mecanics of Economic Development. Journal of Monetary Economics, 22, 1988.
106. OECD, Competitive Regional Clusters:National Policy Approaches, ISBN 978-92-64-02708-4, 2007. www.oecd.org/publications/Policybriefs
107. *Romer P.M*. Increasing Returns and Long Run Growth. Journal of Political Economy, 94, 1986, pp. 1002–37.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Աղյուսակ 1

Որակավորման 5-րդ կարգ ունեցող հյուրանոցներ

	5* Հյուրանոցներ				
	Հյուրանոց	01.01-01.06	01.05-01.09	01.09.-01.12.	միջին արժեք 01-12
Հայաստան	Ռադիսոն Բլյու Իմպերիալ փելես Մարիոթ Արմենիա	250 300 280	268 330 300	268 300 270	507
Վրաստան	Ռադիսոն Բլյու Իվերիա Մարիոթ Թբիլիսի	267 245	320 294	307 282	286
Ադրբեջան	Քրոուն հոթել Բաքու Կավկաս Փոինթ հոթել	281 261	337 313	323 300	394

Աղյուսակ 2

Որակավորման 4-րդ կարգ ունեցող հյուրանոցներ

	4* Հյուրանոցներ				
	Հյուրանոց	01.01-01.06	01.05-01.09	01.09 01.12.	միջին արժեք 01-12
Հայաստան	Անի Պլազա Մետրոպոլ Արմենիան Ռոյալ փալաս	165 146 152	167 147 152	149 121 150	181
Վրաստան	Քուրտիարդ Թբիլիսի Շերատոն Մետեխի Պալաս	346 419	398 502	350 481	488
Ադրբեջան	Գրանդ Եվրոպա Հայաթ Ռեջենսի Ռոյալ պարկ Հոթել	175 169 140	209 203 147	201 201 137	175

Աղյուսակ 3

Որակավորման 3-րդ կարգ ունեցող հյուրանոցներ

	3* Հյուրանոցներ				
	Հյուրանոց	01.01-01.06	01.05-01.09	01.09.-01.12.	միջին արժեք 01-12
Հայաստան	Ռեժինե Վալենսիա Հարսնաքար	100 199 153	103 199 191	85 188 153	135
Վրաստան	Լիանի Օլդ Մետեխի Ռիվեր սայդ	184 191 173	211 230 208	211 220 199	204
Ադրբեջան	Պրեմիեր հոթել Բալիոն Բուտագեստհաուզ	180 200 189	216 240 227	207 230 217	188

Հավելված 2

Ավիափոխադրումներ իրականացնող ընկերությունների կողմից առաջարկվող ավիատոմսերի արժեքը դեպի Հայաստան

Ավիաընկերության անվանում	Ավիատոմսի արժեքը 1 անձի համար ԱՄՆ դոլար/միջին արժեք/	Մեկնման երկրի անվանումը[128]	Ժամանման երկրի անվանում
Աէրոֆլոտ Ավստրական ավիաուղիներ Էյր Ֆրանս	865 705 644	ԵՄ	Հայաստան Վրաստան Ադրբեջան
Աէրոֆլոտ Բելավիա Ուկրաինական ավ.	350 400 280	ՌԴ	Հայաստան Վրաստան Ադրբեջան
Աէրոֆլոտ Քաթար էրվեյս Թուրքական ավիաուղիներ	1106 1080 1053	ԱՄՆ	Հայաստան Վրաստան Ադրբեջան

[128] Մեկնման երկրի ըստ ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների զգալի մաս են կազմում նշված երկրներից ժամանած զբոսաշրջիկները

Հավելված 3

ՀՀ մարզերի և Երևանի մանանգիտացումը ըստշինարարության ճյուղի

(2009-2014 թթ. կենտրոնացման միտումը)

	2009	2010	2011	2012	2013	2014
Երևան	1,18	1,17	1,21	1,36	1,33	1,27
Արագածոտն	1,49	0,78	1,53	0,55	0,86	0,40
Արարատ	0,45	0,78	0,43	0,19	0,13	0,26
Արմավիր	1,46	0,77	0,17	0,29	0,18	0,22
Գեղարքունիք	0,37	0,44	0,59	0,20	0,48	0,21
Լոռի	0,63	1,13	0,91	0,48	0,63	0,20
Կոտայք	0,60	0,41	0,33	0,55	0,52	0,35
Շիրակ	1,12	1,77	1,52	0,63	0,39	0,49
Սյունիք	0,87	0,67	0,56	0,68	0,56	0,58
Վայոց ձոր	1,14	0,84	0,84	0,78	0,56	0,84
Տավուշ	0,94	0,47	1,89	0,93	0,59	0,32

Հավելված 4

ՀՀ մարզերի և Երևանի գյուղատնտեսական մանանգիտացումը

(2009-2014թթ.)

	2009	**2010**	**2011**	**2012**	**2013**	**2014**
Երևան	0,03	0,02	0,02	0,02	0,02	0,01
Արագածոտն	2,20	2,68	2,56	3,44	3,43	3,96
Արարատ	2,04	2,56	2,30	2,60	2,80	3,00
Արմավիր	1,72	2,38	2,61	2,89	3,41	3,54
Գեղարքունիք	2,23	2,96	3,13	3,29	3,91	4,74
Լոռի	1,65	1,90	2,09	2,25	2,21	2,84
Կոտայք	0,80	1,02	1,21	1,51	1,70	1,95
Շիրակ	1,66	1,82	1,97	2,61	3,10	3,01
Սյունիք	1,62	2,07	1,96	1,48	1,45	1,86
Վայոց ձոր	1,98	2,76	3,00	3,17	3,45	3,39
Տավուշ	1,78	2,19	2,38	2,74	3,32	3,67

Հավելված 5

Զբոսաշրջային տարածաշրջանի գրավչության ու մրցունակության չափանիշների Տաթևի արդյունքները/[129]

[129] Աղյուսակը կազմվել է մեր կողմից ինտերակտիվ հարցումների արդյունքում ;

	Չափանիշ	Կարևորություն	1-10 բալային սանդղակ
1	Պատմամշակութային հուշարձանների առկայությունը, նշանակությունը և պահպանությունը	5	8
2	Շրջակա միջավայրի աղտոտվածության աստիճանը	5	6
3	Մատուցվող ծառայությունների որակը	5	4
4	Զբոսաշրջային դեստինացիայում որակավորված մասնագետների առկայությունը/բացակայությունը	5	1
5	Համայնքի բնակիչների հյուրընկալությունը	5	6
6	Այլ ծառայություններ /հյուրանոցներ, ինֆորմացիոն կենտրոններ, ինտերնետ, բանկային ծառայություններ/	4	6
7	Թանգարանների առկայությունը, նշանակությունը և գրավչությունը	4	1
8	Տոների, միջոցառումների անցկացումը, դրանց նշանակությունն ու գրավչությունը	4	3
9	Համայնքի զբաղվածությունը և սոցիալ – տնտեսական մակարդակը	4	6
10	Կլիմայի բարենպաստությունը	4	5
11	Դեստինացիայի հասանելիությունը	4	7
12	Օդի քիմիական բիոլոգիական մաքրությունը	4	9
13	Խմելու ջրի և առողջարարական աղբյուրների մաքրությունը	4	7
14	Բնական ռեսուրսների գերսպառման ռիսկը	4	8
15	Զբոսաշրջիկների հոսքի մակարդակը (օրինակ 1 տարվա կտրվածքով)	4	8
16	Զբոսաշրջությունից եկած եկամուտների ծավալը	3	3
17	Ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը	3	8
18	Ջրային ռեսուրսներ /գետեր, լճեր և այլն/	3	6
	ԸՆԴԱՄԵՆԸ	**74**	